

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՍԵՄԻՐՁՅԱՆ-ԲԵՔՄԵՁՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ
ԳՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

2015

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Հ)

Վ 301

Տպագրության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի կողմից

Խմբագիր՝ բանասիր. գիտութ. թեկնածու, դոցենտ
Խաչատուր Վարդանյան

Վ 301 Վարդանյան Նվ., Սեմիրջյան-Բեքմեզյան Ալ., Վարդանյան Նար. Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները /Նվ. Վարդանյան, Ալ. Սեմիրջյան-Բեքմեզյան, Նար. Վարդանյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2015.- 288+2 էջ գունավոր ներդիր:

Ներկա կոլեկտիվ մենագրության մեջ քննության են առնված հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները: Գրառված ժողովրդական հեքիաթի նոր տարբերակների ուսումնասիրմամբ գնահատվել են հեքիաթասացության և հայ բանավոր հեքիաթի ժամանակակից յուրահատկությունները, քննվել են գրական հեքիաթի ժանրային դրսևորումներն ու լեզվաոճական առանձնահատկությունները՝ ուրվագծելով արդի հայ հեքիաթի զարգացման հիմնական միտումները: Կոլեկտիվ մենագրությունը նախատեսված է բանագետ-բանասերների, ազգագրագետների, մասնագիտական ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև հետաքրքրված անձանց համար:

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-1-0249-8

© ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2015

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ֆինանսավորմամբ՝ «13YR-6B0050» ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА и Программы поддержки молодых ученых под патронажем Президента Республики Армения в рамках научного проекта № «13YR-6B0050».

This work was supported by the RA MES State Committee of Science and Young Scientists Support program under the patronage of the President of the Republic of Armenia, in the frames of the research project № «13YR-6B0050».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ. *Խաչատրուր Վարդանյան*.....6

ԳԼՈՒԽ I.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ11

Ա. Մերոյա հայ հեքիաթասացները18

Բ. Հեքիաթի տեսակները մերոյա բանասացների հեքիաթացանկերում26

Գ. Ավանդական բանաձևերը հեքիաթի մերոյա գրանցումներում45

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ

ՀԵՔԻԱԹՆԵՐԸ. ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՄԱՏՆԵՐԻՑ ՄԻՆՁԵՎ

ԱՐԴԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ55

ԳՐԱԿԱՆ ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ՀԵՔԻԱԹԻ

ԱՐԴԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ (*Նվարդ Վարդանյան*)74

ԳԼՈՒԽ II

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ. ԺԱՆՐԻ ԵՎ

ՊՈԵՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐ

(*Ալվարդ Սեմիրջյան-Բեքմեզյան*).....91

ԳԼՈՒԽ III

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ

ԼԵՂՎԱՌՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ106

Ա. Պատրաստի խոսքային միավորների

կիրառությունները. ավանդական բանաձևեր,

առած-ասացվածքներ110

Բ. Քերականական և բառապաշարային մի քանի առանձնահատկություններ.....	122
Գ. Կերպարակերտման լեզվաոճական որոշ առանձնահատկություններ (Նարինե Վարդանյան).....	130

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Ժողովրդական հեքիաթների ժամանակակից գրառումներ (ԺՀԺԳ)</i>	<i>137</i>
<i>«Հեքիաթ-հեքիաթ պապս». ժամանակակից գրառումներ (ՀՀՊԺԳ).....</i>	<i>145</i>
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	146

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա ուսումնասիրության հեղինակներ բանագետ, բ.գ.թ. Նվարդ Վարդանյանը, գրականագետ, բ.գ.թ., դոցենտ Ալվարդ Սեմիրջյան-Բեքմեզյանն ու լեզվաբան, բ.գ.թ. Նարինե Վարդանյանը, յուրաքանչյուրն իր մասնագիտական հետաքրքրությունների փիրոսթում, անդրադարձել են հեքիաթի արդի դրսևորումներին, ժողովրդական հեքիաթների նոր տարբերակների գրառմամբ, բանահյուսական և գրական հեքիաթների վերլուծությամբ հեքիաթի արդի առանձնահատկություններն ու զարգացման միտումները բացահայտելու ուշագրավ մի փորձ են կատարել: Հայագետ ուսումնասիրողների այս շրջանակով էլ պայմանավորվել է մենագրության կառուցվածքը՝ արդի հեքիաթը ներկայացնել երեք տարբեր՝ բանագիտական, գրականագիտական և լեզվաճակատային քննությամբ:

Նվարդ Վարդանյանը քննության է ենթարկել հայ ժողովրդական հեքիաթների արդի կենցաղավարման առանձնահատկությունները: Ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստանյութ են ծառայել վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառված հարյուր քսանհինգի հասնող ժողովրդական հեքիաթները, որոնց քննությունը ի հայտ է բերել բանահյուսական հեքիաթների արդի կենցաղավարման, ժամանակակից հեքիաթասացների, մեր օրերում դեռևս պատմվող և սիրված հեքիաթների տեսակների ու տիպերի հետ կապված առանձնահատկություններ: Ուսումնասիրողը արձանագրում է, որ մեր օրերում, երբ ողջ աշխարհում ավանդական բանասացությունն

աստիճանաբար մարում է (որոշ երկրներում այն արդեն լռել է), հայ հեքիաթասացները, թեև սակավ, բայց դեռևս շարունակում են պատմել բանավոր ավանդամբ իրենց փոխանցված հեքիաթները: Որպես ժողովրդական հեքիաթների ժամանակակից առանձնահատկություններ քննվում են հրաշապատում հեքիաթների մասնակի քայքայումը, փոխակերպումն իրապատումի, կենդանական հեքիաթների՝ գրեթե իսպառ անհետացումը, իրապատում դիպաշարերի գերակայությունն ու համեմատաբար հարուստ ու լիարժեք պահպանված սյուժեները, հին կաղապարների հիմքով նոր դիպաշարերի կազմավորումը, հեքիաթի ավանդական բանաձևերի կիրառման նվազումը կամ դրանց փոխակերպումը նոր տարբերակներով:

Այս առաջին ուսումնասիրության ծիրում են հայտնվում նաև ժողովրդական հեքիաթների ժամանակակից գրառումների հետ կապված այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ գրականության՝ բանահյուսական արդի նյութի վրա ունեցող վճռական ներգործության հարցը և դրանից բխող դժվարությունները՝ կապված ավանդական բանահավաքչության սկզբունքներին:

Ն.Վարդանյանի կողմից առանձին քննության առարկա է դառնում նաև այն խնդիրը, թե որքանով են հեքիաթների ժամանակակից գրառումները հարազատ մնացել ազգային ակունքներին և ավանդական ընկալումներին: Հարցի պարզաբանումը կատարվում է ներկա գրառումներում տարբերակների քանակով աչքի ընկնող՝ ճակատագրի անխուսափելիության դիպաշարերի օրինակով: Հեքիաթի հնագույն ակունքները, որ սերում են Տիր աստծոն առնչվող վաղ դիցաբանական պատկերացումներից, ի հայտ են բերում հարազատ ընդհան-

րություններ դիպաշարի՝ նախորդ դարուկեսի և մեր փաստամյակի գրառումներում՝ ի ցույց դնելով մերօրյա հեքիաթների կայուն ավանդականությունը:

Արդի գրական հեքիաթի, նրա ժանրի և պոետիկայի խնդիրներն է քննության ենթարկում Ալվարո Սեմիրջյան-Բեքմեզյանն ուսումնասիրության երկրորդ գլխում: Դիտարկելով հեփանկախության շրջանի ժամանակակից հայ հեղինակներ Էդվարդ Միլիփոնյանի, Լևոն Խեչոյանի, Երազիկ Գրիգորյանի, Արփի Ոսկանյանի, Արմինե Աբրահամյանի (Արմինե Անդա), Էդուարդ Ավագյանի, Վահագն Գրիգորյանի, Թադևոս Տոնոյանի, Անուշ Վարդանյանի, Ղուկաս Սիրունյանի, Երվանդ Պետրոսյանի, Սամսոն Սրեփանյանի սրտեղագործությունները՝ նա ցուցադրում է գրական հեղինակային հեքիաթի մի շարք ժամանակակից յուրահատկություններ: Հեղինակը մասնավորապես փորձում է քննել հեքիաթի ժանրանվանումները, որոնք արդի գրական հեքիաթի դեպքում բավական բազմազան են՝ հեքիաթ-վեպ, հեքիաթ-պատմվածք, հեքիաթ-պոեմ և այլն, և դրանցում ցույց տալ բանահյուսական հեքիաթի ավանդական սյուժեների արժարժման կերպերը, հեղինակների կողմից ավանդական նյութի մշակման, վերարժևորման կամ քայքայման հիմնական միտումները:

Որպես ժողովրդական հեքիաթի մշակման օրինակ Ալ. Սեմիրջյան-Բեքմեզյանն առանձնացնում է Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն՝ քննելով ինչպես դրանց՝ զուտ խեչոյանական՝ էզոպերիկական ժանրանվանումը, այնպես էլ անդրադառնալով պոետիկական յուրահատկություններին:

Քննադրերի լեզվաոճական յուրահատկությունների քննութ-
յամբ բանահյուսական և արդի գրական հեքիաթների ուշա-
գրավ առանձնահատկություններ է բացահայտում ուսումնա-
սիրության երրորդ գլխի հեղինակ Նարինե Վարդանյանը:
Ուսումնասիրողը ժողովրդական և արդի գրական հեքիաթնե-
րում ավանդական բանաձևերի և պատրաստի խոսքային
միավորների, բառապաշարային շերտերի, հեղինակի և հե-
րոսի խոսքի, հեքիաթի տեսակին ներհատուկ քերականա-
կան մի շարք դրսևորումների զուգահեռ դիտարկմամբ բա-
ցահայտում է էական առնաձնահատկություններ՝ կապված
մերօրյա գրական հեքիաթի արտահայտչաձևերին: Քննութ-
յունը ցույց է տալիս, որ գրական հեքիաթի լեզուն, տարբեր-
վելով հանդերձ բանահյուսականից, ուշագրավ յուրահատ-
կություններ է հանդես բերում իր տարատեսակներում: Այս-
պես, եթե բանահյուսական հեքիաթներ մշակող կամ փո-
խադրող հեղինակները փորձում են պահպանել լեզվի ժո-
ղովրդականությունը՝ կիրառելով բարբառային բառեր և ժո-
ղովրդախոսակցական խոսքին հատուկ քերականական
ձևեր, ապա հեղինակային հեքիաթի դեպքում լեզուն հիմնա-
կանում նորմավորված հայերենն է, որտեղ ժողովրդախոսակ-
ցական տարրերը լայն կիրառություն չունեն, առավել սակավ
են նաև բանահյուսական կաղապարները: Քննությունը ուշա-
գրավ յուրահատկություններ է բացահայտում նաև հեղինակա-
յին հեքիաթի կերպարակերպման հարցում, որը ժամանակա-
կից գրողները իրականացնում են հերոսների անվանումների,
հերոսի՝ կոլորիտային ժողովրդախոսակցական խոսքի, բառա-
պաշարային հարուստ շերտերի կիրառության միջոցով:

Ուսումնասիրությունն իր ամբողջության մեջ ներդաշնակորեն և հարցերի՝ հնարավոր համակողմանիությամբ շարադրված մենագրություն է, որ ներկայացնում է հայ հեքիաթի ներկան՝ իր առանցքային հարցադրումներով: Մենագրության ուսումնասիրողներից յուրաքանչյուրն իր հետազոտության տիրույթում փաստում է, որ հեքիաթը շարունակում է մնալ կենսունակ տեսակ մեր օրերում ևս, որի բանավոր՝ ժողովրդական տեսակը թեև անհետացման վտանգի է ենթակա, սակայն գրական տեսակը՝ իր ամենատարբեր դրսևորումներով, շարունակում է զարգանալ՝ ձեռք բերելով ժանրային նորանոր դրսևորումներ:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Բանասացությունը ժամանակակից աշխարհում: Մեր օրերում աշխարհը փոփոխվում է սրընթաց արագությամբ. տեխնիկական նորարարություններ, որոնք օր օրի ներգործում են հասարակական ավանդական հարաբերությունների վրա, համացանց, որը մշակույթների համահարթեցման է հանգեցնում, մարդկային առօրյա պարզ շփումը տեղափոխում վիրտուալ ոլորտ, ապրուստի հայթայթման և աշխատանքային աճի խելահեղ վազք... Ի՞նչ դեր ու տեղ ունի այս ամենի մեջ ավանդական այն գեղեցիկ սովորույթը, որն անվանում ենք բանասացություն, արդյո՞ք մարդիկ շարունակում են պատմել հնամենի, պապերից ժառանգված բանավոր պատումները, որքանո՞վ է այսօր հեքիաթը՝ որպես վիպական բանահյուսության՝ մինչ օրս սիրված ու մարդուց անբաժան տեսակ, հնչում ժողովրդական բանասացների շուրթերից:

Դաշտային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավանդական բանասացությունը նոր ժամանակաշրջանում աստիճանաբար զիջում է իր դիրքերը, և դա զգալի է ոչ միայն Հայաստանում: Բանասացության դերի նվազումը մարդկանց կյանքում, որ 21-րդ դարում առավել քան ակնհայտ է դարձել, տեսանելի էր դեռևս 20-րդ դարում. այդ մասին էին վկայում հայ և այլազգի բանահավաքների հետազոտությունները: Էստոնացի բանագետ Ռիստո Ջարվը, որը բանահավաքչական արշավախմբի հետ 1998թ. Էստոնիայի

Օրավա գյուղում գրանցել է 15 ավանդական հեքիաթ, 20-րդ դարի վերջին տարիների համար դա արդեն բավական մեծ թիվ է համարում (Risto Järv 2000: 38): «Մենք գիտենք, թե ինչպիսի կյանքով է ապրում հեքիաթը ժամանակակից եվրոպական մշակույթում: Սովորաբար մարդիկ կարողանում են բանավոր վերապատմել Գրիմ Եղբայրների և Շարլ Պերրոյի մոտ 20 հեքիաթ (փոքր ազգերի պարագայում ավելանում են նաև տեղական որոշ հայտնի գրողներ)», - նշում է բանագետը (Risto Järv 2000: 39):

Հարցի վերաբերյալ գիտական համապարփակ պատկերացում է տալիս «Ավանդական բանասացությունն այսօր. միջազգային նյութերի ժողովածու» (Նյու-Յորք, 1999, երկրորդ հրատ. 2013) հաստատվոր հրատարակությունը, որի կազմողը՝ բանագետ և բանասաց Մարգարետ Ռիդ Մաքդոնալդը, մեկ ծավալուն ժողովածուում հավաքել է աշխարհի տարբեր երկրների բանագետների՝ բանասացության արդի խնդիրներին նվիրված հոդվածները՝ դրանով նպատակ ունենալով գտնել մեր օրերում բոլոր բանագետներին մտատանջող հարցի պատասխանը՝ արդյո՞ք ավանդական բանասացությունը դեռ կենդանի է, թե՞ մահանում է կամ արդեն մահացել է:

Հոդվածագիրներից ոմանք պնդում են, որ բանասացությունը դեռևս լիովին չի մահացել: Այսպես, օրինակ, հնդկական բանահյուսությունն ուսումնասիրող Լի-Էլեն Մերվինը ուրախությամբ նշում է, որ հեքիաթները դեռ կենդանի են երեխաների համար՝ Հնդկաստանի միջին դասի ընտանիքների փակ դռների հետևում (Lee-Ellen Marvin 2013: 102-105): Ճապոնիայի օրինակը ևս լավատեսական է. «Մեր օրերում, երբ ռոբոտները պատրաստում են մեքենաներ, և համակարգչա-

յին խաղերը ծաղկում են ապրում, ավանդական բանասաց-ների խոսքերը դեռևս լսելի են. նրանց խոսքերը հասնում են այն մարդկանց, որոնք ուզում են լսել դրանք», - նշում է հետազոտողը (Cathy Spagnoli 2013: 121):

Հոդվածների մի մասում էլ ուսումնասիրողները փաստում են, թե բանասացությունը աստիճանաբար անհետանում է, և մարդիկ այլևս չեն կարողանում հիշել մանուկ հասակում տատերից ու պապերից լսած հեքիաթները: Ինչպես արձանագրում է խմբագրական առաջաբանում Մարգարետ Ռիդ Մաքդոնալդը, ընտանիքներում և փոքր համայնքներում բանասացությունը աստիճանաբար նվազում է. «...գյուղի բանասացը, որն այնքան ցանկալի է մեր պատումի առասպելաբանության մեջ, հնարավոր է՝ անհետացել է գյուղի կյանքից» (Traditional Storytelling Today 2013: XIII):

Ավանդական բանասացության նվազումը մտահոգում է աշխարհի տարբեր ծայրերում ապրող բանագետներին, և շատ երկրներում փորձ է արվում վերածնունդ տալ ժողովրդական այս գեղեցիկ ավանդությանը: Մի շարք երկրներում (Գերմանիա, Անգլիա, ԱՄՆ) ի հայտ են գալիս վերածնված բանասացներ, որոնք իրենց առջև խնդիր են դնում հոգ տանել ժողովրդական հեքիաթների մասին (տե՛ս, օրինակ, Sabine Wienker-Piepho, 2013: 239-246): Միացյալ Նահանգներում Ազգային բանասացության ասոցիացիայի 5000 անդամներ փորձում են կենդանի պահել բանասացությունը դպրոցներում, պուրակներում, հիվանդանոցներում և այլուր (Traditional Storytelling Today 2013: XIII), կան շատ թափառող բանասացներ, որոնք գումար են վաստակում՝ շրջելով և պատմություններ պատմելով: Տարբեր ուսումնական հաստա-

տություններում անցկացվում են բանասացության դասընթացներ, տպագրվում են գրքեր, որոնցում ներկայացվում են բանասացության հիմնական օրինաչափությունները, կազմակերպվում են բանասացության փառատոներ (տե՛ս, օրինակ, Andersen, Lene 2011: 13): Նման միտում կա նաև Հայաստանում: Մասնավորապես Հովհաննես Թումանյանի թանգարանում կազմակերպվող ամենամյա հեքիաթասացության փառատոները, որոնք կրում են «Երկնքից երեք խնձոր ընկավ» խորագիրը, այս նպատակն են հետապնդում:

Բանասացությունը վերածնունդ տալու այսպիսի ջանքերը, իհարկե, ողջունելի են, սակայն դրանք բանահյուսությունը արհեստական միջավայրի մեջ են դնում: Բանասացության բնականոն զարգացումը նրա՝ որպես ընտանեկան հոգևոր ժառանգության, սերնդեսերունդ բանավոր ավանդումն է, մի գործընթաց, որը, փաստեն, չի կայանում արհեստական բանասացության պարագայում:

Գիտնականներից ոմանք, հաշտվելով ավանդական բանասացության անհետացման փաստի հետ, փորձում են ուրվագծել նոր բանահյուսության զարգացման միտումները: Նման հետազոտություններում խոսվում է այն մասին, որ նոր բանահյուսությունն առավել լեգենդային բնույթ ունի, դրանում անհետանում են ավանդական ծավալուն պատումները, գերակշռում են պատմական կամ անձնական պատմությունները, քաղաքական մեկնաբանությունները և նմանատիպ բանահյուսական դրսևորումները (Birch, Carol and Melissa Heckler 1996): Նոտր-Դամի համալսարանի պրոֆեսոր Դիարմուիդ Օ Գյոլլային արդի բանահյուսությունը համարում է մի հիբրիդ, որը, թեև չի կարող բավարարել ավանդական բանահյուսութ-

յամբ հետաքրքրվողներին, սակայն մի նոր որակ է, որը կարող է հետաքրքրություն ներկայացնել: «Ի վերջո,- նշում է բանագետը,- ավանդույթը միշտ ապրում է և մեռնում, և ծնվում է նորը» (Interview with Diarmuid Ó Giolláin 2005):

Կենդանի շփման նվազումը, հատկապես երիտասարդության շրջանում նման շփման տեղափոխումը վիրտուալ տարածություն այսօր ժողովրդական խոսքարվեստի կենցաղավարման մի նոր ոլորտ են ձևավորել: Մերօրյա բանագետներից շատերի ուսումնասիրություններում արդեն իսկ լայնորեն քննարկման առարկա է դառնում համացանցային բանահյուսությունը՝ իր որակական նոր հատկանիշներով (տե՛ս, օրինակ, Интернет и фольклор: 2009):

Ինչպիսի՞ն է ավանդական բանասացությունը Հայաստանում, և ի՞նչ տեղ է զբաղեցնում հեքիաթը մերօրյա բանասացների երկացանկերում՝ փորձենք պարզել հետագա շարադրանքում:

Հեքիաթասացությունը Հայաստանում: Հայաստանյան իրականության մեջ ժողովրդական հեքիաթը դեռևս բոլորովին մոռացության տրված ժանր չէ: Որքան էլ պնդենք, թե մեր օրերում բանասացությունը աստիճանաբար մարում է, և որ ավելի ու ավելի սակավ կարելի է հանդիպել վարպետ բանասացների, այնուամենայնիվ ժողովուրդը դեռ շարունակում է պատմել դարավոր, պապերից ժառանգած հեքիաթները: Անշուշտ, բանասացությունը մեր օրերում զգալիորեն տարբերվում է ավանդականից. եթե հնում վարպետ բանասացներին լսելու էր հավաքվում գյուղացիների հսկայական բազմություն, և բանասացությունը վեր էր ածվում ավանդական հայ մարդու ամենասիրելի ժամանցներից մեկի, ապա այսօր

կարող ենք վստահաբար արձանագրել, որ հեքիաթասացությունը այլևս այդպիսի զանգվածային բնույթ չի կրում և հասարակության կյանքում այդքան մեծ դեր չի կատարում: Նորագույն տեխնիկայով պայմանավորված՝ բազմազան ու մատչելի ժամանցի այլընտրանքային միջոցներն այսօր դուրս են մղել բանասացությունը՝ որպես ժամանցի համընդհանուր ավանդական տեսակ: Այսօր մարդիկ ավանդական հեքիաթասացության մասին պատմում են որպես հեռավոր հիշողության, որ բնորոշ է «հին ժամանակներին» և «առաջվա մարդկանց»: Հեքիաթասացության մասին հուշերն այսօր նույնիսկ մուտք են գործում հրաշապատում հեքիաթի հյուսվածքներ՝ ներկայացվելով որպես **հեքիաթային ժամանակների իրականություն**: Բնորոշ է մեր ժամանակներում գրառված մի հրաշապատում հեքիաթ, որտեղ ավանդական հեքիաթասացության նկարագիրը ի հայտ է գալիս վիշապամարտի արխայիկ մի սյուժեում. երիտասարդները պարբերաբար հավաքվում են հեքիաթ լսելու կույր ամուսինների տանը, որոնց դստերը կախարդ-վիշապը օձ էր դարձրել («Կախարդը», տե՛ս սույն գրքի «Ժողովրդական հեքիաթների ժամանակակից գրառումներ»-ի ծանոթագրական ցանկը, № 2, այսուհետև՝ ԺՀԳ):

Ասվածն ամենևին չի նշանակում, թե մեր օրերում այլևս չկան բանասացներ և բանասացություն: Պարզապես ժամանակակից բանասացությունը զգալիորեն նեղացրել է իր կենցաղավարման մասշտաբները. հեքիաթներն այսօր հիմնականում պատմվում են ընտանեկան նեղ միջավայրում, որտեղ պապերի և տատերի ունկնդիրները մանկահասակ թռռներն

են, ինչպես նաև մասնավոր ընկերական, բարեկամական հանդիպումների, զրույցների ժամանակ:

Արդի հայ հեքիաթասացությունը և ժողովրդական հեքիաթի ժամանակակից տարբերակների առանձնահատկությունները հետազոտելու նպատակով հավաքել ենք վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններից գրառված ժողովրդական հեքիաթներ (հեքիաթների նոր գրառումների ցանկը տե՛ս սույն գրքի 137-144 էջերում): Հեքիաթների մի մասը մեր անձնական գրառումներն են՝ սկսած 2005թ.: Նոր գրառումներում առկա են նաև 2013-2014թթ. «Արդի հայ հեքիաթի հիմնախնդիրները» թեմայի հետազոտական խմբի անդամների իրականացրած բանահավաքչական գործուղումների ընթացքում գրառված նյութեր (Նվ. Վարդանյան, Ալ. Սեմիրջյան, Նար. Վարդանյան), բանագետ Եվա Զաքարյանի անձնական գրառումները¹: Զգալի քանակ են կազմում նաև ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողների կատարած գրառումները (2006-2013թթ.):

Հավաքված հեքիաթների ընդհանուր քանակը 125 է: Հեքիաթների մեծ մասը գրառված են Տավուշի, Կոտայքի, Շիրակի մարզերում: Առանձին հեքիաթներ գրառված են նաև Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի մարզերում և Արցախում:

¹ Շնորհակալություն ենք հայտնում Եվա Զաքարյանին՝ հեքիաթների իր գրառումները սիրահոժար կերպով մեզ տրամադրելու համար:

Ա. Մերօրյա հայ հեքիաթասացները

Լավ բանասաց գտնելն այսօր հեշտ չէ, բայց և անհնար էլ չէ: Դրա վկայությունն է հեքիաթների՝ մեր ժամանակների համար բավական մեծ թիվ կազմող ցանկը, որը և ծառայելու է մեզ որպես ուսումնասիրման նյութ: Անշուշտ, ոչ բոլոր հեքիաթ պատմողներին կարող ենք լավ բանասաց համարել. ոմանք հատուկենտ կցկտուր պատումներ են միայն կարողացել հիշել: Սակայն կան բանասացներ, և դրանք քիչ չեն, որ պատմել են հինգ և ավելի, նույնիսկ՝ մինչև տասներեք հեքիաթ: Նման դեպքերում մենք սովորաբար գործ ունենք բուն իմաստով ավանդական հեքիաթասացի հետ, որը իր հեքիաթները ժառանգել է անմիջականորեն մի աղբյուրից. հիմնականում այդ աղբյուրը սեփական տոհմի նախնիներն են: Այսպիսի բանասացները սովորաբար նյութը պատմում են սիրով և նրանց հարկ չկա երկար համոզել, որ սկսեն հեքիաթ պատմել: Ավելին՝ գրեթե բոլոր լավ հեքիաթասացները ինչ-որ թաքուն հպարտություն են զգում, որ իրենք տիրապետում են իրենց պատերից լսած այնպիսի հեքիաթների, որոնք ոչ մի տեղ գրված չեն, և միայն իրենք գիտեն: Այս գիտակցությամբ ժողովրդական հեքիաթները ավելի են արժևորվում բանասացների կողմից և դառնում ընտանեկան, տոհմական ժառանգություն:

Մեր ձեռքի տակ եղած 125 հեքիաթները պատմել են 39 բանասացներ, որոնցից 16-ը արական, 23-ը իգական սեռի են: Կին հեքիաթասացները պատմել են ընդհանուր առմամբ 79 հեքիաթ, տղամարդիկ՝ 46: Դատելով քանակական տվյալ-

ներից այսօր հեքիաթներ առավելապես պատմում են կանայք:

Հեքիաթասացության գործընթացում կանանց դերի գերակայությունը նոր ժամանակներում զգալի է նաև աշխարհի այլ երկրներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե վաղ գրառումներում գերակշռում են տղամարդ բանասացների պատումները, ապա 20-րդ դարում կին հաքիաթասացները քանակով զգալիորեն գերազանցում են տղամարդկանց (Bengt Holbek 1987: 154-155, Risto Järn 2005: 50): Էստոնացի բանագետ Ռիստո Ջարվը դա բացատրում է նրանով, որ հետզհետե հեքիաթը դառնում է մանկական լսարանի սեփականությունը, հետևապես և կանայք ավելի շատ են հեքիաթներ կարդում (Risto Järn 2005: 50):

Այսուհանդերձ, հավաքված հայկական հեքիաթները ցույց են տալիս, որ մերօրյա հայ հեքիաթասացներից լավագույնների մեջ կանայք և տղամարդիկ չեն զիջում իրար: Տղամարդկանց մեջ կան հիանալի հեքիաթացանկերի գիտակներ, որոնց պատումներն իրենց արվեստով ու բովանդակությամբ կարող են իսկապես դասական նմուշներ համարվել: Նույնը կարելի է ասել կին բանասացների մասին:

Ինչպես միշտ, այսօր էլ հեքիաթասացները, չնչին բացառությամբ, ավագ սերնդի ներկայացուցիչներ են: Ուսումնասիրվող հեքիաթներից միայն մեկի բանասացն է տասնյոթ տարեկան աղջիկ, մյուսները վաթսուներից իննսուն տարեկան անհատներ են, որոնց գերակշիռ մասն ապրում է գյուղական միջավայրում, ունի միջնակարգ կրթություն: Բանասացներից ոմանք բնիկ արևելահայեր են՝ տեղական դարավոր բանավոր ավանդության կրողներ և փոխանցողներ, կան նաև

արևմտահայ (Մուշ, Սասուն, Կարին, Սարիղամիշ) և պարսկահայ (Խոյ, Մակու) գաղթականների սերունդներ, որոնք շարունակում են պատմել պապերի՝ բնօրրանից բերած և իրենց ժառանգած հեքիաթները:

Անշուշտ, անդրադառնալ բոլոր հեքիաթասացներին անհնար է, սակայն կփորձենք ընդհանուր գծերով բնութագրել լավագույններից մի քանիսին:

Բանասացներից ամենատարեցը դիլիջանցի իննսուներկուամյա Մուրադ Հարությունյանն էր: Չնայած առաջացած տարիքին՝ արտասովոր կայտառ մարդ էր, որին հանդիպեցինք հանդում հունձ անելիս: Դիլիջանի Շամախյան թաղամասում (նախկինում՝ Պողոսքիլիսա գյուղ) պատերազմի վերջերան Մուրադ պապին բոլորը գիտեին՝ որպես լավ «հեքիաթ ասողի» և հարսանիքների ժամանակ ծիսական երգեր երգողի: Մեծ գերդաստանի այս նահապետը գիտեր բավական հին, երկարաշունչ հեքիաթներ (ընդհանուր առմամբ նա պատմեց տասնմեկ հեքիաթ, ԺՀԺԳ № 24), որոնք պատմում էր բարձր, խրոխտ ծայնով, շեշտադրելով իր յուրաքանչյուր խոսքը, ծայնի բավական խիստ հնչերանգով (համագյուղացիները պնդում էին, որ կյանքում էլ բավական խիստ մարդ է եղել): Իր պատմած նյութի հանդեպ բավական զգույշ էր և աշխատում էր բաց չթողնել ոչ մի մանրուք: Եթե որևէ բան մոռանում էր, կանգ էր առնում ու աշխատում հիշել ճիշտ այնպես, ինչպես լսել էր: Հաճախ զուգահեռ էր անցկացնում իր և հեքիաթի հերոսների միջև:

Որպես ավանդական վարպետ բանասաց՝ Մուրադ Հարությունյանը հետաքրքիր հնարքների էր տիրապետում, զարմանալի հմտությամբ կարողանում էր միահյուսել իր

պատմած հեքիաթները: Այսպես՝ առաջին օրը նա պատմել էր մի կարճ իրապատում հեքիաթ՝ «Կուր հերն ու որդիները», որտեղ կրտսեր որդին շալակում է ավագ եղբոր ու նրա կնոջ կողմից արհամարհված կույր հորը և ձեռնունայն դուրս գալիս տնից: Երկրորդ օրը բանասացը պատմեց մեկ այլ երկարաշունչ հրաշապատում հեքիաթ՝ «Ծյուկ տղեն», ուր դրվագներից մեկում հիշատակեց նախորդ օրվա հեքիաթի հերոսների՝ կույր հորն ու որդուն, որոնց գործուն դեր հատկացրեց նաև այս հեքիաթի դիպաշարում: Նմանատիպ դիպաշարային միահյուսումներ առկա են նաև բանասացի պատմած մյուս հեքիաթներում:

Ասացողական արվեստի տեսակետից բանասացների մեջ առանձնանում էր դիլիջանցի Հակոբ Աբեյանը, որի հայրը՝ Ոսկանը, գաղթել էր Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Շապին-Գարահիսար քաղաքից, և որից էլ նա լսել էր իր պատմած հեքիաթները: Այս բանասացը տիրապետում էր չափազանց հարուստ ավանդական հեքիաթների (ընդհանուր առմամբ պատմել է տասը հեքիաթ, ԺՀԺԳ № 1), ասացողական վարպետությամբ և հումորի շոյլ զգացումով էր օժտված, որի շնորհիվ ունկնդրին պահում էր լարված վիճակում և պատումի ընթացքը վեր էր ածում իսկական թատերական ներկայացման՝ հարկ եղած դեպքում գործուն մասնակցելով իր աշխույժ դիմախաղով: Անշուշտ այս հանգամանքը պայմանավորված էր նաև բանասացի մասնագիտական նախասիրություններով. Հակոբ Աբեյանը եղել է սիրող դերասան և քսան տարի խաղացել է Դիլիջանի թատրոնում:

Հակոբ Աբեյանի պարագայում հեքիաթասացությունը գործուն ընթացք էր. բանասացը պարբերաբար փորձում էր

ունկնդրին ներքաշել պատումի հյուսման ընթացի մեջ՝ դիմելով ճարտասանական հարցերով («Օրերից մի օր... Սիֆթու՛ց իմանանք, թե ով էր, թե՞ եդով իմանանք ով էր... Լա՛վ, եդով կիմանանք... անձանոթ մարդ ա անցնելիս լինում...») («Թագավորի աղջկա ու ավազակի հեքիաթը», ԺՀԺԳ N° 1), որոշ հեքիաթներում էլ նշում էր, թե անձամբ ծանոթ է եղել հեքիաթի հերոսներին. «Երեկ չէ առաջին օրը ընդեղից եմ եկել, սաղ-սալամաթ են, մինչև հմի էլ ապրում են» («Թագավորի աղջկա ու ավազակի հեքիաթը» (ԺՀԺԳ N° 1): Այս մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև՝ հեքիաթի ավանդական բանաձևերին նվիրված բաժնում:

Ժողովրդական ավանդական նյութի հանդեպ անթաքույց սերն ու հիացմունքը ասացողական տաղանդով օժտված անհատներին մեր օրերում երբեմն ստիպում են բանահյուսական նյութի այլընտրանքային աղբյուրներ որոնել: Հեքիաթասաց Թերեզա Դավթյանը, օրինակ, որը գիտեր մորից և համազյուղացիներից լսած վեց ավանդական հեքիաթ, իր հեքիաթացանկը հարստացրել էր նաև «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական բազմահատորյակից ընթերցած պատումներով:

Ի բնե լինելով կենսախինդ կին՝ նա հեքիաթները դարձրել էր իր կյանքի մի մասը: Խոստովանում էր, որ նույնիսկ ունկնդիր չունենալու պարագայում էլ իր միայնության մեջ սիրում է մտքում հյուսել հեքիաթները: Այս բանասացը իրեն իրավունք էր վերապահում որոշ փոփոխություններ մտցնել հեքիաթներում. սիրելի հերոսներին իր նախընտրած անուններով էր կոչում, մի բան մոռանալու դեպքում հանպատրաստից փոխարինում էր մեկ այլ տարբերակով: Իր խոսքերով՝ նա երկա-

րացնում էր հեքիաթները, նոր մանրամասներ ավելացնում: Չնայած ապրում էր միայնակ (ամուսինը մահացել էր, իսկ զավակները՝ ամուսնացել և հեռացել), սակայն զրուցակիցների պակաս չէր զգում: Հպարտությամբ էր ասում, որ ուր գնում է, խնդրում են՝ հեքիաթ պատմի:

Մերօրյա բանասացներին բնութագրելու առումով ուշագրավ են բանասացների բանահավաք թոռնիկների դիտարկումները, որոնք մանկուց բազում անգամներ առիթ են ունեցել լսելու նույն հեքիաթները:

Էջմիածնի Շահումյան գյուղում ապրող հեքիաթասաց Թերեզա Սարգսյանի եղբոր թոռնուհին՝ Հասմիկ Սարգսյանը՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, որը 2007թ. ութսունամյա տատից գրի էր առել տասը ժողովրդական հեքիաթ (ԺՀԺԳ № 32), նշում է, որ տատիկը հիմա էլ հաճախ պատմում է այդ հեքիաթները՝ նույնությամբ, առանց որևէ բան փոխելու, և սիրում է, որ ընտանիքում բոլորն են լսում իրեն:

Բոլոր երեսունինը հեքիաթասացների մեջ ամենից հարուստ հեքիաթացանկով առանձնանում է Շիրակի մարզի Մուսայելյան գյուղում բնակվող Վերգինե Կարապետյանը, որից թոռնուհին՝ բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Ստեփանյան Աննան, 2010թ. գրի է առել տասներեք հեքիաթ՝ բոլորը հայկական ավանդական հեքիաթացանկին բնորոշ և վաղնջական շերտերով հարուստ (ԺՀԺԳ № 19): Հեքիաթները հատկապես աչքի են ընկնում հազվագյուտ ավանդական բանաձևերով: Բանասացը իր պատմած հեքիաթները լսել է հայրական տատից՝ Արևմտյան Հայաստանի Սարիղամիշ գյուղից գաղթած Վարդեր Կարապետյանից: Բանահավաքը

հավաստիացնում է, որ տատի հեքիաթները շարունակում է պատմել նաև իր մայրը:

Վերգինե Կարապետյանը համագյուղացիների շրջանում հայտնի է ոչ միայն որպես հեքիաթասաց, այլև որպես ժողովրդական բժիշկ (պապերից լսած ժողովրդական աղոթքների շնորհիվ բուժում է մարդկանց, պարզում է, թե նրանցից յուրաքանչյուրի հիվանդությունը որ սրբից է):

Մեկ այլ բանահավաք՝ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Ավետիսյան Արմենուհին, որը իր տատից՝ ութսունամյա Ասատրյան Ալմաստից (Արմավիրի մարզի Արևաշատ գյուղ), գրի է առել յոթ ավանդական հեքիաթ՝ այդ թվում նաև այսօր շատ քիչ պատմվող կենդանական հեքիաթներ (ԺՀԺԳ № 6), տատին այսպես բնութագրեց. «Տատիկիս համար հեքիաթը զարմացնելու, դիմացինին հիացնելու հատկություն ունի: Ինքը հավատում է այդ պատմություններին, շատ գրքեր է կարդացել և ունի հարուստ երևակայություն: Նույն հեքիաթը երբեք հաջորդ անգամ նույնությամբ չի պատմում: Որոշ պատմություններ էլ, հավաստիացնում է, թե իրական են: Տատիկս պատմում էր հատկապես երբ փոքր էինք: Ընտանիքով հավաքվում և լսում էինք: Հիմա պատմում է առիթից առիթ, երբ հյուր ենք ունենում կամ տվյալ խոսակցությանը համահունչ է»: Արմենուհին նշում է, որ տատի հեքիաթները երբեմն պատմում է նաև հորաքույրը:

Պապից ու տատից լսած հեքիաթները շարունակում են պատմել նաև բանասաց Սարգիս Մանուկյանի թոռները (Աշտարակի շրջանի Ավան գյուղ, արմատներով Սասունից): Ի դեպ, հեքիաթներից մեկը պատմել է հենց նրա թոռնուհին՝ տասնյոթամյա Հասմիկ Մանուկյանը՝ ուսումնասիրվող նյութի

շրջանակներում ամենաերիտասարդ բանասացը: Վերջինիս պատումը 2009թ. գրի առած Լուսինե Մանուկյանը (բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի, բանասացի հորեղբոր աղջիկը), պատմում է, թե մանուկ հասակում իրենք հաճախ էին մեկը մեկին լրացնելով պատմում տատից լսած հեքիաթները:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն շատ երկրների, Հայաստանում այսօր դեռ կան լավ հեքիաթասացներ, որոնք շարունակում են կրել և փոխանցել բանահյուսական ավանդական նյութը: Վերջին տասը տարիների դաշտային գրառումների հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ժողովրդական հեքիաթը դեռևս բոլորովին մոռացության տրված ժանր չէ: Թեև բանասացությունը՝ իր ավանդական դրսևորմամբ, մեր օրերում այլևս չի հանդիպում, սակայն ընտանեկան նեղ միջավայրում ժողովրդական հեքիաթներն այսօր էլ շարունակում են պատմվել, որոնց ունկնդիրը մեծ մասամբ արդեն մանուկ սերունդն է:

Այսքանով հանդերձ, միանշանակ կանխատեսել, թե ինչպիսին է հեքիաթասացության ապագան, և դեռ որքան կշարունակի ապրել ավանդական բանահյուսական նյութը, դժվարանում ենք: Արդյո՞ք տարեցներին ունկնդիր երիտասարդ կամ մանուկ սերնդի մեջ կլինեն այնպիսիք, որ հետագայում էլ կապրեցնեն ժողովրդական հեքիաթները՝ դառնալով ավանդական նյութի փոխանցողներ: Փաստն այն է, որ մեր ճանաչած վարպետ բանասացներից ոչ բոլորի սերունդներն են, որ շարունակում են պատմել իրենց ավանդված հեքիաթները:

Բ. Հեքիաթի տեսակները մերօրյա բանասացների հեքիաթացանկերում

Ինչպես արդեն նշեցինք, ուսումնասիրությունը կատարվում է վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի տարբեր մարզերից կատարված ժողովրդական հեքիաթների նոր գրառումների հիմքով, որոնց ընդհանուր քանակը հարյուր քսանհինգն է: Հեքիաթացանկը ներառում է հեքիաթային տարբեր տեսակների ու տիպերի պատումներ: Անդրադառնանք հեքիաթի տեսակներին առանձին-առանձին՝ փորձելով պարզել, թե հեքիաթի ո՞ր տեսակն է այսօր գերակշռում ժողովրդական բանավեստում, ժամանակակից ի՞նչ առանձնահատկություններ է հանդես բերում հեքիաթի յուրաքանչյուր տարատեսակ, ո՞ր սյուժեներն են այսօր արդիական՝ ելնելով տարբերակների գրանցված քանակից և հարակից մի շարք այլ խնդիրներ:

Հրաշապատում հեքիաթներ: Գրանցված հեքիաթներից երեսունյոթը հրաշապատում են: Դիպաշարային կազմով մերօրյա գրանցումները պահպանում են ավանդական հայկական հեքիաթի հիմնական սիրված պատումները՝ որոշ դեպքերում նույնիսկ նույն դիպաշարերի մեկից ավելի տարբերակների առկայությամբ: Այսպես, առկա է մարդակեր պառավի և սրամիտ տղայի հեքիաթի չորս նոր գրառում («Չըթոն», ԺՀԺԳ № 18, «Պիլտոսը», ԺՀԺԳ № 9, «Սըքրեն», ԺՀԺԳ № 4, «Ճիլիմոն», ԺՀԺԳ № 26, ATU 327), Հազարան բլբուլի երկու նոր գրառում («Հազարան բլբուլ», ԺՀԺԳ № 21, «Հազարան բլբուլ», ԺՀԺԳ № 12, ATU 550), Ոսկեքաքուլ տղայի երկու տարբերակ («Ոսկեքաքուլ տղեն», ԺՀԺԳ № 12,

«Զինիկ Աշխենիկը», ԺՀԺԳ № 19, ATU 707), օձի բերանի կախարդական մատանու երկու նոր տարբերակ («Ինիզն ու Մինիզը», ԺՀԺԳ № 19, «Օձի լեզվի տակի մատանին», ԺՀԺԳ № 24, ATU 560), կենդանակերպ փեսացուի մասին հեքիաթի երկու նոր գրառում («Օձմայիլը», ԺՀԺԳ № 4, «Օյուկ տղեն», ԺՀԺԳ № 24, ATU 433B), գերբնական կամ կենդանակերպ հարսնացուի մասին հեքիաթների երեք տարբերակ («Գըղըկը», ԺՀԺԳ № 12, «Եղեգնի աղջիկը», ԺՀԺԳ № 25, «Նախրչու հեքիաթը», ԺՀԺԳ № 30, ATU408), կենդանիների ու թռչունների լեզուն հասկացող հերոսի մասին հեքիաթի երկու նոր տարբերակ («Ավչի Ահմադ», ԺՀԺԳ № 32, «Կենդանիների լեզուն հասկացողը», ԺՀԺԳ № 1, ATU 670): Կան նաև առանձին սյուժեներ, որոնք եզակի գրանցումներ ունեն՝ մարդակեր աղջկա («Ջանգի-Չրանգի», ԺՀԺԳ № 30, ATU 315A), Մոխրոտի («Խորթ ախչկա նաղ», ԺՀԺԳ № 30, ATU 480), գեղեցկուհի կնոջ պատճառով հալածված ամուսնու («Որսորդի հեքիաթը», ԺՀԺԳ № 29, ATU 465D), օգնական ձկան («Ալաբալը ձուկը», ԺՀԺԳ № 10, ATU 505) և այլ հեքիաթներ: Ընդհանուր առմամբ առկա է հեքիաթային քսան տիպ՝ իրենց տարբերակներով հանդերձ:

Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթների մի շարք սիրված տիպեր մեր ձեռքի տակ եղած գրանցումներում նոր տարբերակներ արդեն չունեն: Ինչպես օրինակ՝ գրառումներում բացակայում են Դև-Ջամփոլադի, մսե թրով ծնված հերոսի, Սինամ թագավորի, մարդագեղի, Օխայ վարպետի և այլ՝ վաղ գրառումներում տարբերակների քանակով աչքի ընկնող ու սիրված հեքիաթների նոր տարբերակներ: Կարող

ենք ենթադրել, որ այսօր արդեն ժողովուրդը աստիճանաբար մոռացության է տալիս դրանք:

Հրաշապատում հեքիաթներում տարբերակների քանակով առաջին տեղում է մարդակեր պառավի (դևի) հեքիաթը («Չըթոն», ԺՀԺԳ N° 18, «Պիլտոսը», ԺՀԺԳ N° 9, «Սըքրեն», ԺՀԺԳ N° 4, «Ճիլիմոն», ԺՀԺԳ N° 26, ATU 327): Հեքիաթի չորս նոր գրառումներն էլ աչքի են ընկնում հերոսների ծիծաղաշարժ անուններով, սյուժետային զարգացումն էլ գրեթե միանման է. եղբայրները ընկնում են խաղով կամ ուղղակի հեռանում են տնից, հայտնվում մարդակեր պառավի (տարբերակներում՝ դևի) տանը, որը ուզում է գիշերը քնեցնել երեխաներին և ուտել: Կրտսերը գլխի է ընկնում և խորամանկությամբ եղբայրներին փախցնում տնից՝ պատուհասելով պառավին (նրա աղջիկներին կամ կենդանիներին): Հեքիաթի կենսունակությունը ըստ երևույթին խոսում է այն մասին, որ մերօրյա բանասացները, որոնք մեծ մասամբ արդեն մանկահասակ ունկնդրի հետ գործ ունեն, հեքիաթով դաստիարակելու և խրատելու միտում ունեն:

Գրանցված տարբերակների քանակով աչքի են ընկնում նաև Շահիսմայիլի մասին հեքիաթները: Արևելյան բանահյուսությունից հայտնի այս կերպարի շուրջ հյուսված հեքիաթների մերօրյա գրանցումները չորսն են, որոնցից երեքը նույն հեքիաթի տարբերակներ են. Շահիսմայիլը երեք հարսնացու է բերում, հայրը նախանձում է և կամենալով խլել որդու հարսնացուներին՝ կուրացնում է որդուն: Հետագայում որդին վերականգնում է տեսողությունը (աչքերի տեղերը՝ աջ ու ձախ, հակառակ է դնում, որից էլ շլություն է ունենում) և հարսնացուների օգնությամբ հաղթում է հորը («Շայիլմայիլը»,

ԺՀԺԳ N° 19, «Շահիսմայիլը», ԺՀԺԳ N° 14, «Շահիսմայիլը», ԺՀԺԳ N° 24): Չորրորդ հեքիաթը մի փոքր այլ զարգացում ունի. Շահիսմայիլը ամուսնանում է մի իմաստունի օգնությամբ, որը բացահայտում է, որ թուրք թագավորն իրականում հայ է. որպես ապացույց նա կանխատեսում է, որ թագավորի տղան կսկսի խոսել յոթ օրականում և մեջքին մսե օձ հմայիլ կունենա: Հեքիաթը շարունակվում է որդու մասին պատումով, որի մասին կանխատեսումներն իրագործվում են («Շահիսմայիլ», ԺՀԺԳ N° 21): Վերջին տարբերակում արդեն մենք տեսնում ենք օտարազգի թագավորի հայացումը, և պատումը հետաքրքրական է նաև նրանով, որ հայության ապացույցը մսե հմայիլն է (թալիսման): Մսե թուր-խաչ հմայիլներով հայ դյուցազունների ծնունդը տարածված մոտիվ է մեր բանահյուսության մեջ, որը հանդիպում է ինչպես հեքիաթներում, այնպես էլ «Սասնա ծռեր»-ում և զորավար Անդրանիկի մասին ավանդազրույցներում (այս մասին մանրամասն տե՛ս Վարդանյան Նվ. 2007):

Ինչպես միշտ, հրաշապատում հեքիաթի նոր գրառումներն այսօր էլ լեցուն են հրաշալի փոխակերպումներով, հրաշագործ առարկաներով, հերոսի գերբնական քաջագործություններով, երախտագետ հրաշագործ կենդանիներով: Իհարկե, մերօրյա հեքիաթասացները, պատմելով անհավանական հրաշքների մասին, ժամանակ առ ժամանակ կարծես արդարանում են՝ «սուտ հրաշքների» մասին մատմելու պատասխանատվությունը զցելով ժողովրդի կամ գրողների վրա: Դիլիջանցի Մուրադ Հարությունյանը, օրինակ, որը հաճախ էր գերբնական հրաշքների մասին պատմելիս կրկնում՝ **դե, հեքիաթ ա, էլի**, երբեմն նաև ավելացնում էր. «Հեքիաթին ի՞նչ

կա: Սուրբ-մութի են անում գրողին, գրում են, տալի ժողովողին, ասում են՝ կարդացեք» («Օյուկ տղեն», ԺՀԺԳ № 24): Նույն կերպ Աբեյյան Հակոբը «արդարանում էր», թե այդ հեքիաթները ինքը չի ստեղծել. «Դե հեքիաթ ա, էլի, ժողովուրդ ջան, ես չեմ ստեղծել, ոնց լսել եմ, նենց էլ պատմում եմ» («Թագավորի աղջկա ու ավազակի հեքիաթը», ԺՀԺԳ № 1): Այս հրաշքներին չհավատալը, դրանք «սուտ-մուտ բաներ» համարելը, իհարկե, բանասացներին չի խանգարում նույն հավիշտակությամբ շարունակել կախարդական հյուսվածքը:

Այնուամենայնիվ մերօրյա բանասացներից ոմանք երբեմն կամա թե ակամա պատումներից դուրս են մղում նման գերբնական, անհավանական հատվածները՝ այդպիսով որոշակիորեն խաթարելով, մասնատելով հրաշապատում հեքիաթի սյուժեները, երբեմն դրանք վերածելով իրապատումի: Օրինակ՝ այնպիսի դասական հրաշապատում հեքիաթ, ինչպիսին «Չախչախ թագավոր»-ն է, նոր գրառումներում պահպանվել է հատվածաբար՝ երկու տարբերակով: Երկու տարբերակում էլ բանասացները հեքիաթից բոլորովին հանել են խորամանկ աղվեսի կերպարը, որը օգնում է աղքատ գյուղացուն հարստանալ և ամուսնանալ թագավորի աղջկա հետ: Հեքիաթներից մեկում հերոսն ինքն է ոսկի չափելու կոտով խաբում թագավորին և հարուստ ձևանալով՝ ամուսնանում թագավորի աղջկա հետ («Չարչու հեքիաթ», ԺՀԺԳ № 5), իսկ մյուսում՝ մի աղքատ թագավոր, վեզիրի օգնությամբ խաբում է, թե բոլոր հողերը և ապարանքներն իրեն են պատկանում, և ամուսնանում հարուստի գեղեցիկ աղջկա հետ («Չախչախ թագավոր», ԺՀԺԳ № 14): Ի դեպ, վերջին տարբերակի բանասացը անմիջական զուգահետ անցկացրեց մերօրյա մեծահարուստ-

ներից մեկի հետ՝ նշելով, թե այսօր էլ բոլոր հողերը, տները նրան են պատկանում: Ակնհայտորեն յուրաքանչյուր հեքիաթ բանասացին հետաքրքրում և գրավում է այնքանով, որքանով այն կապվում է իրեն շրջապատող իրականության հետ: Այսպիսով՝ նախկին երկարաշունչ հրաշապատում հեքիաթից այսօր բանասացները պահպանել են երկու իրապատում երգիծական հատված:

Նույն երևույթի դրսևորումը տեսնում ենք եղնիկ աղջկա մասին պատմող հեքիաթի նոր գրառված տարբերակում: Հեքիաթի վաղ գրառումներում եղնիկի կերպարով աղջկան որսի ժամանակ հետապնդում է արքայազնը (դիպաշարերի քննությունը տե՛ս Զաքարյան Եվա 2012-2013, 81-89): 2010թ. գրառված մի տարբերակում հեքիաթի հերոսուհին ո՛չ արքայազնին հանդիպելուց առաջ, ո՛չ էլ հետո եղնիկի կերպարով հանդես չի գալիս, սակայն նրան հետապնդելով սարի վրանին հասած տղան հարցնում է, թե ուր է ջեյրանը (եղնիկ) («Թակավորի տղի հեքիաթը», ԺՀԺԳ N° 19): Հեքիաթում կարծես անհասկանալի է մնում, թե ինչու է տղան աղջկան այդպես անվանում, սակայն սյուժեի վաղ գրառված տարբերակների համադրությունը վերականգնում է հեքիաթի նախնական՝ հրաշապատում տարբերակը: Հետագա շարադրանքում ևս այս հրաշապատում սյուժեին հիմնականում իրապատում մոտիվներով է զարգանում:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հրաշապատում հեքիաթի մերօրյա գրառումներում **հրաշքի առկայությունը մեծ մասամբ կապվում է Աստծո կամ Հիսոս Քրիստոսի անվան հետ**: Բանասացները հրաշքների իրագործվելը շատ դեպքերում բացատրում են ոչ թե կախարդական առարկանե-

րի տիրապետմամբ կամ գերբնական կենդանակերպ օգնականների աջակցությամբ, այլ աստվածային կամքով: «Հազարան բլբուլի» նոր գրառումներից մեկում եղբայրների կողմից դավաճանված և հորում մնացած հերոսին Աստծո ուղարկած թևավոր հավքն է հանում լույս աշխարհ («Հազարան բլբուլ», ԺՀԺԳ № 21): Անմեղ զրպարտված հերոսուհու մասին պատմող հրաշապատում հեքիաթի նոր տարբերակում դարձյալ Աստծո ուղարկած թռչունն է աղջկան առաջնորդում ու հանում անտառի թավուտից, Աստծո հրամանով է ծառը իջնում, որ աղջիկը նստի վրան, ապա բարձրանում, ի վերջո, Աստծո հրամանով երկնքից երկու կաթիլ է ընկնում, ողջացնում սպանված երեխաներին («Ղամփերին», ԺՀԺԳ № 19): Մինչդեռ հրաշապատում հեքիաթի տրամաբանությամբ շնչավորված բնությունն ու կենդանիները իրենք են վարձահատույց լինում հերոսներին կատարված լավության դիմաց:

Աստված հաճախ նաև հենց ինքն է դառնում է հեքիաթի հերոս՝ կատարելով գերբնական օգնականի գործառույթը: Հեքիաթներից մեկում անզավակ ամուսինները զավակ են ունենում Հիսուսի տված խնձորից: Աղջկա ծնվելուց հետո էլ Հիսուսն է դառնում նրա կնքահայրը և գերբնական հատկանիշներով օժտում նորածնին («Նախրչու հեքիաթը», ԺՀԺԳ № 30): Մեկ այլ հեքիաթում անզավակ թագավորին ու թագուհուն Աստված և Սատանան միևնույն ժամանակ չար և բարի զավակներ են տալիս («Զրիհան ու Արիհան», ԺՀԺԳ № 27):

Ի դեպ, վերջին հեքիաթը խիստ հետաքրքրական նմուշ է, որի տարբերակները հայկական հեքիաթացանկում մեզ ծանոթ չեն: Սատանան իր տված որդու՝ Զրիհայի միջոցով կամենում է չարիք գործել, վնասել քրոջը՝ Աստծո տված Արիհա-

յին: Սակայն Ջրիհան հրաժարվում է գործել Սատանայի թե-
լադրած չար գործերը և փրկում է իր ընտանիքը:

Զարմանալի է, որ նույնիսկ մեր օրերում, երբ թվում է՝ հրա-
շապատում հեքիաթը քայքայման փուլում է, հնարավոր է
գրառել նոր պատում: Հեքիաթի բանասացի ծնողները գաղ-
թել են Սասունից և հեքիաթը իրենց հետ են բերել: Երկվոր-
յակային առասպելի հիմքով ստեղծված հեքիաթներ, իհարկե,
մեր հեքիաթային ավանդության մեջ կան, սակայն ո՛չ տա-
րասեռ երկվորյակների շուրջ հյուսված և ո՛չ էլ չարի ու բարու
այդքան ընդգծված հակադրությամբ: Ե՛վ հերոսների անուն-
ները, և՛ երկվորյակային ընդգծված կոնֆլիկտն ուղղորդում
են դեպի պարսկական առասպելաբանությունը՝ դեպի ժամա-
նակի հնագույն աստված Զրվանի և նրա Որմիզդ ու Ահրի-
ման՝ չար և բարի երկվորյակների առասպելը, որը քրիստո-
նեացել է և մտել հայ հեքիաթային ավանդույթ: Համենայն-
դեպս, սա մի յուրօրինակ պատում է, որը կարող է հետագա
ուսումնասիրությամբ շատ հետաքրքիր շերտեր բացահայտել:

Հրաշապատում հեքիաթի մերօրյա տարբերակներում հա-
ճախ հնագույն պատկերացումներին ու անիրական կախար-
դանքներին փոխարինում են քրիստոնեական պատկերա-
ցումները, որոնք մերօրյա մարդուն ավելի իրական են թվում:
Հեքիաթներից մեկում թագավորը սիրահարվում է որսորդի
կնոջը և որսորդին ուղարկում այն աշխարհ՝ իր հանգուցյալ
հորից լուր բերելու: Հերոսը անդրաշխարհում հանդիպում է
թագավորի հորը, որը կյանքում գործած մեղքերի համար
չարչարանքների է ենթարկվում, քար է կրում: Թագավորը
որսորդի միջոցով որդուն պատգամում է մեղքեր չգործել, և

վերջինս հրաժարվում է իր չար մտադրությունից («Որսկանի հեքիաթը», ԺՀԺԳ N° 29):

Հեքիաթի տարբերակները, որոնք քիչ չեն վաղ գրառումներում, հիմնականում այլ մոտիվներով են զարգանում: Որսորդն անտառում գտնում է հրաշալի թռչուն: Վերջինս գեղեցկուհի աղջիկ է, որը դառնում է որսորդի կինը: Թագավորը գեղեցկուհուն տիրանալու նպատակով որսորդին անհրապականալի հանձնարարություններ է տալիս՝ «գնալ այնտեղ, չգիտեմ որտեղ, բերել այնինչը, չգիտեմ, թե ինչը» (ՀԺՀ, հ. V, N° 63, էջ 386-391), կամ կախարդական առարկաներ բերելու հանձնարարություններ է տալիս հերոսին, որն էլ իր բերած կախարդական իրերով հաղթում է թագավորին (ՀԺՀ, հ. VII, N° 20): Մեր գրառած նոր տարբերակում, ինչպես տեսանք, որսորդի կնոջ գերբնական ծագման մոտիվն ընդհանրապես բացակայում է, իսկ որսորդի ճամփորդությունը դեպի անդրաշխարհ ուղեկցվում է քրիստոնեական բարոյախոսությամբ՝ հանդերձյալ կյանքի չարչարանքների սպառնալիքով, որի գիտակցությամբ չար թագավորը դարձի է գալիս:

Իհարկե, այսպիսի հեքիաթների կողքին նոր գրառումներում կան նաև հրաշապատում հեքիաթի այնպիսի պատումներ, որոնք ոչ միայն պահպանում են դասական հրաշապատում հյուսվածքներն ու ժանրի բոլոր օրինաչափությունները, այլև այսօր էլ հնագույն տվյալների մի լավագույն շտեմարան են հանդիսանում վաղ առասպելական աշխարհայացքն ու պատկերացումներն ուսումնասիրողների համար: Այսպես՝ անտառի պառավի կամ դևի տան նկարագիրը հեքիաթներում պահպանում է անդրաշխարհի մասին վաղնջական պատկերացումներ. հեքիաթներում հիշատակվում է այդ տան

շեմի մոտ կանչող աքաղաղը, որի ձայնն ամբողջ աշխարհը լսում է («Սըքրեն», ԺՀԺԳ № 4, «Թագավորի տղեն ու դևը», ԺՀԺԳ № 30), հեքիաթներից մեկում դևը թոնրի վրա ճոճանակ է կապում և հերոսին առաջարկում է ճոճվել: Հերոսը պարանը կտրում է, և դևն ընկնում է կրակի մեջ, այրվում («Թագավորի տղեն ու դևը», ԺՀԺԳ № 30):

Երկնային աքաղաքը, որի կանչը հարություն է տալիս մեռյալներին (Հարությունյան Ս. 2000, էջ 387-388), դժոխքի հրեղեն գետի վրայով ձգվող Մազե կամուրջը, որից մեղքերի ծանրության տակ կքաժ հանգուցյալներն ընկնում են կրակի մեջ (Հարությունյան Ս. 2000, 439)՝ հայ հնագույն պատկերացումներ են անդրաշխարհի մասին:

Ավանդական գրանցումներին հարազատ պատումներ են վերևում արդեն հիշատակված՝ կենդանակերպ փեսացուի և հարսնացուի, Հազարան բլբուլի, վիշապամարտիկ երրորդ որդու, օձի լեզվի տակի մատանու, Ոսկեքաքուլ տղայի, կենդանիների ու թռչունների լեզուն հասկացող հերոսի հեքիաթների նոր գրանցումները, որոնցում հրաշապատում հյուսվածքը դարձյալ դասական օրինաչափություններով է զարգանում և մոտ է հեքիաթների վաղ գրառված տարբերակներին:

Իրապատում հեքիաթներ: Հեքիաթների նոր գրառումներում իրապատում հեքիաթների պատումներն զգալիորեն գերազանցում են հրաշապատումներին. դրանք 84-ն են: Անշուշտ, քանակային ցուցանիշն արդեն խոսում է այն մասին, որ իրապատումն այսօր մարդուն շատ ավելի հոգեհարազատ և առավել լայն կենցաղավարում ունեցող տարատեսակ է: Ընդ որում, եթե հրաշապատումի պարագայում նկատելի է, թե ինչպես են որոշ պատումներ քայքայվելով մասնատվում,

ապա իրապատում հեքիաթի պատումները շատ ավելի ամբողջական են և լիարժեք: Այս հեքիաթների պարագայում ավելի հարուստ է հեքիաթացանկը դիպաշարային բազմաբնույթ տիպերով: Իրապատում հեքիաթներից քառասունը արկածային պատումներ են՝ ճակատագրի նախասահմանվածության, իմաստուն հերոսների, դժվար խնդիրների հաղթահարման, լավ ու վատ կանանց, դավաճան ընկերների, երիտասարդ տարիքում տրված փորձությունների և այլ թեմաներով: Քսանհինգը երգիծական պատումներ են՝ սրամիտ խաբեբաների, լեզվանի կանանց, անազնիվ մեծահարուստների, ծուլերի, խելոք և հիմար եղբայրների, դաժան տիրոջ և սրամիտ ծառայի, բախտախնդիր թագավորների մասին: Տասնինը պատում խոհախրատական բնույթի են՝ փորձով հաստատված խրատներով, կյանքի ու մարդկային բազմապիսի ապրումների մասին խոհերով, որոնք իրենց կարճաճոտ բովանդակությամբ ու ընդգծված ուսուցողական ուղղվածությամբ բավական մոտ են առակի ժանրին: Ութսունչորս հեքիաթներում ընդհանուր առմամբ առկա են իրապատում հեքիաթի հիսուն տիպեր՝ իրենց տարբերակներով:

Տարբերակների քանակով մյուսներին զգալիորեն գերազանցում են ճակատագրի նախասահմանվածության հեքիաթները. ընդհանուր առմամբ գրառվել է տասներկու հեքիաթ՝ երեք տիպերի (ATU 930, ATU 930A, ATU 931): Այս հեքիաթներն առկա են գրեթե բոլոր լավ բանասացների հեքիաթացանկերում: Ավելին՝ հեքիաթասացներից ոմանք պատմել են նույնիսկ երկու կամ երեք սյուժե ճակատագրի նախասահմանվածության վերաբերյալ (սյուժեների քննությունը տե՛ս սույն գրքի «Ճակատագրի նախասահմանվածության հե-

քիաթները. հնագույն արմատներից մինչև ժամանակակից գրառումներ» գլխում):

Մերօրյա բանասացների կողմից սիրված հեքիաթներից են նաև խելացի և սրամիտ մարդկանց՝ երեք իմաստուն եղբայրների («Իրեք իմաստուն ախպեր», ԺՀԺԳ № 11, «Իրեք ախպեր» (Վարդանյան Նվ. 2009, 128), «Կորած դավեն», ԺՀԺԳ № 6, ATU 655), իմաստուն աղջկա («Նունուֆար» (Վարդանյան Նվ. 2009, 122), «Իմաստուն աղջիկը», ԺՀԺԳ № 12, ATU 922), հնարագետ հովվի կամ ջրաղացպանի մասին հեքիաթները («Տերտերն ու ջաղացպանը», ԺՀԺԳ № 20), որոնք լեցուն են այլաբանական և տրամաբանական հարցերով և խելացի հերոսների կողմից դրանց տրվող իմաստուն պատասխաններով, երբեմն նաև անտրամաբանական հարցերով և դրանց տրվող սրամիտ և անտրամաբանական պատասխաններով:

Ուսուցողական ընդգծված բնույթ ունեն արկածային հեքիաթների մի շարք տիպեր, որոնք ևս շարունակում են մեր օրերում էլ պատմվել ժողովրդի կողմից: Այդպիսիք են անհավատարիմ ընկերների մասին արկածային հեքիաթները (երկու ընկեր դավաճանում են երրորդին, սպանում, թալանում: Ճշմարտությունը բացահայտվում է, Աստված պատժում է («Նամարդ ընկերներ», ԺՀԺԳ № 32, «Արդար արունը գետին չի մնա», ԺՀԺԳ № 19), անհավատարիմ և հավատարիմ կանանց մասին հեքիաթները (մի կին գայթակղվում է թագավորի առաջարկով և սպանում ամուսնուն, թագավորը կարգադրում է սպանել բոլոր կանանց, սակայն լսելով հավատարիմ կնոջ մասին մի հուզիչ պատմություն՝ փոխում է որոշումը, «Լավ ու վատ կնանիք», ԺՀԺԳ № 19, «Հավատարիմ ու ան-

հավատարիմ կնանիք», ԺՀԺԳ № 6, ATU921B), երիտասարդ տարիքում տրված փորձության մասին սյուժեները, որոնք հաղթահարելով՝ թագավորն իր ընտանիքով վայելում է խաղաղ ծերությունը («Չախչախ թագավոր», ԺՀԺԳ № 19, «Դժբախտությունը ահելո՞ց, թե՛ ջահելոց», ԺՀԺԳ № 1, ATU 938) և մի շարք այլ սյուժեներ:

Երգիծական հեքիաթների պատումները հիմնականում ուղղված են մարդկային զանազան թերություններն ու թուլությունները ծաղրելուն. հիմար հերոսները կործանվում են իրենց խելքից («Անխելք մարդը», ԺՀԺԳ № 1, «Անխելք մարդը», ԺՀԺԳ № 33), անկոչ հյուրերը ծաղրվում և դուրս են արվում սրամիտ տանտիրոջ կողմից («Անկոչ հյուր», ԺՀԺԳ № 34), ծույլ երիտասարդները աշխատասեր են դառնում հնարամիտ հերոսների ջանքերով («Թամբալը», ԺՀԺԳ № 32, «Թագավորի թամբալ աղչիկը», ԺՀԺԳ № 19, «Ինչպես թամբալը դարձավ թագավորի փեսա», ԺՀԺԳ № 1): Սուր ծաղրի են ենթարկվում հատկապես լեզվանի կանայք, որոնցից փախչում են նույնիսկ սատանան ու օձը («Լիրբ կնիկը», ԺՀԺԳ № 32, «Օցն ու կինը», Վարդանյան Նվ. 2009, 136), որոնց անգամ թագավորի գող և անբարոյական կանանց վերափոխած հնարամիտ գյուղացին հրաժարվում է տուն տանել և անմիջապես գետն է գցում («Լրբին էյթիբար չկա», ԺՀԺԳ № 19, «Լեզվանիին փրկություն չկա», ԺՀԺԳ № 14): Պատումներում երգիծանքի առարկա են դառնում հարսի ու սկեսրայրի, հարսի ու սկեսուրի ընտանեկան փոխհարաբերությունները:

Երգիծական այնպիսի սիրված սյուժեներ, ինչպիսիք են՝ թագավորի փեսա դարձած սրամիտ գողի մասին պատումներ-

րը («Ճուկո», ԺՀԺԳ № 32, «Ճիկո», ԺՀԺԳ № 24, ATU950), խաբեությամբ թագավորի պալատական իմաստունը դարձած ճարպիկ «գուշակի» մասին պատումները («Ախճաղիկը», ԺՀԺԳ № 19, «Քաչալն ու փալչին», Վարդանյան Նվ. 2009, 139), ճարպիկ հնարքով խաբեբա հարուստից աղքատների ոսկիները կորզած հերոսուհու մասին հեքիաթները («Կադի Նաֆանդի», ԺՀԺԳ № 31, «Կախպա քյալագ», Վարդանյան Նվ. 2009, 133) այսօր էլ շարունակում են պատմվել և սիրված են ժողովրդի կողմից: Յուրաքանչյուրից գրանցվել է երկուական նոր տարբերակ:

Ի դեպ, վերջին հեքիաթի բանասացներից մեկը, նկարագրելով հարուստ խաբեբային, որը հրաժարվում է գյուղացիներին վերադարձնել իրեն պահ տված ոսկիները, անմիջական զուգահեռ է անցկացնում մերօրյա բանկերի հետ: «Հիմի էլ կա: Հիմի էլ ուրիշ ձև է խաբեբայությունը. բանկերն են», - նշում է բանասացը («Կադի Նաֆանդի», ԺՀԺԳ № 31):

Ճակատագրի սյուժեներից հետո իրապատում հեքիաթներում տարբերակների քանակով երկրորդ տեղում են փորձով հաստատվող խրատների մասին հեքիաթները (ATU910, ATU910D, ընդհանուր առմամբ՝ յոթ պատում), որոնց տարբերակներով հարուստ են նաև հեքիաթների վաղ գրառումները: Երեք խրատ գնում է վեզիրը, կամ ժառանգություն է թողնում հայրը, խրատը գնում է թագավորը շուկայում, թե լսում է պառավը փողոցում կանչող մուրացկանից. բոլոր հեքիաթներում պատումի հետագա հյուսվածքն ապացուցում է այդ խրատների ճշմարտացիությունը, և դրանցում կամա թե ակամա համոզվում են նաև հեքիաթի հերոսները: Խրատները տարբեր են. «Իշխանությանը մի՛ հավատա», «Կնոջը գաղտնիք մի՛

ասա», «Բարեկամին թողած, օտարի հետ ընկերություն մի՛ արա», «Այսօրվա գործը վաղվա մի՛ թող», «Սարերի արանքում մի՛ քնիր», «Ինչին սիրով ես նայում, գեղեցիկ է», «Ինչ անում ես, խելքով արա», «Ինչ անես, քեզ կանես» և այլն («Խիզար հիմաստունի իրեք խրադը», (Վարդանյան Նվ. 2009, 144), «Երեք խորհուրդ» (ԺՀԺԳ № 39), «Իրեք հող» (ԺՀԺԳ № 12), «Երեք խրատ» (ԺՀԺԳ № 13), «Ինչ անես, քեզ կանես» (ԺՀԺԳ № 16), «Ինչ անում ես, խելքով արա» (Վարդանյան Նվ. 2009, 147), «Հոր խրատը» (ԺՀԺԳ № 24):

Այսպիսի պատումների առատությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ մեր օրերում հեքիաթը մեծապես ծառայում է դաստիարակելու և խրատելու նպատակին: Նման հեքիաթները սովորաբար պատմվում են խոսքուզրույցի ժամանակ և կիրառությամբ ևս մոտենում են առակի ժանրին. սովորաբար երիտասարդ ունկնդիրներին խրատելու նպատակով մեծահասակները դիմում են փորձով հաստատված իմաստությունների մասին պատմող հեքիաթների օգնությամբ:

Իրապատում հեքիաթի մերօրյա գրանցումներում գրեթե չեն հանդիպում հոգևորականությանը ծաղրող հեքիաթներ: Ընդամենը երկու պատում կա, որտեղ հիշատակվում է տերտերը: Առաջինում ջաղացպանը գերազանցում է տերտերին իր խելքով՝ նրա փոխարեն պատասխանելով թագավորի հարցերին («Տերտերն ու ջաղացպանը», ԺՀԺԳ № 20), երկրորդ պատումում ծաղրվում է տերտերի շահամոլությունը («Անարժան որդիների ու տերտերոջ հախը», ԺՀԺԳ № 36): Մինչդեռ հայ ժողովրդական հեքիաթների վաղ գրառումներում հոգևորականությանը ծաղրող սյուժեները բավական մեծ քանակ են կազմում: Հոգևորականությանը ծաղրող հե-

քիաթների նվազումը շատ բնական է: Անշուշտ հոգևորականությունն այսօր հասարակական կյանքում չունի այն մեծ դերը, ինչ որ ուներ տասնիններորդ դարի երկրորդ կեսին և քսաներորդ դարասկզբում, երբ հոգևորականները ոչ միայն հոգևոր-կրոնական առաջնորդներ էին, այլև շատ մեծ դեր էին կատարում հասարակական կյանքի կազմակերպման և կրթական գործում (գյուղական համայնքներում հենց ծխական քահանաներն էին իրականացնում մանուկների տարրական կրթությունը): Այս առումով շատ ավելի էր կարևորվում հոգևորականության զարգացվածության աստիճանն ու բարձր գրագիտությունը, որի բացակայությունը սուր սարկազմի տեղիք էր տալիս ժողովրդական հեքիաթներում: Մեր օրերում հոգևորականը հիմնականում հանդես է գալիս որպես ծխարար, և այն էլ՝ ոչ միշտ: Ըստ երևույթին դա է հոգևորականության վերաբերյալ ծաղրական հեքիաթների աստիճանական մոռացության պատճառ դառնում:

Դրան հակառակ, հեքիաթների մերօրյա պատումներում առկա են այնպիսիք, որոնց տարբերակները գոնե մեզ ծանոթ չէին հեքիաթի վաղ գրառումներում: Այսպիսին է, օրինակ, «Ըննոն ու Դոնոն» հեքիաթը (Վարդանյան Նվ. 2009), որտեղ ծաղրվում է պատահականության բերումով թագավոր դարձած հերոսը: Գյուղի հոտաղ Ըննոյին թագադրում են հեքիաթում շատ տարածված մի եղանակով. թռչունը՝ որպես աստվածային կամքի բանբեր, նստում է նրա ուսին: Եթե ավանդական հեքիաթի համատեքստում թռչնի ընտրությունը միշտ արդարացի է, ապա նորօրյա պատումներում այս մոտիվը ծաղրի է ենթարկվում հենց բախտախնդիր թագավոր Ըննոյի ընկեր՝ նահանգապետ Դոնոյի կողմից: Վերջինս թույլ

չի տալիս հանգուցյալներին թաղել այնքան ժամանակ, քանի դեռ նրանց ականջին մի բան չի շնչացել: Երբ հետաքրքրվում են, թե ինչ է ասում հանգուցյալների ականջին, պատասխանում է.

«- Թաքավորն ապրած կենա, մարթիկ որ մեռնում են, գնում են էն դույնեն:

Ասում է.- Հա:

- Դե էնտեղ էլ գալու են շրջապատեն, հարցնեն աշխարհում ի՞նչ կա, ո՞վ է նազիր, ո՞վ է վեզիր:

Ասում է. – Հա՛, բայց դու ի՞նչ պիտի ասեիր:

Ասում է. – Մեռած մարթկանց ականջին պիտի ասեի, որ եթե հարցնեն, ասեք էն աշխարհի հերն անիծած, որ Ըռնոն ու Դռնոն են ղեկավարում» («Ըռնոն ու Դռնոն», Վարդանյան Նվ. 2009, 149):

Իրապատում հեքիաթների պարագայում նկատելի է նաև հեքիաթային հին կաղապարներով նոր սյուժեների ձևավորման գործընթացը: Հետաքրքրական է Դիլիջանում 2005 թ. Վարդանյան Նորայի պատմած «Եղեռնի օրերի հեքիաթը», որն, ինչպես բանասացն էր հավաստիացնում, իրականում տեղի ունեցած դեպք է եղել: Սյուժետային գիծը և հեքիաթի ընդհանուր կառուցվածքը շատ մոտ էին անմեղ հալածված աղջկա հեքիաթներին: Իրական, պատմական իրադարձությունների հիմքով ստեղծվել էր մի նոր, «իրապատում» հեքիաթ, ուր պատերազմի հանգամանքներով իրարից բաժանված ամուսիններն անցնում են փորձությունների միջով, կնոջը երկու անգամ փախցնում են և փորձում տիրել. առաջին անգամ մի թուրք, որից կինը յոթ տարի հեռու է մնում՝ պատճառաբանելով իր կրոնական ըմբռնումները, երկրորդ ան-

գամ՝ թուրք թագավորը: Ի վերջո հերոսուհին հանդիպում է ամուսնուն և առանց ճանաչելու՝ իր երկու փրկարարներից դարձյալ նրան ընտրում որպես ամուսին, ավելի ուշ ամուսնուն ճանաչում է իր ասեղնագործած թևքերից:

Մի երկար և արկածային սյուժե է սա, որը եթե նույնիսկ հիմքում ունեցել է իրական պատմություն, ապա ժողովրդի շուրթերին լիովին հեքիաթային հատկանիշներ է ձեռք բերել: Հատկանշական է, որ հեքիաթային վաղնջական կաղապարներն այսօր էլ կարող են հիմք հանդիսանալ նոր սյուժեների կազմավորման համար:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ այսօր իրապատում հեքիաթը ժողովրդի կողմից սիրված ու տարածված տեսակ է, որը շարունակում է ապրել, կենցաղավարել և նույնիսկ հարստանալ նոր պատումներով:

Կենդանական հեքիաթներ: Ի տարբերություն նախորդների՝ հեքիաթի այս տեսակն այսօր արդեն նվազագույն պատումների քանակ է արձանագրել, որն էլ նշանակում է, որ մեր օրերում ժանրային այս տարատեսակն աստիճանաբար մոռացության է տրվում ժողովրդի կողմից: Անշուշտ, կենդանական կերպարները՝ որպես մարդկային բնավորությունների խորհրդանիշներ, լայնորեն օգտագործվում են հատկապես մեր օրերի մանկագիր հեղինակների ստեղծագործություններում, սակայն ժողովուրդը գերադասում է կյանքի մասին պատմել հենց մարդկային կերպարների միջոցով և, ինչպես տեսանք, հիմնականում՝ իրապատում, կենցաղային հյուսվածքներում:

Նորօրյա գրառումներում առկա է ընդամենը չորս կենդանական հեքիաթի սյուժե, որոնց բոլորում էլ կենդանիներին

զուգահեռ պատումներում գործում են նաև մարդկային կերպարներ: Դրանցից մեկը չափաժո է: Խորամանկ աղվեսի մասին հայտնի պատումն է դա, որը հարսից գողանում է ոսկիները, իսկ գայլին խաբում, թե դրանք ձեռք է բերել՝ լճի մեջ իջեցնելով իր պոչը: Գայլը ձմռան ցրտին պոչը մտցնում է լիճը, որը սառցակալում է («Խորամանկ աղվեսը» (ԺՀԺԳ N° 14): Մեկ տարբերակով ագռավի ու իր ձագի հայտնի սյուժեն է գրանցվել («Ագռավի ձագը», ԺՀԺԳ N° 6), որն այսօր ավելի լայն տարածում ունի իր կարճառոտ առածային տարբերակով՝ «Ագռավին ասին թագը ամենասիրուն ձագի գլխին դիր, իր ձագի գլխին դրեց»: Մյուս երկու պատումներում հարաբերության մեջ են դրվում մարդն ու կենդանին, որտեղ մարդը զիջում է կենդանուն իր բարոյական հատկանիշներով. նա փոքրոգի է ու երախտամոռ («Առյուծը պահեց, ախպերն սպանեց» (ԺՀԺԳ N° 6), «Արջն ու գյուղացին» (ԺՀԺԳ N° 14):

Գ. Ավանդական բանաձևերը հեքիաթի մերօրյա գրանցումներում

Հայտնի է, որ հեքիաթի ժանրային յուրահատկությունը մեծապես պայմանավորված է հատկապես հեքիաթը բացող և փակող ավանդական կայուն բանաձևերով: Ինչպես միշտ, այսօր էլ բանասացներն ամենից հաճախ հեքիաթասացությունը սկսում են «Լինում է, չի լունում» բանաձևի բարբառային բազմազան տարբերակներով («Ըլել չի լել՝ մե նախրչի» («Նախրչու հեքիաթը», ԺՀԺԳ N° 30, «Կըլլի չիլլի մե թաքավորմ կըլլի» («Ալաբալըղ ձուկը» (ԺՀԺԳ N° 10), «Իլալ ա, իլալ չի, մի տղա յա իլալ» («Պիլտոս» (ԺՀԺԳ N° 9): Հեքիաթների մի մասում այս բանաձևը բացակայում է, և հեքիաթն ուղղակի սկսվում է հերոսի հիշատակմամբ. «Թաքավորին մեկն կէլե լըլին հետ պըտըտի կը...» («Թաքավորն ու դըմըրչին» (ԺՀԺԳ N° 10): Սկսվածքային բանաձևերի հարցում մերօրյա հեքիաթը առանձնապես տարբերություն հանդես չի բերում վաղ գրառումներից:

Հեքիաթների զգալի մասում բացակայում է նաև ավարտի ավանդական բանաձևը: Բանասացներից շատերն այսօր հեքիաթն ավարտում են առանց որևէ փակող բանաձևի: Որոշ դեպքերում, հատկապես իրապատում հեքիաթների պարագայում, բանասացները գերադասում են ամփոփել հեքիաթը՝ նրա իմաստից բխող դատողություններ անելով «Ա՛յ, ճակատագիրը տա յա, որ ինչ լսում են, էն էլ պիտի քաշեն» («Ճակատագիր», Վարդանյան Նվ. 2009, 132), «Աստծո ճամփով էթողը կյանքում չի կորչի» («Աստծուց ունեցվածք խնդրող մարդը», ԺՀԺԳ N° 32), կամ հեքիաթի գաղափարախոսությունից ելնելով, խրատներ ու օրինանքներ ուղղելով երիտա-

սարդ ունկնդիրներին («Հարստությունը էտենց բան ա, բալիկ ջան, բարուլամիշ չպիտի ըլնես, կամաց-կամաց ապրի ոնց որ պետքն ա: Ապրե՛ս, զորանա՛ս, բարի բախտ ըլնի քեզի» («Հարուստի ու քյասիբի հեքիաթը» (Վարդանյան Նվ. 2009, 143), «Երջանկությունը վեր կյա ձեզ վրա» («Հազարան բլբուլ», ԺՀԺԳ № 12):

Կան սակայն բազմաթիվ հեքիաթներ, դրանք հատկապես վարպետ հեքիաթասացների կողմից պատմվածներն են, որոնք ամփոփվում են տիպական ավանդական բանաձևերով, ինչպիսին, օրինակ, որոշ հեքիաթներում հանդիպող «Ըտե տրանք հասնում են իրանց մուրազին, տյուք էլ հասնեք ձեր մուրազին» («Մարթ ու կնիկ» (ԺՀԺԳ № 37) ավարտի ավանդական բանաձևն է՝ շատ տարածված մեր հեքիաթների վաղ գրառումներում:

Քիչ չեն նաև ավանդական բանաձևերի նոր տարբերակները: Այդպիսիք հատկապես ստեղծում են վարպետ բանասացները, որոնք թեև հեքիաթի գործողությունների հարցում աշխատում են հնարավորինս հավատարիմ մնալ իրենց աղբյուրին, սակայն ավարտի բանաձևերի պարագայում իրենց ավելի ազատ են զգում: Հեքիաթի մերօրյա գրանցումներում բազմիցս կարելի է հանդիպել երկնքից ընկնող երեք խնձորների խաղարկային տարբերակների («Երկնուց երեք խնձոր կնգնա. մեկ ասողին՝ ինձ, մեկ՝ լսողին՝ քեզ, մեկ լե ուզողին» («Զրիհան ու Արիհան» (ԺՀԺԳ № 27): Մերօրյա հեքիաթասացները գրեթե նույնությամբ չեն կրկնում մեր հեքիաթին այնքան բնորոշ այս բանաձևը. նրանք ունկնդիրն ուզում են հրամցնել ավելի նոր տարբերակներ, հաճախ փոխում են խնձորների քանակը և նորանոր հասցեատերեր են գտնում

խնձորները բաշխելիս, ինչպես, օրինակ, «Երգնուց ընգավ յոթը խնձոր. մեկը պատմողին, մեկը լսողին, մեկը երգինք, մեկը՝ գեղին, մեկը արար աշխարհքին, երգուան էլ էրեխեքին» («Թակավորի տղի հեքիաթը» (ԺՀԺԳ № 19), «Երգնուց կնգնա յոթ հատ խնձոր: Մեկ պատմողին, մեկ լսողին, մեկ արար աշխարհին, չորս հատն էլ թակավորին, որ բուժեց ու լուծեց աղքատի վրեժը» («Արդար արունը գետին չի մնա» (ԺՀԺԳ № 19), «Ասսանից մի լավ վեղոր խնձոր է վեր գալի, էրկու կարմիրը փեսին ու հարսին, էն մնացածը ժողովրդին» («Աշուղ Ղարիբի հեքիաթը» (ԺՀԺԳ № 24): Խնձորներ բաշխելիս արդի բանասացները երբեմն հիշատակում են նաև հեքիաթ գրառողին («Երկնքից ընկնում ա երեք խնձոր. մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ գրի առնողին» («Անմեղ հալածված աղջկա հեքիաթը» (ԺՀԺԳ № 33):

Հեքիաթն ամփոփող ավարտական բանաձևերը բազմերանգ դրսևորումներ ունեն բանասաց Թերեզա Դավթյանի հեքիաթներում: Նա բոլոր հրաշապատում հեքիաթներն ավարտում էր մեկը մյուսին չկրկնող բանաձևերով, որոնք հանպատրաստից հորինումով անմիջապես ձևափոխում էր: Այսպես՝ դրանցից մեկում նա խնձորները փոխարինել էր առողջությամբ. «Ասսանից վեր գա իրեք առողջություն, ամեն մեկիս մի կտոր» («Գըղըկ» (ԺՀԺԳ № 12): Երկնքից ընկնող խնձորները հիմնականում առողջության և երկարակեցության գրավական են, այնպես որ, բանասացն այնքան էլ չի հեռացել ավանդական բանաձևի իմաստաբանությունից: Կիրառում էր նաև իր կողմից փոփոխված այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են. «Խերն ըստի՝ Հայաստանումը մնա, շառը Ադրբեջանում» («Շահվելադ ու Բանգլիբոզ» (ԺՀԺԳ № 12),

«Նրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր առողջության մուրազին» («Թագավորի իրեք տղեն» (ԺՀԺԳ № 12) և այլ տարբերակներ:

Հազվադեպ, բայց հանդիպում են նաև հեքիաթն ամփոփող այնպիսի բանաձևեր, որոնցում հեքիաթասացը հեքիաթի ժամանակը հասցնում է մինչև իր օրերը և նույնիսկ պնդում, թե անձամբ է տեսել հեքիաթի հերոսներին («Սրանք յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում ու մինչև օրս ուրախ-զվարթ ապրում են» («Ճուկո», ԺՀԺԳ № 32), «Երեկ չէ առաջին օրը ընդեղից եմ եկել, սաղ-սալամաթ են, մինչև հմի էլ ապրում են: Ասսանից իրեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, մեկը՝ շատ խոսողին, մեկն էլ՝ լսողներին» («Թագավորի աղջիկը և ավազակը», ԺՀԺԳ № 1): Այսպիսի ավարտի ավանդական բանաձևերը, որ հայ ժողովրդական հեքիաթներին այնքան էլ բնորոշ չեն, առավելապես առատ են ռուսական հեքիաթներում. «И так справлял он неведанную свадьбу. Были и мы на свадьбе. И оставил я его пить да веселиться» (Рошиану Н. 1974: 142):

Հեքիաթի մերօրյա գրանցումներում առավել հազվադեպ են չափածո սկսվածքներն ու ավարտի բանաձևերը: Ներկայում «Հեքիաթ-հեքիաթ պապս» հեքիաթի ավանդական չափածո նախաբան-սկսվածքը առանձին կենցաղավարում է ստացել: Եթե հնում այն նախորդել է հեքիաթասացությանը՝ նպատակ ունենալով ունկնդիր լսարանին նախապատրաստել մուտք գործելու հեքիաթի հրաշալի ու զվարճալի աշխարհը, ապա նախորդ դարի գրառումներից սկսած արդեն այն գրանցվել է որպես հեքիաթներից անկախ միավոր, որը բանագետները տպագրել են հեքիաթներից զատ (այս մասին տե՛ս Խենյան Է. 2011, 206-229):

Մեր ձեռքի տակ ունենք հինգ այդպիսի նոր գրառում՝ Երևանից (2005), Դիլիջանից (2006), Կոտայքից (2010) և Գյումրիից (Երկու տարբերակ, 2014): Գրառումների վերաբերյալ ծանոթագրական տվյալները տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում, էջ 145: Դրանք սկսվում են «Հեքիաթ-հեքիաթ պապս» (Դիլիջան, Գյումրի) կամ «Նաղլ-նաղլ պապս» (Երևան, Կոտայք) բանաձևով և շարունակվում նույնատիպ կուտակային հյուսվածքով. հերոսը՝ քուռակը տակը, պատրաստվում է գնալ Երևան, որ հավերի համար կուտ բերի, որ հավերը ձու տան, ձուն տա թոռնիկին, թոռնիկն ուտի, մեծանա:

*Հեքիաթ-հեքիաթ պապս,
Աշխարհի քուռակը փակս,
Հեծնեմ էրթամ Երևան,
Երևանից չալու բերեմ,
Չալուն փամ հավերին,
Հավերն ածեն, հավկիթ փան:
Հավկիթը փամ թոռնիկիս,
Թոռնիկս ուրե, մեծանա:
Հեքիաթ-հեքիաթ պապս,
Աշխարհի քուռակը փակս (ՀՀՊԺԳ № 5):*

Մի քանի տարբերակներում ձուն նույնպես վաճառվում է: Հերոսն այն վաճառում է, որ իր համար կոշիկներ գնի:

*...Յաիցան փանիմ, ծախեմ,
Ընծի զույգ՝մ կոշիկ առնեմ (ՀՀՊԺԳ № 4):*

Երկու տարբերակներում կուտակային հյուսվածքը հանգեցնում է նրան, որ հերոսը մոմ կամ գառ է ձեռք բերում, որ Աստծուց եղբայր խնդրի:

*...Ձուն փամ դարփնչուն,
Դարփնչին ինձ շխտիկ փա:
Շխտիկը փամ հարսներին,
Հարսներն ինձի գաթա փան:
Գաթան փամ հովիվին,
Հովիվն ինձի գառ փա:
Գառը փամ Աստծուն,
Աստված ինձ ախպեր փա:
Ախպեր, ախպեր, ջան ախպեր,
Իմ ծամը քեզ խարեզան² ախպեր (ՀՀՊԺԳ № 2):*

Տարբերակներից մեկը սկզբից ևեթ երգիծական մոտիվներով է զարգանում. էշի քուռակով ջրաղաց գնացած հերոսի ոտքերը մի կատաղած մարդ ջարդում է, որ մյուս անգամ էշով ջրաղաց չգնա.

*Հեքիաթ, հեքիաթ պապս,
Իշի քուռակը փակս,
Նստի գնացի ջրաղաց,
Ջրաղացում մի կատաղած
Լինգը քաշեց, ոտերս աղաց,*

² Խարեզանը դայիշի կտորից ա, բարակ, որ կապում են փայտերի ծերին ու քշում են ձիերին (ծանոթագրությունը բանասացինն է):

**Ասավ. «Շուն շանորդի
էլ էշով ջաղաց չգաս» (ՀՀՊԺԳ № 1):**

Ինչ վերաբերում է մնացած չորս տարբերակներին, ապա պետք է ասել, որ դրանք էլ, անշուշտ, ինչ-որ երգիծական երանգավորում պարունակում են: Ընդհանուր առմամբ հեքիաթի միկրոմոդելներ են հիշեցնում. պապի հեքիաթներով զինված և աշխարհի (դաշտի) քուռակը հեծնած հերոսը մեկնում է և վերադառնում ձեռքբերումներով: Անշուշտ, այս զվարճալի նախաբանը խոսում է բանասացների՝ դեպի հեքիաթն ունեցած վերաբերմունքի մասին՝ թեթև, հումորով լեցուն:

Բանասացներից մեկի տարբերակում թեթև հյուսվածքը վերջում լրջանում է՝ «Ախպեր-ախպեր» խաղիկանման հատվածի հավելումով: Աստծուց խնդրած և սպասված եղբայրը չի արդարացնում հույսերը. ամեն ինչ սիրած աղջկա համար է անում, մինչդեռ ծնողին անտեսում է:

**- Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Բերթի կլխին խա՛ն ախպեր,
(Ճաղչի կլխին խա՛ն ախպեր)
Հմեն փարար սիրողիփ,
Մեկը չպերիի ծնողիփ (ՀՀՊԺԳ № 3):**

Հեքիաթի չափածո սկսվածքն այսօր անկախ կիրառությանը բավական տարածված է ժողովրդի մեջ: 2007-2009թթ. Արմավիրի մարզում բանահավաքչություն իրականացրած ՀԱԻ աշխատակիցներ Սվետլանա Վարդանյանն ու Հասմիկ Մարգարյանը փաստում են, որ թեև հեքիաթները հիմնական-

նում մոռացության են տրված, սակայն հաջողվել է գրառել «Հեքիաթ-հեքիաթ պապս» հեքիաթի չափածո սկսվածքի վեց նոր տարբերակ (Վարդանյան Ա., Մարգարյան Հ. 2010, 538):

Ի դեպ, հետաքրքրական է, որ բանասացներն այս չափածոն կիսահեգնական տոնով ասում են հատկապես այն ժամանակ, երբ բանահավաքը խնդրում է նրանց հեքիաթ պատմել՝ այդպիսով փորձելով հումորով և քաղաքավարությամբ մերժել բանահավաքի խնդրանքը, ակնարկելով, թե դա պապական հին զբաղմունք է, որին իրենք լուրջ չեն վերաբերվում: Եվ իսկապես, հինգ տարբերակներից միայն մեկի բանասացն է՝ Աբելյան Հակոբը, որ սկզբնապես այս նույն եղանակով մերժելով բանահավաքներիս՝ ի վերջո տեղի տվեց և պատմեց հիանալի ավանդական հեքիաթներ: Մյուս տարբերակների բանասացները հեքիաթներ չեն պատմել:

Չափածո այս նախաբանը, որ ինչպես վկայում են դեռ նախորդ դարի գրառումները, անկախ դրսևորմամբ դարձել էր նաև մանկական լսարանի սեփականությունը (Գրիգորյան Ռ. 2007, 262-269, իր կիրառմամբ շատ մոտ է հեքիաթի ամենատարածված սկսվածքային բանաձևի՝ դարձյալ մանկական լսարանում անկախաբար տարածված երգիծական տարբերակին: Երեխան, որ իբրև պատրաստվում է հեքիաթ պատմել, հեքիաթն ավարտում է դեռևս չսկսած. «Լինում է, չի լինում... Բա որ չի լինում, ինչ պատմեմ»՝ այդպիսով հիասթափեցնելով և ծիծաղելի դրության մեջ դնելով հեքիաթ լսելու պատրաստված ունկնդրին: Չնայած որ հեքիաթը եղել է և կմնա մանկական լսարանի ամենասիրված ժանրը, այդուհանդերձ հեքիաթային իրականությունը կասկածի ենթարկող բանաձևը և դրանից բխող չեղած բաների մասին պատմելու

կարծեցյալ անհմաստությունը երեխաներին երգիծելու առիթ են տալիս:

Ի տարբերություն «Հեքիաթ, հեքիաթ պապա...» չափածո նախաբանի, որն ինչպես նշեցինք, այսօր բացառապես անկախ դրսևորում է ստացել, մեր ուսումնասիրած նյութում առկա է հեքիաթի ավարտի չափածո, որով բանասացն ամփոփել է իր պատմած հեքիաթները, և որին այլուրեք չէինք հանդիպել:

***Չանա-զանանի իճնդախ³ .
Փխսի-փայլեվան իճնդախ,
Կոնդի Կարոն, Չոբան Սարոն,
66 յեռլագան, գաղթագան,
Եգան մեզի հեդ միասին,
Հեքիաթը լսեցին:***

(«Ղամփերին», «Թակավորի տղի հեքիաթը», ԺՀԺԳ № 19):

Չափածոն հիշատակվում է նույն բանասացի երկու հեքիաթների վերջում: Ընդ որում, հեքիաթներից մեկում այն հաջորդում է «Երկնքից ընկավ յոթ խնձոր...» բանաձևին, մյուսում՝ նախորդում:

Այս հետաքրքրական չափածոն իր մեջ կրում է հեքիաթասացության «ծեսի» նկարագիր: Հեքիաթասացը հիշատակում է, թե ինչպես է ժողովուրդը հավաքվել և լսել հեքիաթը: Դարձյալ ուրախ, երգիծական շեշտադրումն ակնհայտ է հատկապես հավաքված բազմության անունների մակարդա-

³ Իճնդախ –միասին (ծանոթագրությունը՝ բանասացի):

կում՝ Ջանի-զանանի, փիսիկ-փահլևան, Կոնդի Կարո, Չոբան Սարո, իսկ ահա տեղական (յեռլագան) և գաղթական բնակչության քանակը՝ 66, որոնք եկել են հեքիաթ լսելու, վկայում է, թե ինչ բազմություն է հնում հավաքվել հեքիաթասացության ժամանակ:

Այսպիսով՝ ավանդական բանաձևերը, որոնք հեքիաթի պոետիկայի անբաժան մասն են կազմում, մեր օրերում թեև խիստ նվազել են, սակայն վարպետ բանասացների հեքիաթներում ոչ միայն շարունակում են կենցաղավարել, այլև ձեռք են բերում նոր և ժամանակակից տարբերակներ:

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ. ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՄԱՏՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐՕՐՅԱ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք հեքիաթների մերօրյա գրառումներում տարբերակների քանակով մյուսներին զգալիորեն գերազանցում են ճակատագրի նախասահմանվածությանն ու անխուսափելիությանը վերաբերող պատումները: Հեքիաթների դիպաշարերը հետևյալն են:

1. **ATU 930** - Թագավորին կանխատեսում են, որ նրա նորածին աղջիկը ամուսնանալու է մի աղքատ գյուղացու տղայի հետ: Թագավորը երկու անգամ պատվիրում է սպանել աղքատի տղային, սակայն տղան ողջ է մնում և նախասահմանումը կատարվում է (ՀԺՀ II 1959, № 24, ՀԺՀ V 1966, № 70, ՀԺՀ VI 1973, № 101, ՀԺՀ VII 1979, № 27 և այլն: Նոր գրառումներում առկա է երկու տարբերակ. «Հոր փորողը հորը գնգնի», ԺՀԺԳ № 19, «Ճակատագիր», ԺՀԺԳ № 32):

2. **ATU 930A** – Մի աղքատ գյուղացու տանը իջևանած արքայազնը երազով տեղեկանում է, որ իր ճակատագիրը այդ տան հիվանդ աղջիկն է: Արքայազնը դաշույնով խոցում է աղջկան, հարվածից հիվանդի խոցն արնահոսում է, և նա առողջանում է: Ավելի ուշ արքայազնը տեսնում է աղջկան և ջճանաչելով ամուսնանում նրա հետ: Իրականությունը բացահայտում է մարմնի սպին (ՀԺՀ XIV 1999, № 12, ՀԺՀ XV 1998, № 11, Գուրունյան 1991, 158-160 և այլն: Նոր գրառումներում առկա է երկու տարբերակ («Ճակատագիր» ԺՀԺԳ № 12, «Ճակատագիրը», ԺՀԺԳ № 28):

3. ATU 934B - Հայտնի են դառնում նորածնի մահվան օրն ու հանգամանքները (տղան պետք է մահանա 10, 20, 22 տարեկանում կամ ամուսնության օրը), հերոսների ջանքերը՝ փոխել ճակատագիրը, ձախողվում են: Տղային թաքցնում են, պաշտպանում, փակի տակ պահում, բայց միևնույն է, մահը վրա է հասնում ամենաանհավանական թվացող հանգամանքներում (մոմակալը գայլ է դառնում, մրգի զամբյուղից օձ է դուրս գալիս, խեղդվում է գինուց, պատահական ընկած դանակից և այլն): (ՀԺՀ V 1966, № 78, ՀԺՀ XI 1980, № 62, ՀԺՀ VII 1979, № 78 և այլն: Նոր գրառումներում առկա է ութ տարբերակ («Ճակատագիր», ԺՀԺԳ № 1, «Ճակատին ինչ գրած ա, էլ փոխել չի լինի», ԺՀԺԳ № 14, «Բախտ նայողի հեքիաթը», ԺՀԺԳ № 16, «Ճակտի գրածը չի ջնջվի», ԺՀԺԳ № 19, «Ճակատագիրը», ԺՀԺԳ № 22, «Գուշակը», ԺՀԺԳ № 22, «Ճակատագիր», ԺՀԺԳ № 36 «Ճակատագիր», ԺՀԺԳ № 37):

Անշուշտ ճակատագրի նախասահմանվածության հեքիաթների արմատները հանգում են հնագույն հավատալիքներին ու նախնական պատկերացումներին, որոնք, չնայած իրենց վաղնջականությանը, հայ ժողովրդի մեջ կենդանի են նույնիսկ մեր օրերում: Ի՞նչ զարգացում են ապրել ճակատագրի մասին հավատալիքները, ինչպիսի՞ անձնավորումներով է հանդես գալիս նախասահմանողը կամ կանխատեսողը հայ ժողովրդական հեքիաթներում, որքանո՞վ է այսօր հեքիաթը պահպանել հնագույն այդ պատկերացումները, և ինչո՞վ է պայմանավորված հեքիաթների կենսունակությունը մեր օրերում: Հարցերին կփորձենք պատասխանել հետագա շարադրանքում:

Ճակատագիր սահմանողի անձնավորումները հեքիաթների տարբերակներում⁴: Հայ ժողովրդական հեքիաթներում ճակատագրի նախասահմանվածության հեքիաթների տարբերակների գերակշիռ մասում ճակատագիրը ներկայացվում է որպես նախօրոք գրված գիր. այն նախասահմանվում է՝ գրվելով թղթերի վրա, դավթարում, կամ ուղղակի նորածնի ճակատին: Մյուս պատումներում գրվելու հանգամանքը չի հիշատակվում. ճակատագիրը հայտնում են հրեշտակները, բախտագուշակը, աստղագուշակը, կամ էլ նախասահմանումը հայտնի է դառնում երագի միջոցով:

Հեքիաթների մեծ մասում որպես ճակատագրեր սահմանող հանդես է գալիս հեռավոր, անմարդաբնակ վայրում (անտառում, սարի վրա, ծովի մոտ, անապատում) ապրող ալեհեր, գզգզված ծերունու կերպարը: Նա իր ձեռքի թղթերի վրա ինչ-որ գիր է գրում ու գցում ծովը կամ քամուն տալիս (մեկ տարբերակում ծերունին դերվիշ է. «Ղըսմաթին չըփախեն», ՀԱԲ 1984 հ. 16, № 18): Երբ հերոսը (թագավորը, արքայազնը) խնդրում է հայտնել գրվածի բովանդակությունը, և տեղեկանալով իրադարձությունների անցանկալի զարգացմանը՝ խնդրում է փոխել այն, ծերունին վճռականապես մեր-

⁴ Հայ ժողովրդական հեքիաթներում ճակատագիրը տարբեր կերպարներով է հանդես գալիս: Որպես բախտի անձնավորում՝ հեքիաթներում հիշատակվում է **դովլաթը**: Այս ոգու առկայությունը տան մեջ երջանկություն է բերում, հակառակ դեպքում մարդիկ բեղովլաթ են լինում՝ անհաջողակ և չքավոր: Բախտ փնտրող հերոսները հաճախ հանդիպում են **Տալլաքին**, որը հայկական հեքիաթներում մի ջրվոր է. բահով լայնացնում և նեղացնում է առունները և դրանով մարդկանց ունեցվածքը նվազեցնում կամ առատացնում: Հեքիաթային այս կերպարները, սակայն, ոչ թե նախասահմանում, այլ տնօրինում են մարդու բախտը նրա ողջ կյանքի ընթացքում:

ժում է՝ գրեթե բոլոր հեքիաթներում արտասանելով նույն խոսքերը՝ գրվածը չի ջնջվի (ի դեպ, հեքիաթների մի մասը հենց այսպես էլ վերնագրված է. տե՛ս, օրինակ, «Մարդիս ճակատի գրածը չի ջնջվի», ՀԺՀ II 1959, N 24, «Մարդիս ճակատին ինչ գրած է՝ էնենց էլ կըլնի», ՀԺՀ III 1962, , N^o 6):

Որոշ պատումներում ճակատագիր սահմանողը մեկ մարդ չէ: Նախասահմանողները երկու հոգի են, նրանցից մեկը գրում է, մյուսը ջնջում («Ճկտակյիրը», ՀԺՀ VII, 1979, N^o 27), երկու հրեշտակ («Ճակատագիր», ՀԱԲ 19, 1999, N^o 11(13): Երբեմն էլ՝ նրանք երեքն են: Այսպիսի պատումներում հիմնականում ոչ թե հերոսն է հանդիպում նախասահմանողներին, այլ նրանք են այցելում նորածնի տուն և երեխայի ճակատին գիր են գրում (ՀԺՀ I 1959, N^o 33, ՀԱԲ 19 1999, 64, «Գեչի բալի ճակատագիրը»):

Հեքիաթի մի քանի տարբերակներում նախասահմանողները հրեշտակներն են. երկու հրեշտակ, որոնք գրում են թղթի վրա (ՀԱԲ 19 1999, N^o 11), հոգեառ հրեշտակ («Հոգեառը», ՀԺՀ VII, 1979, N^o 68), փոքրիկ տղա՝ ճակատագրի պահպան հրեշտակ (ՀԺՀ X 1969, N^o 14) և այլն:

Հեքիաթների մի մասում ճակատագիրը ոչ թե նախասահմանվում, այլ կանխագուշակվում է: Այս հեքիաթներում սովորաբար հանդես է գալիս բախտագուշակը, աստղագուշակը կամ պարզապես մի իմաստուն մարդ (լալեն, գլիդող մարդ), որ կարողանում է կարդալ կամ գուշակել աստվածային նախախնամությունը (ՀԺՀ IV 1963, N^o 45, ՀԺՀ V 1966, N^o 70, Մալխասյան Ս. 1958, 28-30): Եվ վերջապես՝ ճակատագրի կանխատեսումը կատարվում է երազում այցելած ծերունու (հրեշտակի, մի մարդու) միջոցով («Աղբեր-տղա և Քառսուն-

ծամ Փարի», ՀԺՀ I, 1959, Հավելված N 1, «Զաքարը», ՀԺՀ I, 1959, Հավելված N 3):

Անկախ նրանից, թե ով է ճակատագիր նախասահմանողը, բոլոր հեքիաթներում նա կատարում է միևնույն գործառույթը. գրում կամ հայտնում է հերոսների ամուսնության կամ մահվան հանգամանքները:

Հեքիաթների՝ այլ ժողովուրդների տարբերակներում էլ հաճախ ճակատագիրը սահմանվում է որպես գիր, ինչպես օրինակ՝ պարսկական, սերբական, արաբական, թուրքական հեքիաթների պարագայում⁵ (Nemanja Radulović 2014: 29, Закирова 2010): Բնորոշ է, օրինակ, պարսկական «Ճակատագրից չես փախչի» հեքիաթը, որտեղ ճակատագրեր սահմանողը տառացիորեն հայկական գրողի զուգահեռն է. նա հանդես է գալիս ալեհեր ու գզգզված ծերունու կերպարով, որը թղթերի վրա գրում է ու դրանք կողքից բխող աղբյուրի ջուրն է գցում (Պարսկական ժողովրդական հեքիաթներ 2010, 143):

Հեքիաթների ուսումնասիրությունն ի հայտ է բերում նաև կերպարի այլ դրսևորումներ: Հեքիաթի հնդկական մի տարբերակում, օրինակ, նախասահմանողը մի ճգնավոր է, որ տերևները գցում է և ուշադիր նայում, թե ինչպես են դրանք ցած ընկնում՝ այդ կերպ կարդալով մարդկանց ճակատագրերը («Թագավորը, որն ուզում է ավելի ուժեղ լինել, քան ճակա-

⁵ Ուսումնասիրող Նեմանյա Ռադուլովիչը նմանատիպ դրսևորումներ է գտնում նաև հին հնդկական բանավոր ավանդության մեջ և պնդում է, թե Բալկանյան երկրներում տարածված այս մոտիվը սկիզբ է առնում արևելքից, ուր մինչ օրս տարածված են նմանատիպ հավատալիքներ (Radulović, Nemanja 2014: 29-44):

տագիրը», Brown Fairy Book 1914: 300): Հին եգիպտական «Դատապարտված արքայազնի հեքիաթում» նորաձնի մահվան հանգամանքները կանխատեսում են պալատ եկած ճակատագրի յոթ աստվածուհիները՝ յոթ Խատիսերը (Сказки древнего Египта, <http://www.legendy.net/egipt skazki 5.php>): Սահմանողը անձնավորվում է նաև որպես ճակատագրեր կողող դարբին («Սվյատագոր», Русские народные сказки, <http://ruskazka.narod.ru/svyatogor.html>), որպես կախարհներ («Ոսկե մագերով սատանան», Գրիմ եղբայրներ 1981, 122), որպես երեք ծերունի մուրացկան, որոնք որոշում և հայտնում են նորաձնի անունն ու ճակատագիրը («Հարուստ Մարկոն և Անբախտ Վասիլին», Народные русские сказки А.Н.Афанасьева в трех томах, т. 2, 1985: 346, № 305):

Անշուշտ, նախասահմանողների այս կերպարները սերում են ճակատագրի մասին հնագույն պատկերացումներից: Ուշագրավ է տեսնել, թե ինչպիսին են եղել այդ պատկերացումները, և որքանով է հեքիաթն իր հրաշալի հյուսվածքում պահպանել դրանք՝ հասցնելով մինչև մեր օրերը:

Ճակատագրի նախասահմանվածության մասին հնագույն պատկերացումները: Ճակատագրի նախասահմանվածության հարցը մարդուն հուզել է հնագույն ժամանակներից սկսած: Աշխարհի տարբեր ժողովուրդներ ունեցել են ճակատագրի մասին իրենց պատկերացումները: Վաղ առասպելներում ճակատագիրը պատկերացվել է նյութականացած՝ որպես մանվող թել, գրված գիր, պտտվող անիվ, վառվող մոմ, թեփով լցվող կճուճ և այլն, որոնք էլ տնօրինվում էին ճակատագրի աստվածների կողմից (МНМ 1992: 471-474, Հարության Ս. 2000, 391):

Ճակատագրի աստվածները հնագույն առասպելներում հանդես են գալիս ինչպես իգական, այնպես էլ արական անձնավորումներով: Նրանք կամ միայնակ են հանդես եկել, կամ էլ պատկերացվել են որպես զույգ, ավելի հաճախ՝ երեք միասնական կերպարներ: Այսպես, օրինակ, հայտնի են խեթական ճակատագրի աստվածուհիները, հունական Մոյրաները, սկանդինավյան Նորները (nornir), հռոմեական Պարկերը (parcae). իգական աստվածություններ, որոնք հնագույն աղբյուրներում հիշատակվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով: Վերջին պարագայում նրանցից մեկը բախտը տալիս էր նախքան ծնունդը, մյուսը սկսում էր գործել կյանքի թելը ծնունդից հետո, երրորդը անդառնալի էր դարձնում ապագան (կտրում էր մանված թելը՝ որոշելով մահվան օրը (MHM 1992: 169):

Ճակատագրի՝ որպես թելի պատկերացումները պահպանվել են նաև մերօրյա լեզվական դրսևորումներում («Կյանքը կապել մեկին», «Կյանքի թելը կտրվել» ևլն (MHM 1992: 472): Նույն գործառույթն էին կատարում հռոմեական Ֆատերը, որոնք հանդես էին գալիս և՛ արական, և՛ իգական անձնավորումներով (MHM 1992: 559):

Հնագույն և ժամանակակից մի շարք ավանդույթներում ճակատագրի աստվածուհիներին փոխարինելու են գալիս ճակատագրի երեք կույսերը կամ ծեր կանայք, որոնք գնում էին այն տները, ուր նորածին կա և հերթականությամբ կանխատեսում էին նրա ճակատագիրը: Սլավոնական հավատալիքներում, օրինակ, որպես ճակատագրի կույսեր՝ հանդես են գալիս Ռոժանիցաները (Рожаница), որոնք ներկա են լինում երեխայի ծննդին և որոշում նրա ճակատագիրը, բուլղարական ավանդույթում դրանք Նարեչնիցաներն են: Նրանց նույնանուն

են Դոլյա և Նեդոլյա (Доля и Недоля-բախտ և դժբախտություն) հակադիր զույգերը (Афанасьев А. 1982: 372), որոնցից առաջինը բախտավորություն է շնորհում, երկրորդը՝ դժբախտություն (Потебня 1867: 153–196): Սրանք ռուսական հեքիաթներում սովորաբար հիշատակվում են որպես մանող կանայք (Афанасьев 1982: 374-375): Որպես թել մանող կերպար է պատկերվում նաև սլավոնական ճակատագրերի աստվածուհի Մոկոշը (МНМ 1992: 169): Նոր հունական ավանդույթում Մոյրաների հավատալիքը պահպանվել է ճակատագրի երեք կոյսերի կերպարներում (МНМ 1992: 472):

Ի տարբերություն ճակատագրի՝ որպես մանվող թելի պատկերացումների, մի շարք այլ երկրներում ճակատագիրը ընկալվել է որպես նախօրոք գրված գիր: Այսպես. Հարավարևելյան Ասիայի որոշ երկրներում ճակատագիրը կարող էր գրվել սրբազան ծառի տերևների վրա, մագաղաթում կամ հատուկ գրքում, քանդակվել քարերի վրա /սկանդինավյան ռուները (МНМ 1992: 472): Նման ընկալումը կապվում է գրի հնագույն պաշտամունքի հետ, որի հետքերը պահպանվել են մինչև անգամ մեր օրերում՝ թուղթ ու գրով մարդկանց ճակատագրերի վրա ներագրելու հավատալիքներում (Հարությունյան Ս. 2000, 30-31):

Հայ հնագույն հավատալիքներում ևս ճակատագիրը պատկերացվել է որպես հատուկ դավթարում կամ մարդու ճակատին նրա ծնունդից անմիջապես հետո աստծո կողմից նախօրոք գրված գիր («Գանգի վրա երևացող գծերը համարվում են ճակատագիր, որը մարդու համար անընթեռնելի է», Աբեղյան Մ. 1975, 49): Ըստ հայոց հավատալիքների՝ «Նա (ճակատագիրը– ՆԿ) ալեհեր և սպիտակամորուս մի ծերունի

է, նստած արևելքում՝ երկնքում կամ բարձր լեռան վրա, ոսկե աթոռին, երբեմն մի երիտասարդի հետ, որն իր Գրողն է: Բախտը հրամայում կամ արտաբերում է իր կանխորոշումները, իսկ Գրողը դրանք գրանցում է իր մատյանում» (Աբեղյան Մ. 1975, 50): Ճակատագրի գլխավոր կանխորոշումները կապված են մարդու կյանքի գլխավոր իրադարձությունների՝ ամուսնության ու մահվան հետ (Աբեղյան Մ. 1975, 50):

Հայ հեթանոս հավատալիքներում ճակատագրեր գրելու գործառույթը կատարել է Տիր աստվածը, որը եղել է հնագույն գրի և դպրության աստված Արամազդի «գրիչը»՝ քարտուղարը: Տիրը հիշատակվում է նաև որպես ճակատագրերի, երազատեսության, գուշակությունների աստված: Ագաթանգեղոսը հիշատակում է Տրի մեհյանը, որը կառուցված է եղել Երազամոյն կոչված տեղում (Ագաթագեղոս 1983, 437), որտեղ նրա պաշտամունքը կապվել է երազահանության հետ:

Հայկական Տիրին Ալիշանը նույնացնում է պարսից Դիր-Ֆալաքին՝ բախտի վերահսկողին (Ալիշան Ղևոնդ 2002, 149): Ե՛վ անվանական (Տիր-Դիր), և՛ գործառույթային մակարդակում նմանությունն ակնհայտ է (զարմանալի չէ հայկական և պարսկական հեքիաթներում կերպարների այդքան մեծ ընդհանրությունը)⁶:

⁶ Ի դեպ, Ֆալաքը՝ որպես ճակատագրի ոգի, հանդես է գալիս նաև հայկական այն հեքիաթներում, որտեղ հերոսը գնում է Աստծուց բախտ խնդրելու: Հեքիաթի տարբերակներում հերոսը հանդիպում է Աստծուն, Աստծո հրեշտակին կամ Ֆալաքին: Վերջինս մեծ մասամբ հանդես է գալիս որպես մի ջրվոր, որ բահով լայնացնում կամ նեղացնում է առունները ու դրանով մարդկանց ունեցվածքը նվազեցնում կամ առատացնում (ՀԺՀ II 1980, № 30): Սակայն հեքիաթներից մեկում Ֆալաքը նույնպես ներկայացվում է որպես բարձր սարի վրա նստած ճակատագրեր գրող ծերունի (Ֆալաք, ՀԺՀ II 1959, 319):

Տիր աստծու հետագա վերապրուկն է ժողովրդական բանահյուսության մեջ և հավատալիքներում շատ տարածված Գրողը. ինչպես նկատում է Ս.Հարությունյանը. «Հետագայում ...ժողովրդի մեջ տարածվում ու ընդհանրանում է նրա սոսկ մակդիրը, այն էլ ժողովրդական «գրող» ձևով, և բուն դիցանունը գրեթե իսպառ մոռացության է մատնվում» (Հարությունյան Ս. 2000, 408): Համապատասխանաբար դավթարը, որտեղ սահմանվում և գրի էին առնվում մարդու կյանքի իրադարձությունները, կյանքում կատարած լավ ու վատ արարքները, կոչվում էր Գրողի դավթար: Ավելի ուշ ժողովրդական հավատալիքներում Գրողը հիշատակվում է որպես մահը նախասահմանող և բացասական բնույթ ստանում՝ աստիճանաբար ընկալվելով որպես հոգեառի կերպար և նույնանալով հիվանդության ոգիներին: Վերջիններս էլ հիշատակվում են որպես գրողներ (այստեղից էլ՝ «գրող ու ցավ», «գրողի ծոց», «գրողի տարած») և այլ արտահայտություններ):

Ուշագրավ է Տիրի մեկ այլ հետնորդի՝ Շնոֆորի կամ Շնորհվորի գործառույթը, որը, լինելով ժանտախտ համաճարակի մարմնավորում, Գրողին համազոր, հիմքում՝ անվանական մակարդակում նույնիսկ, պահպանում է Տիրի նախնական՝ ճակատագիր շնորհողի գործառույթը: **Շնորհ՝ փուրք, ընծա**, արմատից կազմված այս բառն անշուշտ իր առաջնային ընկալմամբ դրական իմաստ է արտահայտել՝ որպես Աստծո կողմից մարդուն տրված կյանքի ուղի, և շատ հնարավոր է, որ եղել է Տիրի մակդիրներից մեկը: Հետագայում, ինչպես Գրողը, այն ևս կապվել է միմիայն մահվան հետ և դարձել հիվանդության ոգի:

Քրիստոնեական ժամանակաշրջանում Գրողի՝ որպես ճակատագրեր սահմանող-գրանցողի գործառույթը անցնում է Աստծո և մարդկանց քրիստոնեական միջնորդներին՝ հրեշտակներին (Հարությունյան Ս. 2000, 408), որոնք, ինչպես տեսանք, սյուժեների մի մասում ևս հիշատակվում են որպես գրողներ: Գրողի՝ որպես հոգեառի ուղղակի հետևորդ հիշատակվում է Գաբրիել հրեշտակը: Հավանական է, որ Գաբրիելը նախապես իր վրա վերցրել է Տիր-գրողի գործառույթը՝ որպես ճակատագրեր տնօրինողի (հմմտ. Աստվածաշնչում ծննդյան ավետիսի և կանխագուշակության փաստերը), սակայն հետագայում նույնպես ընկալվել է որպես հոգեառ: 20-րդ դարի ազգագրական գրառումներում փաստվում է ժողովրդական հավատալիքը այն մասին, թե «...երեխայի ծնվելուն պես Գաբրիել հրեշտակը իջնում է նրա մոտ, նրա ճակատի գիրը գրում և մի բուռը հող ձգում. այս հողը որ յերկիրը որ ընկնի, այն յերկրում պիտի մեռնի նորածինը...» (Լալայան Ե. 1931, 135):

Առասպելական կերպարի զարգացումը հայ ժողովրդական հեքիաթների համատեքստում: Նկատելի է, որ հեքիաթները բավական հարազատորեն են արտացոլում ժողովրդական հավատալիքները: Քննության առարկա հայ ժողովրդական հեքիաթներում, փաստորեն, մենք տեսնում ենք Գրողի կերպարի բավական հին ընկալումների հետքեր. ճակատագիր սահմանողներն այստեղ բացառապես արական անձնավորում ունեն: Հեքիաթը պահպանել է Գրողի պատկերացումները նախքան նրա՝ որպես հիվանդության ու մահվան ոգի ընկալվելը: Գրողի կերպարը հեքիաթներում բավական չեզոք է. նա նախասահմանող է, ոչ թե հոգեառ: Նա

գրում է, և ինքն անգամ անկարող է փոխել իր գրածը: Ուշագրավ է, որ հեքիաթների մի մասում Գրողը ևս ներկայանում է որպես Աստծո միջնորդ կամ նրա կամքը գրանցող: Գրող ծերունին խոստովանում է, թե գրում է այն, ինչ իրեն ասում են (ՀԺՀ XIII 1985, № 40): Հեքիաթի տարբերակներում հիշատակվում է նաև գրողի դավթարը, որտեղ բացի մարդկանց ճակատագրերից, գրանցվում են նաև մարդկանց մեղքերը (ՀԺՀ II 1959, № 24): Որպես բախտի հնագույն անձնավորում՝ Գրողի կերպարը մի հեքիաթում նույնացվում է ժամանակի տնօրինողի հետ. երեք գրող մարդիկ ներկայանում են որպես լույսն ու մութը բաժանողներ (ՀԺՀ I 1959, № 33):

Հեքիաթի հրաշապատում հյուսվածքում ճակատագրեր սահմանողը որոշ առումով հեքիաթային գերբնական էակներին բնորոշ հատկանիշներ է ստանում. նա ապրում է անտառի տանը, նա կախարդ է. կարողանում է մարդկանց վերափոխել կենդանու (Գուրունյան Հ. 1991, 158-160), նա դերվիշ է (ՀԱԲ 16, 1984, № 18), հանդես է գալիս որպես նվիրատու (բախտագուշակի տված խնձորից զավակ են ունենում (ՀԺՀ XIII 1985, № 40), 3 գրողների տված ծուն լույս է տալիս (ՀԺՀ I 1959, № 33):

Ըստ երևույթին, քրիստոնեական կրոնի ազդեցությամբ հեքիաթային Գրողի կերպարը սկսում է ձեռք բերել մենակյաց ճգնավորի հատկանիշներ. նրա առաջ երկնքից հաց է ընկնում, և նա ուտում է («Մարդիս ճակատին ինչ գրած է՝ էնենց էլ կըլնի», ՀԺՀ III 1962, № 6): Կամ նա բնակվում է հորի մեջ և մի մարդ ամեն օր նրան հաց է գցում: Այս տարբերակում առկա է նաև մի մոտիվ, որ չկա մյուսներում. նա սև ու սպիտակ հացերը իրար վրա է դնում՝ այդպիսով ամուսնաց-

նելով տգեղին ու գեղեցիկին, որ աշխարհը չավիրվի («Ճակտի գլիր», ՀԺՀ XIV, № 12):

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ճակատագիր սահմանողների անձնավորումներից հեռավոր սահմանային գոտիներում ապրող և գրող ծերունու կերպարը հնագույնն է: Ամենայն հավանականությամբ, հեքիաթի հյուսվածքում Գրողի կերպարի զարգացման հաջորդ փուլում հանդես են գալիս արդեն երկու կամ երեք գրողները ու ճակատագիր նախասահմանողները, որոնք արդեն իրենք են այցելում այն տները, ուր մանուկ է ծնվում և գրում են նրա ճակատագիրը հիմնականում՝ ճակատին: Այս դիպաշարերում ճակատագրեր սահմանողների կերպարները որոշ դեպքերում նաև կնքահոր նշանակություն են ձեռք բերում: Հեքիաթներից մեկում նրանք նկարագրվում են որպես երեք ճերմակ հագուստներով մարդիկ, որոնք գրկած տանում են մանկանը: Նրանք թագավորին ասում են, որ երեխայի ճակատին գրել են, որ ամուսնանալու է թագավորի աղջկա հետ (ՀԱԲ 19, 1999, 64):

Մի շարք այլ տարբերակներում գրելու գործառույթով հանդես են գալիս հրեշտակները: Օրինակ՝ կինը ծննդաբերում է ճանապարհին և ամուսնու հետ հեռանում: Մի փոքր անց ամուսինը վերադառնում է մոռացված իրի հետևից և տեսնում, որ ճիշտ այնտեղ, որտեղ կինը ծննդաբերել է, երկու հրեշտակ նստած նորածնի ճակատագիրն են գրում (ՀԱԲ 19, 1999, №11(13)):

Այն հեքիաթներում, որտեղ որպես նախասահմանողներ հանդես են գալիս հրեշտակները, հայտնվում են նոր մոտիվներ: Եթե գրող ծերունին հիշատակվում է միմիայն հեքիաթի սկզբում և հետագայում այլևս հանդես չի գալիս, ապա հրեշ-

տակները որոշ տարբերակներում ի հայտ են գալիս նաև հեքիաթի զարգացման ընթացքում: Այն հեքիաթներում, որտեղ հրեշտակը սահմանել էր հերոսների ամուսնությունը, նա օգնում է, որ այդ ամուսնությունն իրականանա՝ այդպիսով հանդես բերելով պահապան հրեշտակի հատկանիշներ (ՀԺՀ X 1969, № 14), մահը կանխորոշած հրեշտակը սահմանված ժամանակ գալիս է հերոսի հոգին առնելու՝ այդպիսով հանդես գալով որպես մահվան, հոգեառ հրեշտակ⁷ (ՀԺՀ VI, № 14):

Փոքր-ինչ այլ կերպ է ընթանում կերպարի զարգացումը եվրոպական հեքիաթում: Այստեղ ճակատագրի աստվածուհիների հետագա ժառանգորդներն են նորածիններին այցելող կախարդուհիներն ու փերիները: Ուշագրավ է, որ կախարդուհիներից մեկն է միայն չար ու բացասական. նա, ով նախասահմանում է նորածնի մահվան օրը: Վերջինիս «ընծան» մոտիվավորվում է նրա նեղացած լինելով: Դա դիտարկելի է հատկապես «Քնած գեղեցկուհու» դիպաշարում: Հեքիաթի Գրիմների տարբերակում նորածնին այցելում են կախարդուհիները, որոնցից մեկը՝ մի վիրավորված և չար կախարդուհի, մահվան օրն է սահմանում: Սյուժեի՝ Պերրոյի մշակած գրական տարբերակում նույն գործառույթը կատարում են փերիները (իտալերեն *fata*, ֆրանսերեն *fée*. ծագել է լատիներեն *fatum*, «ֆատ» բառից, որը նշանակում է նախասահմանում, ճակատագիր (MHM 1992: 474, հմմտ. հռոմեա-

⁷ Ուշագրավ է հեքիաթի մեկ այլ դիպաշար, որտեղ նորածնի կնքահայրն է դառնում հոգեառ Գաբրիելը: Նա բուժման մի յուրօրինակ «շնորհով» է օժտում երեխային, որն իբրև պետք է բուժեր այն մարդկանց, որոնց հոգին Գաբրիելը դառևս չէր առնելու: Սյուժեի քննությունը տես՝ Զաքարյան Եվա, 2010, 110:

կան Ֆատերը): Ըստ երևույթին իրենց նախնական դրսևորմամբ ճակատագրի իգական այս անձնավորումները՝ փերիները, առասպելներում և հեքիաթներում կատարել են նույն դերը, ինչ որ հունական Մոյրաները, սկանդինավյան Նոռները և ճակատագրի՝ վերոհիշյալ մյուս աստվածությունները⁸: Հնագույն ժամանակներից մեզ հասած բոլոր հուշարձաններում Մոյրաներից մեկը, որը պատկերվել է կյանքի թելը կտրելու պատրաստ մկրատը ձեռքին, սովորաբար ներկայացվել է որպես մի տգեղ կամ ծեր կին, այսինքն՝ այստեղ ևս մահվան օրը որոշող աստվածուհին բացասաբար է ընկալվում: Գրական հեքիաթի փերիները ընդլայնում են իրենց գործառույթները՝ դառնալով նաև յուրօրինակ նվիրատուներ, նորածիններին շնորհներով օժտող կնքամայր-փերիներ, որոնք այցելում են հերոսներին նաև հասուն տարիքում:

Մեր օրերում մշակույթների համահարթեցման, գլոբալացման պայմաններում հեքիաթների գրական և հեռուստատեսային տարբերակների շնորհիվ գրական հեքիաթում գերիշխող են դառնում հենց այս՝ կնքամայր-փերիների կերպարները: Ցայտուն օրինակ են ռուսական կայքերից մեկում գովազդվող ճակատագրի փերիները, որոնց կարելի է հրավիրել երեխայի կնունքի ժամանակ (<http://www.mynanny.md/index.php/ru/children-anounces-ru/feya-sudibi-ru>):

⁸ Փերիների այսպիսի ընկալումը ժողովրդական հեքիաթներում հազվադեպ է: Նման ընկալման տարածումը կապվում է գրական հեքիաթի հետ, հատկապես պայմանավորված է Մադամ Դ'Ալնոյի և Շարլ Պերրոյի հեքիաթների ազդեցությամբ, վերջինիս «Քնած գեղեցկուհին», «Փուփուշիկ Ռիքեն» և «Մոխրոտը» հեքիաթներում հանդես եկող փերիների շնորհիվ: http://en.wikipedia.org/wiki/Fairy_godmother

Մշակույթի գլոբալացումը և գրական հեքիաթը, սակայն, գոնե այս առումով ազդեցություն չեն ունեցել մեր բանասիրական հեքիաթի վրա: Թերևս այդ ազդեցությունը կարելի է փնտրել միայն այն սակավաթիվ հեքիաթներում, որտեղ նախասահմանողներն են այցելում նորաձևին, և նրանք երեքն են, չնայած որ այս հանգամանքը կարելի է բացատրել նաև հեքիաթի ինքնակա զարգացմամբ, որին խիստ բնորոշ է ինչպես իրադարձությունների, այնպես էլ կերպարների եռակիացումը:

Թերևս հայ ժողովրդական հեքիաթներում ճակատագրի փերիններին համահունչ կերպարներ են հեքիաթների զանազան այլ տիպերում հանդես եկող երեք աղավնակերպ ոգիները, որոնք աղջիկների են վերածվում, ընդունում երեխայի ծնունդը և շնորհներով օժտում նրան (տե՛ս, օրինակ, ՀԺՀ IV, 434, ՀԺՀ IX, 435), սակայն այս հեքիաթների քննարկումը դուրս է ներկա ուսումնասիրության շրջանակներից:

Ճակատագրի՝ որպես նախօրոք գրված գրի պատկերացումները բավական վառ են և կենսունակ մեր օրերում էլ և ոչ միայն հայերի մեջ: Դրա վկայությունն է ճակատագրի հմայական գրքերի՝ մինչ օրս կենդանի հավատալիքը (բավական է համացանցում փնտրել «ճակատագրի գիրք» արտահայտությունը, նույն վայրկյանին 1550000 արդյունք կտեսնենք, որոնց մեծ մասը առցանց գուշակություններ են ճակատագրի գրքերով):

Հեքիաթի մերօրյա գրառումները բավական հարազատ են մնացել ավանդական նյութին: Տասմեկ պատումներից հինգում նախասահմանումը տրվում է որպես գիր: Պատումներից երկուսում նախասահմանողը հանդես է գալիս կերպարի հնագույն մարմնավորմամբ. նա ալեհեր ծերունի է, որը ծովի (արագավազ գետակի) ափին նստած թղթերի վրա ճակա-

տագրեր է գրում ու գցում ջուրը («Ճակատագիր», ԺՀԺԳ № 32, «Ճակատագիրը», ԺՀԺԳ № 21): Մյուս պատումներում ճակատագիր սահմանողները երկու հոգի են, որոնք նստած են ճանապարհին և գրում են («Ճակատագիր», ԺՀԺԳ № 37), հրեշտակներ են, որոնք այցելում են նորածնին ու գրում նրա ճակատին («Ճակտի գրածը չի ջնջվի», ԺՀԺԳ № 19): Հեքիաթի տարբերակներից մեկում հերոսը գրողին տեսնում է երագում. նա, ինչպես երագի մյուս իմաստունները, հերոսին հայտնում է նախախնամությունը («Ճակատին ինչ գրած ա, էլ փոխել չի լինի», ԺՀԺԳ № 14): Պատումներից մի քանիսում, որտեղ բացակայում է Գրողի կերպարը, հերոսներին ճակատագիրը հայտնում են Աստծո հրեշտակը («Ճակատագիր», ԺՀԺԳ № 36), երագի ալեհեր ծերունին («Ճակատագիր», ԺՀԺԳ № 12), իմաստունը («Հոր փորոզը հորը գնգնի», ԺՀԺԳ № 19), բախտագուշակը («Ճակատագիր», ԺՀԺԳ № 1, «Գուշակը», ԺՀԺԳ № 22): Հեքիաթներից մեկում բախտագուշակը իր վրա է վերցնում նաև հեքիաթային դերվիշի գործառույթը. նա անզավակ արքային խնձոր է տալիս, և միևնույն ժամանակ զգուշացնում, որ խնձորից ծնված տղան տասը տարեկանում մահանալու է ջրից: Ծնողները ապահովության համար փակում են ջրհորի բերանը, սակայն տղան ծննդյան տասը տարին լրանալու օրը գլուխը դնում է ջրհորին ու մահանում («Բախտ նայողի հեքիաթը», ԺՀԺԳ № 16):

Ուշագրավ է, որ ATU 930A տիպի հեքիաթի վաղ գրառված տարբերակների մի մասում հերոսներին երբեմն հաջողվում է փոխել ճակատագիրը. հերոսը բարություն է անում, և Աստված բաշխում է նրա կյանքը («Կյուլ տեռած կընեգյը», ՀԺՀ հ. V, № 39), տղային փրկում են իր շները («Մադար տըցեն

բախտը», ՀԺՀ հ. V, № 42, «Թագավորն ու դարվեշ», ՀԺՀ հ. XII, № 25): Մերօրյա գրառումների՝ մեր ձեռքի տակ եղած տարբերակներից և ոչ մեկում հերոսները չեն խուսափում սահմանված մահից, որն էլ, կարծում ենք, ևս մեկ անգամ հավաստում է ժողովրդի՝ մեր օրերում դեպի ճակատագիրն ու նախասահմանումն ունեցած անխախտ հավատի մասին:

Ակնհայտ է նաև, որ հեքիաթների՝ և՛ նախորդ դարուկեսի, և՛ մեր օրերում գրառված պատումներում գերիշխում է նախասահմանման՝ որպես նախապես գրված գրի՝ մեր ժողովրդական պատկերացումներում խոր արմատներ ունեցող ընկալումը: Ճակատագիր սահմանողը, լինի ծերունի, հրեշտակ, թե դերվիշ, մեծ մասամբ հանդես է գալիս որպես Գրող:

Հայ ժողովրդի ազգային լեզվամտածողության մեջ ճակատագրի՝ որպես նախապես գրվածի ընկալումներն ակնհայտ են նույնիսկ մեր օրերում գործող հավատալիքներում և ազգային լեզվամտածողության մեջ: Դրա վկայությունն է և՛ **ճակատագիր** բառի ստուգաբանությունը (ճակատ+գիր), և՛ մեր լեզվում առկա բազմաթիվ բանաձևային արտահայտությունները, որոնցով մարդիկ մինչ օրս էլ մարդու կյանքի ուղին մեկնաբանում են որպես ճակատագիր՝ բառի ստուգաբանության հստակ գիտակցությամբ: Մինչ օրս էլ ինչ-որ մեկի դժբախտությունը կամ վաղաժամ մահը մարդիկ փորձում են մեկնաբանել «Նրա ճակատին էլ դա էր գրված» արտահայտությամբ, մարդու մահվան լուրը հայտնում են «Նրա գիրը գրվեց» շատ պատկերավոր խոսքերով: Ինչպես նաև, մինչ օրս մարդիկ դեռ մարդու գանգի ճակատային հատվածի գծերն ու ծալքերը մեկնաբանում են որպես գրված գիր:

Մերօրյա հեքիաթասացները, իսկապես, խորապես համոզված են, որ գոյություն ունի ճակատագրի նախասահմանվածություն և հաճախ հեքիաթից հետո սկսում են պատմել նաև կյանքում տեղի ունեցած իրական պատմություններ՝ երազների ու կանխագուշակությունների կատարման մասին՝ որպես ասվածի հաստատում: Ինչպես նաև՝ իրենց հեքիաթները բանասացներն ավարտում են պատմվածի հանդեպ համոզված հավատով. «Եվ ճիշտ որ, ըլում ա: Պատահում ա, էրագում հենց բան տենում ես, վեր ես թռչում, աչքդ բաց էլ ես էրագ տենում: Ճակատագիր ա» (բանասաց՝ Թերեզա Դավթյան):

Ժողովրդի այս անխախտ հավատն է պատճառը, որ մեր օրերում, երբ բանահյուսական ավանդական հեքիաթի ժանրն աստիճանաբար զիջում է իր դիրքերը, մարդիկ դեռ շարունակում են ակտիվորեն պատմել ճակատագրի նախասահմանվածության մասին դիպաշարերը:

ԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ՀԵՔԻԱԹԻ ԱՐԴԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Բանահյուսության և գրականության փոխառնչությունների մասին խոսելիս հայ բանագետների և գրականագետների աշխատություններում միշտ քննարկման առարկա է դարձել բանահյուսության՝ գրականության վրա ունեցած վիթխարի ազդեցությունը՝ որպես սնող աղբյուր, որպես թեմատիկայի, ժանրային դրսևորումների ու պատկերավորման միջոցների մի անսպառ գանձարան, որից օգտվել է և շարունակում է օգտվել գրականությունը: Բազմաթիվ արժեքավոր աշխատություններ են նվիրված այս կամ այն հեղինակի գրական ստեղծագործությունների բանահյուսական ակունքների բացահայտմանը, գրականության մեջ բանահյուսական այլևայլ հատկանիշների քննությանը, որոնց շնորհիվ պարզաբանվել են հայ հեքիաթագիրների՝ ժողովրդական նյութի մշակման սկզբունքները, մշակումների սկզբնաղբյուրները և բազմաթիվ այլ հարցեր (Ղանալանյան Ա. 1986, Վարդանյան Ա. 1986 և այլն): Բանահյուսական և գրական հեքիաթների փոխհարաբերությունների մասին ուսումնասիրություններում երբեք քննության չի առնվել բանահյուսության՝ գրականությունից կրած ազդեցության հարցը, մի հիմնախնդիր, որը հատկապես մեր օրերի բանահյուսության ուսումնասիրության պարագայում բավական արդիական և անխուսափ է դառնում: Ժամանակակից բանահյուսական նյութի, մասնավորապես ժողովրդական հեքիաթի գրանցումները ի հայտ են բերում նաև հակադարձ ազդեցության դրսևորումներ, երբ հեքիաթասացը պատմում է պատումներ, որոնք ստեղծվել են բա-

նահյուսական հեքիաթի գրական մշակման ազդեցությամբ, կամ բանասացը նյութը ոչ թե լսել է բանավոր եղանակով, այլ կարդացել արդեն գրանցված և տպագրված ժողովրդական հեքիաթների հրատարակություններից: Փաստորեն, երկու դեպքում էլ բանահավաքը գործ ունի գրավոր աղբյուրից բանավորի փոխանցված նյութի հետ, որը հակասում է մեր ավանդական բանասացության սկզբունքներին: Բնականաբար, բանահավաքչության գիտական սկզբունքներով առաջնորդվելու դեպքում այսպիսի նյութը կհամարվի ոչ ավանդական, քանի որ խաթարված է բանահյուսության ամենագլխավոր սկզբունքներից մեկը՝ բանավոր ավանդումը, և բանահավաքն այն կհամարի խոտան՝ չգրառելով կամ տպագրության արժանի չհամարելով: Ենթադրաբար ճիշտ այդպես էլ վարվել են անցյալի մեր բանահավաքները՝ անտեսելով ու գրի չառնելով ակնհայտ գրական ազդեցություն կրող պատումները: Մեր օրերում, թերևս հարցը վերանայման կարիք ունի: Արդի բանասացությունը տարբերվում է ավանդականից: Պատճառը միայն այն չէ, որ աստիճանաբար փոխվում են բանասացության ավանդական եղանակները, այլև այն, որ այժմ նույնիսկ ամենախուլ գյուղերում դժվար է գտնել գրին ու գրականությանը բացարձակապես անտեղյակ մարդիկ, որոնք կարդացած չլինեն գրական հեքիաթների ժողովածուներ: Եվ եթե նույնիսկ բանասացը պատումը լսել է բանավոր եղանակով, նա անկախ իրենից կարող է պատում ներմուծել ընթերցված հեքիաթների որոշ տարրեր: Ավելին՝ հեքիաթասացը կարող է իր հեքիաթացանկ ընդգրկել պատումներ, որոնք քաղել է գրավոր աղբյուրներից, և այն պատմել իրեն հատուկ ոճով և ժողովրդական հակիրճությամբ: Այսպիսի

պատումները, որոնք գուցե ավանդական անաղարտ նյութը փնտրող բանագետներին արժեքավոր չեն թվա, կարծում ենք, նույնպես արժանի են գրառման և ուսումնասիրման՝ որպես բանահյուսական ինքնատիպ նմուշներ:

Հարցի վերաբերյալ գիտական մոտեցումներն արդի արևմտաեվրոպական հեքիաթագետների աշխատություններում: Հեքիաթի գրական բնագրերի՝ բանահյուսության վրա ունեցած ազդեցության հարցը բուռն քննարկումների առարկա է դառնում մերօրյա արևմտաեվրոպական հեքիաթագետների աշխատություններում (բանավեճի վերաբերյալ որոշ անդրադարձներ տե՛ս Satu Apo 2007: 19-33, Ջիվանյան 2008, 9-12): Գիտնականների կարծիքները հարցի վերաբերյալ իրարամերժ են: Ուսումնասիրողների մի մասը պնդում է, որ բանահյուսական հեքիաթները, գոնե մինչև 19-րդ դարավերջը, լիովին զերծ են եղել գրական ազդեցությունից: Այս տեսակետի պաշտպաններից է, օրինակ, հեքիաթի մերօրյա խոշոր տեսաբան Բենքդ Հոլբեքը, ըստ որի՝ 1870-80-ականներից առաջ գրառված հեքիաթները չէին կարող կրել գրականության ազդեցությունը դրանց պատմողների՝ տպագիր տեքստերին անտեղյակության պատճառով: Տպագիր գրականությունը մատչելի էր միայն քաղաքային բնակչությանը (Satu Apo 2007: 23): Ավելին՝ նա համոզված է, որ եթե ուսումնասիրողին հետաքրքրում է բանահյուսական տեքստը, ապա պետք է նա զերծ մնա վերապատմված կամ հեղինակների կողմից միջնորդավորված տարբերակներից (Holbek Bengt 1987: 24):

Սրան հակառակ՝ մյուս թևի ներկայացուցիչներից ոմանք այնքան են խորացնում բանահյուսական հեքիաթի՝ գրակա-

նից ազդված լինելու տեսությունը, որ հանգում են այնպիսի ծայրահեղ պնդման, թե ոչ թե բանահյուսական հեքիաթն է ընկած գրականի հիմքում, այլ հակառակը: Այս տեսակետի առաջամարտիկը հատկապես մեր օրերի նշանավոր հեքիաթագետ Ռուբ Բոթիգհայմերն է, որն իր աշխատության մեջ կասկածի է ենթարկում արմատացած այն համոզմունքը, թե հեքիաթները ժողովրդական ծագում ունեն (Bottigheimer Ruth 2002: 6-7): Ինչպես Ռուբ Բոթիգհայմերը, այնպես էլ Էլիզաբեթ Հարիսը այն տեսակետն են զարգացնում, թե թափառող ժողովրդական հեքիաթները առաջացել են միայն 16-18-րդ դարերում, և դրանք մեծապես ազդված են գրական հեքիաթի մոդելներից (Satu Apo 2007: 24): Ուսումնասիրողների ելակետն այն է, որ ժողովրդական հեքիաթների ամենավաղ նմուշները հայտնաբերվում են գրական աղբյուրներում՝ իտալացի գրողներ Ֆրանչեսկո Ստրապարոլայի «Հաճելի գիշերներ» (16-րդ դար) և Ժամբատիստ Բազիլի «Պենտամերոն» (17-րդ դար) ստեղծագործություններում, որտեղից էլ դրանք մուտք են գործել բանավոր ավանդույթ:

Այս մոտեցումը, իհարկե, նաև բավական սուր քննադատության է արժանանում տարբեր հեքիաթագետների կողմից: Հեքիաթագիտական «Հրաշքեր և հեքիաթներ» (Marvels & Tales), «Ամերիկյան բանահյուսության հանդես» (The Journal of American Folklore) պարբերականների էջերում ծավալվում են բուռն բանավեճեր Բոթիգհայմերի և իր ընդդիմախոսների միջև (տե՛ս «Marvels & Tales», 2006, Vol. 20, No. 2, pp. 276-284; 2007, vol.21, No 1, “The Journal of American Folklore”, 2010, vol. 123):

Որքան էլ Բոթիգհայմերի և իր կողմնակիցների տեսությունը ծայրահեղ և մերժելի լինի, այն գիտնականներին ստիպում է նոր հայացք գցել գրականություն-բանահյուսություն փոխառնչությունների հարցին: Այսպես՝ գիտնականներից ոմանք, չհամաձայնելով հեքիաթների գրական ծագման տեսակետին, այնուամենայնիվ պնդում են, որ հատկապես ուշ շրջանի ժողովրդական հեքիաթը որոշակիորեն կրում է գրական հեքիաթի ազդեցությունը: Այսպես, օրինակ, Սաթու Ապոն դա ցույց է տալիս ֆիննական հեքիաթների օրինակով: Նա բերում է 1847-81թթ. Ֆինլանդիայում լույս տեսած հեքիաթների ժողովածուների մի մեծ ցուցակ, որոնք 19-րդ դարի ֆինն հեքիաթասացները կարող էին կարդացած լինել, քանի որ այդ ժամանակաշրջանում արդեն երկրի բնակչության 100 %-ը տառաճանաչ էր և կարող էր կարդալ (Satu Apo 2007: 25): Նա պնդում է, որ «...բանավոր հեքիաթային ավանդույթը ուժեղ ազդեցություն է կրել 19-րդ դարավերջի գրական ավանդույթից» (Satu Apo 2007: 29), և որ 19-րդ դարի Արևմտյան Եվրոպայում դժվար է գտնել ժողովրդական մշակույթ, որ զերծ լինի գրական ազդեցությունից (Satu Apo 2007: 30):

Հարցը բավական արդիական է, և բնական է, որ գրավում է հեքիաթագետներից շատերի ուշադրությունը, որոնք փորձում են իրենց տարածաշրջանի ժողովրդական հեքիաթների օրինակով պարզել բանահյուսական հեքիաթի գրական ազդեցությունների հարցը: Այսպես՝ Մարիա Կալիամբոուն փաստում է, որ հակառակ նրան, որ ուսումնասիրողների կարծիքով ֆրանսիական և բուլղարական ժողովրդական հեքիաթների վրա մեծ ներգործություն են ունեցել Շարլ Պերրոյի և Անդեր-

սենի հեքիաթները, հունական ժողովրդական հեքիաթի վրա նույն հեքիաթագիրների ժողովածուները նվազ ազդեցություն են ունեցել, թեև այստեղ ևս այդ ժողովածուների էթանագին հրատարակությունները մատչելի են եղել նույնիսկ երկրի ծայրամասերում: Հոդվածագիրը դա ցույց է տալիս «Կարմիր գլխարկի» օրինակով, որը, լինելով շատ սիրված ու ճանաչված Պերրոյի հեղինակությամբ, այնուամենայնիվ, Հունաստանում ընդամենը 6 բանավոր գրանցում է ունեցել, որոնք մոտիվներով բավական տարբեր են Պերրոյի հեքիաթից (Kaliambou, Maria 2007, 59-60):

Որոշ գիտնականներ էլ, ընդունելով հանդերձ ժողովրդական և գրական հեքիաթների յուրահատկությունները, այնուամենայնիվ հրաժարվում են դրանց միջև հստակ սահմանագծեր դնելու մտքից: Այսպիսին է, օրինակ Ջեք Չայփսի մոտեցումը: Իր բազմաթիվ ուսումնասիրություններում Չայփսն ամենևին չի փորձում հստակ սահմանազատել գրական և բանահյուսական հեքիաթները և դրանք դիտարկում է մեկ հարթության վրա: Նա նշում է, որ թեև բանագետները սահմաններ են դնում թափառող ժողովրդական հեքիաթների և բանավոր ավանդույթից սերված գրական հեքիաթի միջև, սակայն դրանց փոխհարաբերության ու զարգացման հարցը պարզելն այնքան էլ հեշտ չէ: Միանշանակ ընդունելով այն փաստը, որ հեքիաթները արմատավորվել են բանավոր ավանդության մեջ՝ նա նշում է, որ այնուհետև հեքիաթը բազում փոխակերպումների է ենթարկվել, և այժմ հեքիաթի տեսակները կազմում են մեկ հսկայական և ամբողջական ժանր, որոնք անքակտելիորեն փոխկապակցված են միմյանց (Jack Zipes 2012: 2-3): Փաստորեն Չայփսը հեքիաթի տարբեր

տասակները դիտարկում է որպես մեկ ամբողջական օրգանիզմի մասեր, որոնք, բնականաբար, տարաբնույթ փոխառնչությունների ու փոխազդեցությունների մեջ են գտնվում:

Իր ուսումնասիրության մեջ անդրադառնալով բանահյուսական և գրական հեքիաթների փոխառնչությունների հարցին՝ մեր օրերի հայ հեքիաթագետ Ալվարդ Զիվանյանը շատ դիպուկ նկատառում է կատարում. «Ժողովրդական հեքիաթը և գրական հեքիաթը գտնվում են երկկողմանի կայուն փոխազդեցության մեջ: Սնվելով ժողովրդական պատումից՝ գրական հեքիաթն իր հերթին որոշակի ազդեցություն է թողնում բանահյուսական հեքիաթի վրա» (Զիվանյան Ա. 2008, 11): Ըստ հեքիաթագետի՝ միշտ չէ, որ միանշանակ կարող ենք պնդել, թե տվյալ պատումը բացառապես բանահյուսական աղբյուրից է սնվում. «Ժողովրդական հեքիաթն անգամ իր «կենդանի», անտիպ վիճակում էլ կարող է պարունակել գրական հեքիաթի որոշ տարրեր կամ անգամ ստեղծվել գրական որևէ պատումի ազդեցությամբ» (Զիվանյան Ա. 2008, 11):

Գրական ազդեցության հարցը և հայ ժողովրդական հեքիաթները: Հայ իրականության մեջ հեքիաթն իր գրական կյանքը սկսել է դեռևս միջնադարում՝ 12-13-րդ դարերում, երբ հատուկենտ սյուժեներ՝ խառնված առակներին ու խրատներին, երկար դարերի բանավոր ճանապարհից հետո առաջին անգամ գրի առնվելով անցնում են գոյատևման նոր եղանակի: Այս ժամանակաշրջանից սկսած՝ բազմաթիվ հեքիաթային դիպաշարեր են հայտնաբերվում հայ պատմագրական երկերում ու ձեռագիր ժողովածուներում, թարգմանական գրքերում՝ «Հարանց վարքերում», «Հայելի վարուց» ժողովա-

ծուում, ինչպես նաև ուշ միջնադարում տպագրված «Աղվեսազրքերում» (Հակոբյան Ն, Սահակյան Ա. 1986, 126-127): Ուսումնասիրողները միջնադարյան ձեռագրերում ցույց են տալիս 50-ի հասնող հեքիաթային պատումներ, որոնցից 30-ն ունեն իրենց միջնադարյան տարբերակները, և գրեթե բոլորը ունեն տարբերակներ 19-20-րդ դդ. գրառումներում (Հակոբյան Ն., Սահակյան Ա. 1986, 127):

19-րդ դարում՝ հայ նոր գրականության մեջ, հեքիաթի գրական տարբերակները կյանք են մտնում գրեթե բանավոր հեքիաթի գրառմանը զուգահեռ: Ճիշտ է, ընդունված է հեքիաթի գրական մշակման պատմությունը սկսել Ղազարոս Աղայանից, սակայն մինչ այդ էլ հեքիաթային որոշ դիպաշարեր արդեն մուտք էին գործել գրականություն (Խ.Աբովյանի մի քանի առակատիպ հեքիաթները, Ռ.Պատկանյանի երկու չափածո հեքիաթ, Թաղիադյանի «Վեպ Վարսենկան» (Վարդանյան Ա. 2010, 10-16): Այնուհետև հեքիաթային դիպաշարերի մշակումն ավելի լայն ծավալներ է ստանում Հովհ.Թումանյանի, Ավ.Խսահակյանի, Դ.Դերմիրճյանի և այլոց շնորհիվ: Թարգմանական հեքիաթների Գրիմների, Անդերսենի, Շարլ Պերրոյի՝ առանձին թարգմանված հեքիաթներ և ամբողջական ժողովածուներ սկսում են ի հայտ գալ 19-րդ դարի վերջից և 20-րդ դարի սկզբում:

Բանավոր հեքիաթի գրառումը հայ իրականության մեջ սկսվում է 19-րդ դարի կեսերից՝ Բահաթյան եղբայրների, այնուհետև Գարեգին Սրվանձոյանցի, Տիգրան Նավասարդյանցի, Հայկունու, Երվանդ Լալայանի և այլոց գրառումների շնորհիվ: Անշուշտ այս ժամանակաշրջանում գրառվող բանավոր հեքիաթն արդեն կարող էր ինչ-ինչ ազդեցություն

կրած լինել դեռևս միջնադարից գրական կյանք ստացած հեքիաթներից: Թեև կարծում ենք, այդպիսի ազդեցությունը ավելի մեծ կլինի առավել ուշ ժամանակաշրջանում: Չպետք է մոռանալ, որ մինչև քսաներորդ դարասկիզբը գյուղական համայնքներում ժողովրդի մեծ մասը գրաճանաչ չէր, և գրական հեքիաթը ժողովրդական խոսքարվեստ կարող էր մուտք գործել առավելապես հոգևորականության միջոցով: Միայն 1920-30-ականներից հետո գյուղերում սկսեցին գործել լիկկայաններ (անգրագիտության լիկվիդացման կայաններ)՝ չափահաս ժողովրդին գրաճանաչ դարձնելու նպատակով, որից հետո միայն ժողովրդի 84 %-ն արդեն ի վիճակի էր կարդալ (Խուրոյան Ս. 1973): Այս ժամանակաշրջանից սկսած՝ գրական հեքիաթի ազդեցությունը բանավորի վրա ավելի ակնհայտ է դառնում:

Տվյալ դեպքում, իհարկե, մեր խնդիրը ոչ թե հեքիաթի վաղ գրառումներում նման դրսևորումների դիտարկումն է, այլ ժողովրդական հեքիաթների ժամանակակից գրառումներում գրական հեքիաթի ուղղակի ազդեցությունների քննությունը, որը մեր օրերի բանահյուսության դեպքում արդեն բավական լուրջ որակ է կազմում:

Գրականության ազդեցությունը մերօրյա բանահյուսական հեքիաթներում: Այսօր գրավոր հեքիաթն իր ծավալներով զգալիորեն գերազանցում է բանավորին: Ժողովուրդն այսօր հաճախ բանահյուսական ավանդական հեքիաթի սյուժեները ճանաչում է դրանց գրական մշակումներով, և բանահավաքի՝ հեքիաթ պատմելու խնդրանքին անմիջականորեն արձագանքում է Թումանյանի հեքիաթներով: Մեր օրերում

հեքիաթն առավելապես ընթերցվում է, քան պատմվում, նույնիսկ պապիկների ու տատիկների կողմից:

Այսպիսի պայմաններում ավանդական հեքիաթներին տիրապետող սակավաթիվ հեքիաթասացները ևս հաճախ ազդվում են հեքիաթների գրական մշակումներից կամ իրենց հեքիաթացանկ են ընդգրկում ընթերցված հեքիաթների դիպաշարեր:

Բանավոր հեքիաթի՝ գրավորից կրած ազդեցություններն այսօր բազմաբնույթ են.

1. Բանասացը իր իմացած ավանդական տարբերակին անուղղակիորեն ներմուծում է գրական մշակումից քաղված մոտիվներ
2. Բանասացը նյութն ուղղակի քաղում է գրավոր աղբյուրից: Որպես գրավոր աղբյուր կարող են ծառայել.
 - Ժողովրդական հեքիաթների գրական մշակումները,
 - Ժողովրդական հեքիաթների՝ ավելի վաղ գրառված և տպագրված տարբերակները:
3. Գրավոր աղբյուրից սկիզբ առնող պատումը բանասացին ծանոթ է բանավոր աղբյուրից՝ այլ բանասացի փոխանցմամբ:

Պատումի գրավոր կամ բանավոր ծագումը որոշելը միշտ չէ, որ միանշանակորեն հնարավոր է: Լինում են դեպքեր, երբ հեքիաթասացը նախապես տեղեկացնում է բանահավաքին, որ հեքիաթը կարդացել է գրքերում, սակայն երբեմն էլ բանասացը կամ չի խոստովանում այդ՝ նախապես իմանալով, որ գրառողների կողմից ավելի արժեքավոր են համարվում ավանդաբար, բանավոր ճանապարհով իրեն հասած պատումները, կամ էլ ինքը ևս չգիտի այդ մասին, քանի որ գրա-

վոր աղբյուրից վերցված պատումն իրեն է հասել բանավոր եղանակով: Նման դեպքերում հեքիաթի՝ գրավոր աղբյուրից ծագած լինելու մասին կոսահելը կախված է միայն բանահավաքի մասնագիտական հոտառությունից:

Եթե հեղինակային մշակումից հայտնի գրական մոտիվների առկայությունը բանագետին կարող է հուշել գրական ազդեցությունը, ապա բանահյուսական նյութի վաղ գրառումների միջնորդությամբ վերստին բանավոր կյանք մտած պատումների աղբյուրը որոշելը հնարավոր չէ, եթե միայն բանասացն ինքը այդ մասին տեղյակ չպահի:

Անշուշտ, վերջին դեպքում սխալ է գրական ազդեցության մասին խոսելը. ի վերջո, թեև նյութի փոխանցումը կատարվում է ոչ բանավոր ավանդման ճանապարհով, սակայն ժողովրդական անմշակ նյութն է հիմք հանդիսանում նոր պատումի ստեղծման համար: Նմանատիպ մի դեպքի առնչվեցինք Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասում: Բանասացը՝ Դավթյան Թերեզան, իր պատմած հեքիաթներից մի քանիսը վերցրել էր գրավոր աղբյուրից: Ուշագրավ էր «Ոսկեքարու տղան» հեքիաթը, որի աղբյուրի մասին ստույգ տեղեկանալով բանասացից (Թ.Դավթյանը նշեց, որ հեքիաթը կարդացել է «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին հատորից, որից հետո բազմիցս պատմել է բանավոր), կարողացանք ուղղակի զուգահեռ անցկացնել երկու պատումների միջև: Բերենք «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին հատորի «Ոսկե քարու տղի հեքիաթը» և Թ. Դավթյանի «Ոսկեքարու տղեն» հեքիաթների առաջին պարբերությունները բառացի:

«Հ'առաջվա ժամանակը մի թաքավոր կար. շար գոռբա թաքավոր էր: Դրան երկու տղա ուներ, մի կնիկ: Մնել արաբ մեհտար (ծիապան) ուներ: Դրա հ'ամենան մի բանը էր մեհտարի ձեռովն էր հ'անց կենում. տղեքանցիցը հ'ավելի էր սիրըմ, որ հ'իրան հավատարիմ էր: Արանքը քաշեց մի վախտ, թաքավորի կնիկը մեռավ: Թաքավորը շար էր տխրում, մի հինգ տարի արանքը քաշեց, կանչեց հ'իրա արաբ մեհտարին:

- Մեհտար,- ասեց,- էրկու ձի հազրա, էթանք մի քիչ ման գանք, սիրտս բացվի» («Ոսկե քաքուլ տղի հեքիաթ», ՀԺՀ I 1959, 241):

«Մին թաքավոր ա լըմ, էրկու տղա յա ունենըմ, մեկի անունը Պողոս, էն մեկինը՝ Պետրոս: Էր թաքավորի կինը մահանում ա, էր թաքավորը մի քանի տարի մնում է նհե բրախլամա: Մին լավ հավատարիմ նոքյար ա ունենում, անունը Արաբ ա լըմ: Ասըմ ա.

- Արաբ, տեղս նեղ ա, տխուր եմ, քանի տարի ա կինս մահացել ա, ըխեքս էլ մեծացել են, արի տյուա քյանք, քյանք ման կյանք» («Ոսկեքաքուլ տղեն», ԺՀԺԳ № 12):

Ինչպես տեսնում ենք, երկու հատվածների միջև զգալի տարբերություններ կան: Տարբերությունը, իհարկե, հերոսների անուններով չի պայմանավորված. պատումի գրավոր սկզբնադրյություն ևս հետագա շարադրանքում թագավորի ձիապանը արաբ է կոչվում, իսկ որդիները՝ Պողոս և Պետրոս: Երկու տարբերակների սյուժետային հիմնական գիծը ևս հիմնականում նույնն է. գործողությունների և դեպքերի զար-

գացման առումով հեքիաթասացը որոշ վերապահումներով հավատարիմ է մնում ընթերցված տարբերակին: Այնուամենայնիվ, Դավթյան Թերեզայի պատումը հայտնի սյուժեի մի նոր՝ ինքնուրույն տարբերակ է: Հեքիաթասացը ոչ թե հանդես էր գալիս որպես նյութի մեքենայական վերաշարադրող, այլ ի գործ դնելով հեքիաթասացի իր յուրահատուկ պատմելաոճը՝ ստեղծում էր իր տարբերակը: Տվյալ դեպքում, նույնիսկ արդեն անկարևոր է դառնում այն հանգամանքը, թե պատումը հեքիաթասացին ծանոթ է բանավոր ավանդման, թե գրավոր նյութի ընթերցման ճանապարհով: Համոզված կարող ենք ասել, որ հեքիաթի այս նոր տարբերակը բանագետների համար նույնքան արժեքավոր է: Այս պարագայում, փաստորեն, ոչ մի կերպ չի խաթարվում նյութի ժողովրդականությունը. մեկ դար առաջ պատմված հեքիաթը («Ոսկե քաքուլ տղի հեքիաթ»-ը գրառվել է 1913թ. աշտարակցի Դավիթ Դավթյանից, ՀԺՀ I 1959, 651) մի ժողովրդական ասացողից փոխանցվում է մեկ ուրիշի, այս դեպքում, իհարկե, գրանցված և տպագրված տարբերակի միջոցով, և ավանդական հեքիաթը նոր կյանք է ստանում:

Ինչ վերաբերում է գեղարվեստական մշակման ենթարկված հեքիաթների կրկին բանավոր խոսքարվեստ մուտք գործելուն, ապա այս դեպքում, իհարկե, ժողովրդական նյութն արդեն որոշակիորեն կորցնում է իր նախնական անաղարտությունը և ձեռք է բերում հեղինակային կնիք: Եթե եվրոպական ժամանակակից հեքիաթասացներն այսօր բացառապես պատմում են Գրիմների, Անդերսենի, Պերրոյի հեքիաթները (Risto Järvi 2000: 39), ապա մեր օրերի հայ հեքիաթասացները մեծապես ազդվում են Ղ.Աղայանի ու Հովհ.Թու-

մանյանի պատումներից, վերջինիս դեպքում նաև որոշ թարգմանական հեքիաթներից: Այս դեպքում դարձյալ ժողովրդական նյութն է շրջանառության մեջ մտնում, բայց արդեն՝ գեղարվեստորեն հղկված և կատարելագործված. ժողովրդից վերցված և մշակված հեքիաթը ժամանակի ընթացքում վերստին վերադառնում է ժողովրդին:

Ասվածն ավելի համոզիչ դարձնելու համար բերենք նմանատիպ օրինակներ: Այսպես. հեքիաթների նոր գրառումներում կա «Քեֆ անողին քեֆը անպակաս կըլի» վերնագրով մի հեքիաթ՝ գրառված 2008թ. Հաղարծին գյուղում Բաբկեն Հարությունյանից (Վարդանյան Նվ. 2009, 143): Բանասացը, այս պատումից բացի, պատմել է ևս չորս հեքիաթ՝ մեր ավանդական հեքիաթացանկին շատ բնորոշ և տարբերակներով հարուստ: Ի տարբերություն վերջինների «Քեֆ անողին քեֆը անպակաս կըլի» հեքիաթի տարբերակներ հայ ժողովրդական հեքիաթների մեզ ծանոթ գրառումներում չկան: Հեքիաթի բովանդակությունը շատ մոտ է Հովհ.Թումանյանի մշակած «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» հեքիաթին, որը, ինչպես տեղեկանում ենք Թումանյանի ակադեմիական բազմահատորյակի ծանոթագրումների բաժնից, հայ հեքիաթագիրը կատարել է՝ հիմնվելով արևելյան մի զրոյցի վրա (Թումանյան 1994, 784): Ոչ մի տեղ չի նշվում, թե հեքիաթի հիմքում ընկած են նաև հայկական տարբերակներ: Եթե դիպաշարը հայ հեքիաթացանկին բնորոշ չէ, ուրեմն անշուշտ այն ժողովրդական խոսքարվեստ է փոխանցվել հենց Հովհ.Թումանյանի մշակման շնորհիվ: Այս դեպքում հետաքրքիր է նաև այն, որ մեծ հեքիաթագրի շնորհիվ ազգային հեքիաթացան-

կը հարստանում է նաև այլ ժողովուրդների մեջ կենցաղավարող սյուժեներով:

Մեկ այլ օրինակ, որն այս դեպքում գրական հեքիաթի մասնակի ազդեցության փաստ է արձանագրում: 2007թ. Արամուսում բանասաց Լալա Պետրոսյանից գրառվել է հինգ հրաշապատում հեքիաթ, որոնցից մեկը՝ «Խորթ ախշկա նաղլ» (ATU 480), զարգանալով մեր ժողովրդական հեքիաթին բնորոշ մոտիվներով, որոշ ազդեցություն է կրում նաև Թումանյանի կողմից թարգմանված Գրիմների «Մոխրոտը» հեքիաթից: Այդ ազդեցությունը ակնհայտ է հեքիաթի վերջին հատվածում և հատկապես թումանյանական չափածոյի տողերի բառացի կրկնությամբ: Երբ խորթ մայրը, իր հարազատ աղջկա կրունկը կտրելով, հագցնում է ոտնամանը, և արքայազնը, կարծելով՝ գտել է իր հարսնացուին, տանում է պալատ, ճանապարհին մոր գերեզմանի մոտից թռչունները երգում են.

***«Թագավորի՛ տղա, թագավորի՛ տղա,
Փոքր է ոտին ոտնամանը,
Քո հարսնացուն մնաց տանը» (ԺՀԺԳ N° 30):***

Նմանատիպ օրինակներ կարելի է էլի բերել. «Եղեգնի աղջիկը» (ԺՀԺԳ N° 25), «Ձանգի-գրանգի» (ԺՀԺԳ N° 30) հեքիաթները ակնհայտորեն կրում են Ղ.Աղայանի «Եղեգնուհին» և «Ձանգի-գրանգի» մշակումների ազդեցությունը: Այսօր ժողովրդի մեջ բավական տարածված են «Անխելք մարդու» տարբերակները (ԺՀԺԳ N° 1, 32), որոնք մոտիվներով հարազատ են Թումանյանի մշակմանը:

Իհարկե, պետք է նշել նաև, որ տեսականորեն շատ պարզ սահմանվող այս երևույթը գործնականում կոնկրետ օրինակներով ցույց տալը միշտ չէ, որ հնարավոր է. երբեմն բավական մեծ է նաև սխալված լինելու հավանականությունը:

Երբ դպրոցական էի, սարում ոչխարներ արածացնող հովվից լսեցի «Էսպես չի մնա» զրույցի մի տարբերակ՝ ճիշտ և ճիշտ Հովհ.Թումանյանի ստեղծագործության նման: Այն ժամանակ բանահյուսության մասին շատ հստակ պատկերացում չունեի և միամտաբար կարծեցի, թե հովիվը Թումանյանի ստեղծագործությունը պատմում է՝ նույնիսկ չիմանալով դրա հեղինակին: Երկար ժամանակ պետք է անցներ, որ հասկանայի, որ իրականում Թումանյանն է այդ հյուսվածքը վերցրել ժողովրդից: Բայց նույնիսկ հիմա էլ դժվարանում եմ որոշել, թե հովվի պատմածը իսկապե՞ս ժողովրդական, թե՞ Թումանյանական պատումից էր սկիզբ առնում:

Իրականում այս դեպքում դա բոլորովին կարևոր էլ չէ: Ի վերջո, Թումանյանն ինքը մի վիթխարի հեքիաթասաց է, որը ստեղծում էր բանահյուսության իր՝ գրական բարձրարժեք տարբերակները՝ հղկելով և բյուրեղացնելով բնության մեջ աճած անմշակ ադամանդը և ամենևին չաղարտելով դրանց էությունը՝ ժողովրդականությունը: Թերևս դա է պատճառը, որ այսօր ժողովուրդը Թումանյանի հեքիաթներն էլ է համարում իրենը և շարունակում պատմել պապերից ժառանգած հեքիաթներին զուգահեռ:

Ընդհանրապես, մեր օրերում այլևս անհնար է խոսել անաղարտ բանահյուսական հեքիաթի մասին: Ժամանակակից իրականության մեջ ոչ միայն գրականությունը, այլև ռադիոն, հեռուստատեսությունը, համացանցը վաղուց արդեն խլել են

ժողովրդական հեքիաթասացների մենաշնորհը: Այս առումով խիստ բնութագրական է Ջեք Ջայփսի պատկերավոր համեմատությունը: Ամերիկացի հեքիաթագետը հեքիաթը նմանեցնում է 54 միլիոն տարի առաջ օվկիանոսում ապրած մի կետի, որը նախապես եղել է փոքր, սակայն կլանելով այն բոլոր մանր ձկներին, որոնք երբևէ անցել են իր կողքով՝ մեծացել է. աճելու և գոյատևելու համար այն սկսել է հարմարվել փոփոխվող միջավայրին: Նույն կերպ միավորվել են հնագույն ժամանակներում աշխարհում տարածված մանր պատմվածքները՝ ստեղծելով մեկ վիթխարի ժանր, որն այսօր էլ շարունակում է գոյատևել և՛ բանավոր, և՛ գրավոր, և՛ տեխնիկական նորարարությունների ձևով՝ կերպարվեստ, լուսանկար, ռադիո, կինո, և նույնիսկ ընդլայնել է իր սահմանները համացանցում (Zipse Jack 2011: 221-222): Հեքիաթի այս տարբեր դրսևորումների փոխազդեցությունների դիտարկումը, անշուշտ, ուսումնասիրողին շատ հեռու կարող է տանել:

Այսքանով հանդերձ պետք է ուրախությամբ արձանագրել, որ մեր ժողովրդական հեքիաթը, չնայած նմանատիպ ազդեցություններին, առավելագույնս հարազատ է մնացել իր բանավոր ավանդմանը. համենայնդեպս, այդ մասին է վկայում նոր գրառված պատումների և նախորդ դարուկեսի գրառումների համամատությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ. ԺԱՆՐԻ ԵՎ ՊՈԵՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդի* հայ գրական հեքիաթը ժամանակակից հայ գրականության ինքնատիպ ձևերից է: Այն թերևս ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել, սակայն բավական ուշագրավ խնդիր է մեր օրերում: Ընդհանրապես ժամանակակից հայ գրականությունն իր բոլոր ձևերում՝ թե՛ չափածո, թե՛ արձակ և թե՛ դրամատիկական, առանձնակի հետաքրքրություն է դրսևորում հեքիաթի նկատմամբ, որի պոետիկ տարբեր ձևեր շատ հաճախ կիրառվում են գրական տեքստերում (որը, կարծում ենք, նորություն չէ ժամանակակից գրականության համար, քանի որ 20-րդ դարի 60-70-ականներից սկսած արդեն այս միտումը խիստ արդիական է դիտվում): Հեքիաթագրության ժամանակակից միտումներին անդրադառնալով, մասնավորապես քննության առնելով Էդվարդ Միլիտոնյանի, Լևոն Խեչոյանի, Երազիկ Գրիգորյանի, Արփի Ոսկանյանի, Արմինե Աբրահամյանի (Արմինե Անդա), Էդուարդ Ավագյանի, Վահագն Գրիգորյանի, Թադևոս Տոնոյանի, Անուշ Վարդանյանի, Ղուկաս Սիրունյանի, Երվանդ Պետրոսյանի, Սամսոն Ստեփանյանի ստեղծագործությունները՝ կարելի է առանձնացնել գրական հեղինակային հեքիաթի հետևյալ դրսևորումները.

* **Արդի** ասելով՝ մենք նկատի ունենք հայ գրականության հետանկախության շրջանը, շրջան, որը կարծում ենք պարբերացման կարիք ունի, քանի որ հետանկախության շրջանն արդեն երկու տասնամյակի պատմություն ունի:

ա. երբ բանահյուսական հեքիաթի պոետիկայի հենքի վրա ստեղծվում են նոր հեղինակային հեքիաթներ, որոնցում պահպանվում են ֆոլկլորային հեքիաթի կանոնները (օրինակ՝ Վահագն Գրիգորյանի «Հեքիաթների գիրքը», Երազիկ Գրիգորյանի հեղինակած հեքիաթները, մասնավորապես «Ձերդ գերազանցություն վատ կախարդ պառավ» գիրքը, Էդվարդ Միլիտոնյանի «Արքայադուստր Թարսինեն», «Շաքարավազ արքայազնը» և այլն),

բ. ավանդական ժողովրդական հեքիաթների հեղինակային մշակումներ (օրինակ՝ Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն),

գ. լրիվ նոր հեքիաթային-գերբնական աշխարհի ստեղծելու հեղինակային միտում, երևույթ, որին սովորաբար տալիս են **ֆենթազի** ժանրանվանումը (օրինակ՝ Արմինե Անդայի «Անկիմյուրի բնակիչները» հեքիաթ-վեպը),

դ. ավանդական բանահյուսական և գրական հեքիաթների վերահիմաստավորում և քայքայում (օրինակ՝ Արփի Ոսկանյանի «Կարմիր գլխարկով գայլը», Արմեն Օհանյանի «Կիկոսի վերադարձը» և այլն): Սրանք հարկ է ընդունել որոշակի վերապահությամբ, քանի որ հեղինակները խուսափում են գրական նմանատիպ էքսպերիմենտներն անվանել հեքիաթ:

Գրական հեքիաթի վերոնշյալ դրսևորումները հանդես են գալիս գրական զանազան ժանրերի համադրությամբ և բազմազանությամբ, այսպես, օրինակ, հեքիաթ-վեպ (Ա. Անդա, «Անկիմյուրի բնակիչները»), հեքիաթ-վիպակ (Էդվ. Միլիտոնյան, «Արքայադուստր Թարսինեն», Էդ. Ավագյան, «Մանգասչտնես վերջին թագավորը»), հեքիաթ-պատմվածք (Էդ. Ավագյան, «Փոքրերի մեծ աշխարհը» ժողովածուի որոշ հե-

քիաթներ, Էդվ. Միլիտոնյան, «Շաքարավազ արքայազնը» ժողովածուում ընդգրկված հեքիաթները), հեքիաթ-պոեմ (Ս. Ստեփանյան, «Ֆերդինանդ անունով թռչող վիշապը»), չափածո հեքիաթ (Երվ. Պետրոսյան, «Հեքիաթ մոծակի և փղեղի մասին», «Կաթ-կաթ հեքիաթ») և այլն: Նկատի ունենալով հեքիաթի և գրական ժանրերի համադրման բազմազանությունը ժամանակակից հեքիաթագրության մեջ՝ հարկ է հաշվի առնել նաև այն, որ շատ հաճախ մեր ժամանակներում հենց բուն հեքիաթի ժանրի նորովի ձևակերպման և որոշակի սահմանների ճշտման անհրաժեշտություն է զգացվում՝ կապված նաև այն հանգամանքի հետ, որ շատ հաճախ ժանրն իր պատմական տոպիկաներով հանդես չի գալիս, այլ ենթարկվում է հեղինակի քմահաճույքին և կամ գրական տարբեր տեսակների հետ դրսևորում է ժանրային գրեթե բացարձակ նույնականություն, սակայն, չգիտես ինչու, մի դեպքում ստեղծագործությունը համարվում է հեքիաթ, մյուս դեպքում՝ ոչ: Ընդհանրապես, երևույթը դիտարկելի է ոչ միայն հայ գրականության մեջ, այլև հայ գրականության սահմաններից դուրս: Սովորաբար ասվում է, որ ինչպես գրական-գեղարվեստական յուրաքանչյուր ժանր, այնպես էլ գրական հեքիաթը ենթարկվում է ժամանակի գրական և արտագրական երևույթների ազդեցությանը, և ժանրի հետ կապված այս քառտիկ դրսևորումները կարելի է կապակցել նաև ինչպես ժանրի զարգացման ներքին տրամաբանությանը (ժանրը սկսեցին հեղինակային տեսանկյունից «ձևախեղել» դեռևս Լուիզ Քերոլը, Ալան Միլնը, Աստրիդ Լինդգրենը), այնպես էլ ընդհանրապես աշխարհի գեղագիտական պատկերի մերօրյա վիճակին, քանի որ, այնուամենայնիվ, ինչպես 20-րդ դարը,

այնպես էլ 21-րդը դեռևս շարունակում են մնալ աշխարհի գեղագիտական պատկերի ոչ դասական, այն է՝ քառտիկ փուլում, որն իր ազդեցությունն է թողնում գրական ձևերի վրա, և հետևաբար գրական հեքիաթն էլ՝ որպես գրական ժանր, շարունակում է ենթարկվել «ձևախեղումների» օրինաչափությամբ:

Տեսական գրականության մեջ հեքիաթը, մասնավորապես բանահյուսական հեքիաթը ամենաընդհանուր առումով սահմանվում է որպես բանավոր ստեղծագործության ժանրերից մեկը, որի մեջ մարդիկ կամ դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ հրաշապատում գծերով: Սա, իհարկե, ժանրի ամենաընդհանուր և մակերեսային ընթերցումն է, սակայն երեք չափորոշիչներ կան, որոնք բոլոր պարագաներում բնութագրում են ժանրը՝ չափազանցություն, այլաբանություն, հրաշապատում: Սակայն 20-րդ դարում ընդհանապես գրական տեքստը հակված է նման հատկանիշների, ինչպես, օրինակ, Կաֆկայի արձակը ընդհանրապես, Օրուելի «Անասնաֆերման», բայց այս տեքստերը մենք չենք ընթերցում որպես հեքիաթ, չնայած դրանք, եթե հեղինակի կողմից անվանվեին այդպիսին, մենք կընկալեինք այդպես: Հետևաբար կարծում ենք՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ ժանրի սահմանման վերանայման անհրաժեշտություն կա թերևս, քանի որ, ինչպես նշվեց, շատ դեպքերում ժանրի վկայակոչումը կարծեք թե բխում է հեղինակի ցանկությունից, որը երբեմն անտրամաբանական է թվում: Օրինակ՝ անդրադառնալով հայ գրականությանը, մասնավորապես Էդվարդ Միլիտոնյանի հեքիաթագրությանը՝ ակնհայտ է դառնում, որ ժանրի ան-

վանակոչումը շատ հաճախ կամայական սկզբունքով է արվում: Այսպես՝ հեղինակի երկու ժողովածուները՝ «Արքայադուստր Թարսինեն» և «Շաքարավազ արքայազնը», բնութագրվում են որպես հեքիաթ-վիպակներ, պատմվածքներ, պիեսներ, որոնց հասցեատերը գրականության մեջ հրաշքներ, խիզախություն, բարություն փնտրող մանուկներն են ու պատանիները: Սակայն ժողովածուների ստեղծագործություններում սահմանը հեքիաթի և պատմվածքի, հեքիաթ-վիպակի և վիպակի միջև հստակ չէ, և այս անհստակությունը բնորոշ է ընդհանրապես հեղինակի մանկական գրականությանը: Հեղինակն իր գրեթե բոլոր (չասելու համար բոլոր) մանկական ստեղծագործություններում՝ թե՛ «Արքայադուստր Թարսինեն»-ում, թե՛ «Շաքարավազ արքայազնը» գրքում, թե՛ «Վահագն վիշապաքաղ»-ում, թե՛ «Հնարամիտ բադի ճամփորդություն»-ում, թե՛ Չիպո կրիայի մասին պատումներում, թե՛ «Երազանքի ասպետի ճանապարհորդությունը» գրքում, կիրառում է գրեթե նույնատիպ գեղարվեստական հնարքներ, ճանապարհորդություններ, երազային՝ ոչ իրական տարածքներ, միջական ենթատեքստեր, խաղային տարրեր, սակայն մի դեպքում ստեղծագործությունների մի մասը համարվում է հեքիաթ, մյուս մասը՝ ոչ: Նույնիսկ միևնույն պատումը՝ օրինակ՝ «Եղջերուն», մի գրքում նշվում է որպես հեքիաթ («Շաքարավազ արքայազնը»), մեկ այլ գրքում՝ որպես պատմվածք («Արքայադուստր Թարսինեն»): Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հեղինակի համար ժանրանվանումը խիստ պայմանական դրսևորում ունի:

Էդվ. Միլիտոնյանի հեքիաթագրության մյուս առանձնահատկությունը ընգծված խաղային բնույթն է՝ ավանդականի

և նորի, ընդհանուրի և խիստ անձնականի շերտերով: Հնարք, որի միջոցով աստիճանաբար գծագրվում է ժամանակակից հեքիաթագրության մի առանձնահատկություն՝ ժանրաքայքայումը: Կարելի է կարծել, որ ժանրի ոչ այնքան տրամաբանական ներգագսողությունը միգուցե բխում է հեղինակի կողմից ժանրի քայքայման նախասիրություններից, եթե այո, ապա այդ խնդիրը հետևողական լուծում չի ստանում ստեղծագործական համակարգում: Միլիտոնյանական հեքիաթները, ավանդական հեքիաթի ժանրային հիմքերի վրա կառուցված լինելով, աչքի են ընկնում իրենց մոդեռն լուծումներով, այսպես, օրինակ, հեղինակը սիրում է խաղալ հեքիաթային սկսվածքների հետ. «Կա և միշտ պիտի լինի հնարամիտ ճանապարհորդ Բադալը» (Միլիտոնյան Էդվ. 2004, 3), «Կար և հաստատ կար», «Կար չկար մի թագավոր. կար չկար թագավորը ձի ուներ»: Ստեղծագործություններում կարող ենք հանդիպել աբստրակցիոնիստ նկարիչ Ջիգի շնիկին (աբստրակցիոնիզմը միջտեքստային երգիծման ենթարկելու միտումով) (Միլիտոնյան Էդվ. 2004, 34) կամ պատկերային առումով ակնհայտ սյուրռեալիստական անցումներ. «Նարնջագույնն այնքան է նարնջագույն, (Որ ձին վրնջում է նրան նարնջագույն» (Միլիտոնյան Էդվ. 2004, 80): Կարող ենք, իհարկե, փորձել դասակարգել Միլիտոնյանի հեղինակած հեքիաթները ըստ բովանդակային-ժանրային առանձնահատկությունների, ինչպես, օրինակ, կենդանական հեքիաթներ՝ «Ընծուղտն ու տղան», «Տանձակերն ու արջատարը», առակատիպ հեքիաթներ՝ «Ագահն ու ամենակարողը», հրաշալի-կերպարանափոխություն հեքիաթ՝ «Ոսկին», «Աղջիկն ու թի-

թեռները» և այլն, սակայն, ինչպես ասվեց վերը, ժանրի հստակ տրամաբանությունը հեղինակի գործերում կաղում է:

Ժանրի վկայակոչման պայմանական մոտեցում է նկատվում նաև Էդուարդ Ավագյանի հեքիաթագրության մեջ, մասնավորապես «Փոքրերի մեծ աշխարհը» ժողովածուում, որը երկու մասից է բաղկացած՝ «Կանաչ արահետներ»՝ «պատմվածքներ ամենափոքրերի համար», և «Անտառային ձայներ»՝ «ժամանակակից հեքիաթներ և պատումներ ավելի մեծերի համար, որ հասկանան կյանքի բարին և չարը ու ավելի խելոք դառնան»*: Սակայն այս պարագայում ևս ժողովածուի հատկապես երկրորդ մասում նկատվում է անհստակություն, քանի որ սահմանը հեքիաթի և պատումի միջև չի գծվում, և թե ինչից ելնելով են ստեղծագործությունների մի մասը համարվում հեքիաթ, մյուս մասը՝ պատում, և թե պատում ասելով՝ կոնկրետ նման պարագայում ինչ նկատի ունի հեղինակը՝ մնում է կամայական: Որպես ժանրի յուրահատուկ դրսևորում՝ հարկ է անդրադառնալ նաև Էդուարդ Ավագյանի «Մանգասզտնես վերջին թագավորը» հեքիաթ-վիպակին, որում հատկապես ընդգծված է ժանրի այլաբանական կողմը, քանի որ հեքիաթային միջական այլաբանության տակ հեղինակը փորձում է թաքցնել ժամանակակից իրականության հատկապես քաղաքական կողմը և մասնավորապես իշխող վերնախավի և հասարակ ժողովրդի բախումը: Քաղաքական ենթատեսքտով հագեցած են նաև վերոնշյալ հեքիաթ պատումները. օրինակ՝ «Առյուծի բաժինը» հեքիաթում հետևյալ միտքն է

* Հարկ է նշել, որ ժամանակակից գրական հեքիաթի ուշագրավ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ շատ հաճախ հասցեատերերը ոչ միայն երեխաներն են, այլև մեծահասակները:

կարևորվում. «Կարևորը ուժն է, մյուս գազաններին հոշոտելու կարողությունը: Այսպես է վերուստ՝ օրենքը ուժեղինն է և իրավունքը՝ նույնպես», «Ինչ կա որ, նախ գահ՝ այսինքն նախագահ, իսկ հետո տեսնենք» (Ավագյան Էդ. 2007, 121): «Մանգասզգտնես վերջին թագավորը» հեքիաթ-վիպակում պատկերվում են բռնապետ արքայի և նրա է՛լ առավել այլանդակ դստեր՝ Չեմ-Չումի հեքիաթային-այլաբանական կերպարները և նրանց արարքները: Մյուս կողմից հեղինակը ստեղծում է ժողովրդական-հերոսական առասպելական ծագում ունեցող կերպարներ, ինչպես Հազնվան (Վահագն), Նուրի-Նուրին (պտղաբերության և հողի աստվածուհին), որոնք պայքարում են թագավորի և առասպելական Վազդ-Արտայի (Արտավազդի) դեմ: Ըստ էության թե՛ Միլիտոնյանի, թե՛ Ավագյանի պարագայում նկատվում է ժանրի ներքին քայքայման միտում, ինչը այս հեղինակի գործերում նույնպես դրսևորվում է երգիծական ձևերի կիրառության միջոցով: Այսպես՝ առասպելական-միջոլոգեմիկ շերտերին զուգահեռ հեքիաթներում ակտիվորեն մասնակցում է ժամանակակից տարրը, օրինակ՝ Նուրի-Նուրիի՝ երաշտահար դաշտերին կենարար անձրև բերելու ծիսական արարողությանը զուգահեռ պատկերվում է, թե ինչպես է Չեմ-Չումը, մոտոցիկլի վրա նստած, դեպի աջ ու ձախ սլանում, Վազդ-Արտայի աշխարհակործան հայտնության երկյուղն ապրող հերոսները, գալիֆյե և ջինսեր հագած, խմում են «Քինձմարաուլի» և այլն: Սակայն ինչպես Միլիտոնյանի, այնպես էլ Ավագյանի պարագայում ժանրաքայքայումը հետևողական միտում չի դառնում՝ ի տարբերություն Արփի Ոսկանյանի և Արմեն Օհանյանի ստեղծագործությունների, որոնք ժանրի բացահայտ քայքայ-

ման օրինակ են ժամանակակից հայ հեքիաթագրության մեջ: Սակայն այստեղ մի բայց կա. վերոնշյալ հեղինակները իրենց ստեղծագործությունները չեն անվանում հեքիաթ, դեռ ավելին՝ Օհանյանը իր ստեղծագործություններին տալիս է «պատմվածքներ» ժանրային բնորոշումը, իսկ Արփին կարծես առանձնապես չի կարևորում ժանրի խնդիրը: «Կիկոսի վերադարձը» պատմվածքում պատմողը հենց ինքը Կիկոսն է, որը համոզված է, որ «իր ժողովրդի հետագա հաջողությունը Թումանյանի հեքիաթները վերապրելուց է կախված»: Նրա համոզմամբ՝ հայկական ժամանակը քարացել է երեք հզոր հեքիաթի մեջ. «Ձախորդ փանոսը» հայի անցյալն է, հայի բախտը, որ չի բերել, «Քաջ Նազարը»՝ ներկան, հայոց երազն ու երազանքը, իսկ «Կիկոսի մահը»՝ վախն ապագայի հանդեպ», և հեղինակն ուզում է հաղթահարել Կիկոսի մահվան պատմությունը՝ վերապրելով սույն հեքիաթը:

Ժանրի յուրատեսակ քայքայման, ինչպես նաև ամբողջովին նոր տիպի հեքիաթի կառուցման բավականին ուշագրավ օրինակ է Արմինե Անդայի հեքիաթագրությունը, որի «Անկիմ-յորի բնակիչները» հեքիաթ-վեպը ժամանակակից գրական հեքիաթի այն տիպին է պատկանում, որը արևմուտքում ընդունված է անվանել ֆենթաֆի: Հեքիաթ-վեպը աչքի է ընկնում գաղափարական, պատկերային անավարտությամբ, ինչպես նաև բացակայում է միասնական սյուժեի տրամաբանական զարգացման ընթացքը. մի հատկանիշ, որը ժանրի դասական ընկալման հիմնական բնորոշիչներից մեկն է: Դրա փոխարեն՝ հորինվածքը դառնում է գեղարվեստական տեքստի հիմնական նպատակը՝ շատ հաճախ անտրամաբանական, շատ հաճախ անկապակից: Այն աշխարհը, որ ստեղծում է

Անդան իր Անկիմյուրով և նրա բնակիչներով, հսկա, անսահման մի տարածություն է, որտեղ չկա ծնունդ և չկա մահ, բայց կա կյանքի հավերժական նորոգում: Կենդանի կյանքը ձգվում և հավերժ նորոգվում է ժամանակային որևէ ընդգրկումից դուրս: Իսկ հեքիաթը այն մասին է, թե Անկիմյուրի ամենագեղեցիկ և ամենատրեղալ թարթիչներ ունեցող աղջիկը՝ Մյուսեթը, ինչպես է նայում ձյանը:

Ժանրի ավանդական դրսևորման տեսանկյունից ժամանակակից հեքիաթագրության մեջ բավականին ուշագրավ են Վահագն Գրիգորյանի հեքիաթները: «Հեքիաթների գիրքը», որը բաղկացած է երեք գրքերից՝ «Հեքիաթների անտառ», «Հեքիաթների քաղաք», «Հեքիաթների հովիտ», որոնք ժանրային տեսակետից բխում են ժանրի ներքին և արտաքին իմաստաբանությունից՝ վաղնջական ժամանակի պատկերում, ժամանակի առասպելական-ցիկլիկ բնույթ, տարածական անորոշ-որոշակիություն՝ անտառ, քաղաք, հովիտ, առասպելականի և իրականի համադրությամբ կառուցված հեքիաթային հերոսներ և, որ ամենաբնորոշն է ժանրին, միֆականի, առասպելական այլաբանականի և կախարդականի համադրությամբ քայլ առ քայլ հեղինակը անջատում է կոսմոսը քաոսից՝ հաստատելով տիեզերական ներդաշնակությունը, կարգն ու կանոնը: Ըստ էության, սրանք միֆական կոսմոգենեզի վրա հիմնված հեքիաթներ են, որոնցից յուրաքանչյուրը թեև առանձին հեքիաթ է, սակայն կոմպոզիցիոն առումով ներքուստ կապված են և նրբորեն բխում են մեկը մյուսից այնպես, որ ստեղծում են միասնական մի հյուսվածք՝ հեքիաթ-վեպի ժանրային ձև: Վիպական մասն ապահովում է հեքիաթների այս գրքի մյուս շերտը՝ հեղինակի ներկայություն:

նը հեքիաթներում՝ թե՛ որպես հեքիաթասաց, թե՛ որպես երկի հերոս, քանի որ գրքի մի ներքին շերտում յուրաքանչյուր գրքի նախաբանում տվյալ հեքիաթների նախապատմությունը հյուսելիս հյուսվում է նաև հեղինակ-հերոսի ներքին ողբերգությունն ու դրաման. հերոս, որն այդ ընթացքում ճաշակում է երեխայի հետ լինելու և աշխարհը երեխայի աչքերով վերաիմաստավորելու բերկրանքը, ապա երեխայից բաժանվելու և բաժանման ցավը ապրողի որբեգությունը և ի վերջո երեխային ժամանակավորապես վերագտնողի շուտափույթ շտապողականությունը՝ յուրաքանչյուր վայրկյանը արժևորելու և հավերժի մասին քննելու փիլիսոփայական մղումով: Եվ կյանքի յուրաքանչյուր փուլի հոգեվիճակը որոշակիորեն ազդում է յուրաքանչյուր գրքի գունապնակի վրա:

Ժանրային առումով ինքնատիպ և ընդհանրապես թերևս ժամանակակից հայ հեքիաթագրության մեջ բացառիկ է Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն, որը, ինչպես հեղինակն ինքն է նշում. «Մեծ Հայքի Այրարատ նահանգի Սուրմալուի գավառի հեքիաթների մի փունջ է» (Խեչոյան Լևոն 2002, 3): Հեքիաթներն իրենց տեքստային համաբանություններն ունեն ժողովրդական հեքիաթներում, և ըստ էության, սրանք ժողովրդական հեքիաթի հեղինակային մշակումներ են. մի բան, որ հազվադեպ է հանդիպում ժամանակակից հեղինակային հեքիաթագրության մեջ: Այս ավանդը բավականին թույլ է զարգացած մեր օրերում, քանի որ հիմնականում, ինչպես տեսանք վերը, ժամանակակից հեքիաթագրությունը կա՛մ զարգանում է հեղինակային հեքիաթների ստեղծման, կա՛մ հեքիաթի քայքայման միտումներով: Իսկ Խեչոյանի պարագայում մենք ունենք

մշակման սկզբունք, այստեղ կարևոր է դառնում խեչոյանական մոտեցումը հեքիաթին ժանրային դասակարգման առումով: Այս կապակցությամբ հարկ է մեջբերել հեղինակի խոսքը. «Հայ ժողովրդական հեքիաթները բաժանվում են երեք՝ հրաշապատում (կախարդական), իրապատում (կենցաղային) և էզոտերիկ, մետաֆիզիկական խմբերի» (Խեչոյան Լևոն 2002, 3): Եվ հեղինակն ինքն իր հեքիաթները դասում է երրորդ՝ էզոտերիկ, մետաֆիզիկական խմբում: Տեսական միտքն, ըստ էության, կիրառում է հեքիաթների դասակարգման առաջին երկու սկզբունքներն ամենալայն առումով, այնինչ «էզոտերիկ կամ մետաֆիզիկական խմբի հեքիաթներ» դասակարգումը գոնե մեզ համար նորություն է: Ընդհանրապես էզոտերիզմը և մետաֆիզիկական մեկնաբանվում են նաև որպես գաղտնագիտություն, որոնք, ըստ էության, իրականության գիտական, հոգևոր, փիլիսոփայական ճանաչման այլընտրանքային ձևերից են: Էզոտերիզմի և մետաֆիզիկայի հիմնական նպատակն է հնարավորինս խորությամբ հասնել իրերի և երևույթների հստակ ու անաղարտ ընկալմանը: Եվ իրականում խեչոյանական հեքիաթի մշակման սկզբունքը բխում է հենց էզոտերիկական խորաթափանց ներքնատեսության սկզբունքից: Այս հեքիաթները միտված են ներքին տարածքների բացահայտմանը՝ հեքիաթի արտաքին ձևի պահպանման սկզբունքով: Ժանրային, կառուցվածքային առումով սրանք հրաշապատում և իրապատում հեքիաթների ժանրային սինթեզի հիման վրա կառուցված հեքիաթներ են, և այդ է պատճառը, որ իրականությունը, որ ստեղծում է հեղինակը իր հեքիաթներում, ոչ միանշանակ իրական է, ոչ միանշանակ կախարդական. իրականի և կախարդականի

սահմանազանց այդ վիճակը ստեղծում է մի նոր իրականություն, որտեղ իրականը նույնքան գերբնական է, որքան գերբնականը՝ իրական: Նախ և առաջ վերոնշյալ միտումը դրսևորվում է ի սկզբանե հեքիաթների որոշակի հետևողականությամբ ստեղծված սկսվածքների մեջ. բոլոր հեքիաթները, բացառությամբ երկուսի, սկսվում են «Ժամանակով», «հին ժամանակներում», «Ժամանակին...լինում է» բառերով, միայն մեկ հեքիաթ, որն ունի բացահայտ իրապատումի կառույց, սկսվում է առանց հեքիաթին բնորոշ սկզբի. «Մի հարուստ մարդ առավոտյան...» («Մուրացկանը, հարուստը»), և մեկ հեքիաթ էլ, որը բացահայտ հրաշապատում հեքիաթի բնույթ ունի՝ «Քարափի մեջ փակված աղջիկը», սկսվում է «Լինում է, չի լինում» սկսվածքով: Սովորաբար հեքիաթներում կարևորվում է նաև տարածական շերտերի առկայությունը կամ բացակայությունը, որը նաև հրաշապատում և իրապատում հեքիաթների ժանրային տարորոշիչները մեկն է: Ջուզահեռ աշխարհների՝ իրական և գերբնական, առկայությունը բնորոշ է հիմնականում հրաշապատում հեքիաթներին, այնինչ իրապատում աշխարհները բնութագրվում են իրենց միաշերտությամբ՝ իրենց իրական և երկրային բնույթով: Սակայն այս առումով Խեչոյանի հեքիաթները նույնպես բավականին ուշագրավ են իրենց տարածական բազմաշերտությամբ: Այս հեքիաթների հիմնական առանձնահատկությունն այն է, որ սրանցում ոչ միայն համադրվում, կողք կողքի կառուցվում են գերբնական և իրական տարածքները՝ քարայրը, քարափը, թագավորի պալատը, կախարդական ջրերը, կախարդական անտառը, կախարդական այգին, վաճառականի շուկան, աղքատի խրճիթը, հովվի սարը, յոթ դևերի դղյակը, հարևանի

տունը, դրախտը և այլն, այլև առավել էական է այն, որ այս բոլոր տարածությունները գտնվում են ոչ այնքան դրսի աշխարհում, որքան հերոսի ներաշխարհում, այսինքն՝ հերոսի ընթացքի դրդապատճառները ոչ այնքան դրսից են միտված դեպի ներս, որքան ներսից են միտվում դեպի դուրս: Այսպես՝ Խեչոյանի հեքիաթներում հերոսների դեգերումների սկզբնապատճառը ոչ թե հեքիաթներում հայտնի արտաքին աշխարհի հետ ունեցած կոնֆլիկտից է ծնունդ առնում, այլ կերպարի ներքին կոնֆլիկտից, օրինակ՝ «Աղվեսն ու դրախտի թակարդը» հեքիաթում աղվեսը, որը սերում է Նոյի տապանում փրկված աղվեսների սերնդից, լինելով մեծ ուսման տեր, գիտակ և հետաքրքիր և շատ կարդացվող պոետ, աստանդական է դառնում այն ժամանակ, երբ հասկանում է, որ իր՝ մեկը մյուսից խորհրդավոր, ձեռքից ձեռք փոխանցվող գրքերը հաց չեն բերում, և նա տարին տասներկու ամիս քաղցած է մնում, որի հետևանքով «կասկածը աստիճանաբար մաշում է հաստատակամությունը, և քաղցը սասանում է հավատը առեղծվածի նկատմամբ»: Կամ «Ճանապարհորդը» հեքիաթի թագավորը ավանդական հեքիաթներին բնորոշ կոնֆլիկտ է ստեղծում իր երեք որդիների համար միայն այն ժամանակ, երբ «առաջացող տարիքի հետ մազերին արդեն ճերմակն է նստում, հասկանում է իրեն տրված միակ կյանքի անցողիկությունը, և կասկածը սկսում է տանջել նրան, թե արդյոք իր ապրած կյանքը եղավ այնպես, ինչպես նախանշված էր ի սկզբանե» (Խեչոյան Լևոն 2002, 17): «Տան պահապան հրեշտակը» հեքիաթում հերոսների անախորժությունները սկսվում են այն ժամանակ, երբ վերջիններս դադարում են եկեղեցի հաճախել, սկսում են անդադար աղմկել, վիճել իրար

հետ, իրար չսիրել, ինչի հետևանքով տան պահապան հրեշտակը երես է թեքում նրանցից և հեռանում: «Հարևանի սև կատուն» հեքիաթում չարը, որը մարմնավորված է հարևանի կատվի մղձավանջի մեջ, իրականում այն է, ինչ հերոսներն իրենք իրենց համար ստեղծում են. որքան նրանք ավելի են վախենում կատվից, այնքան նա ավելի է հզորանում: Նմանատիպ հարցադրում ունի նաև «Աներևույթ վիշապը» հեքիաթը, որում սարսափելի վիշապը ոչ թե ինչ-որ գերբնական էակ է, այլ մարդու մեջ արմատացած չարը: Ներքին խորատեսություն, կրոնափիլիսոփայական իմաստություն. սրանք են խեչոյանական էզոտերիկ հեքիաթների հիմնական առանձնահատկությունները:

Արդի հայ հեղինակային հեքիաթը, կարելի է եզրակացնել, տարաբնույթ, պարականոն և ինքնատիպ դրսևորումներ ունի, որոնք հիմնականում մի քանի միտում են ուղենշում՝ բնահյուսական-գրական-ավանդական հեքիաթի քայքայում, ավանդական-հեքիաթի տոպիկաների հիմքի վրա գրական հեղինակային հեքիաթի ստեղծում, ինչպես նաև բանահյուսական-ժողովրդական հեքիաթի մշակում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեքիաթները ժողովրդական մտածողության լավագույն դրսևորումներից են, ժողովրդական լեզվի, բառ ու բանի մեծագույն ամփոփագրերը: Հատկապես ժողովրդական հեքիաթներում լավագույնս արտահայտվում են հասարակ ժողովրդի կենցաղավարությունը, առօրյան, հոգսերը, ձգտումներն ու պատկերացումները կյանքի, չարի ու բարու, երկրագնդի, համամարդկային արժեքների վերաբերյալ:

Պետք է նշել, որ բանահյուսության զարգացման ներկա փուլում՝ հեքիաթասացության կենդանի գործընթացի աստիճանական մարման պայմաններում, շատ ավելի կենսունակ է դառնում արդեն գրառված ժողովրդական հեքիաթը: «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական բազմահատորյակում լույս տեսած հեքիաթները ներկայումս առավելապես ծառայում են որպես գիտական ուսումնասիրման նյութ, քանի որ որոշ բարբառների անհասկանալիության պատճառով դժվար են յուրացվում հատկապես մանուկ ընթերցողի կողմից: Առաջ է գալիս արդեն գրառված հսկայածավալ հեքիաթային նյութը ընթերցող լայն շրջաններին մատչելի դարձնելու պահանջը, որն էլ իրականացվում է կա՛մ գրական մշակման, կա՛մ լեզվական փոխադրության ճանապարհով:

Հեքիաթի մշակման ասպարեզում փայլուն ձեռքբերումներ ունեցած հայ գրողների ավանդներն այսօր էլ շարունակվում են, բայց նոր դրսևորումներով, նոր մոտեցումներով, 21-րդ

դարի մարդու պահանջների հաշվառումով: Իսաչատուր Աբովյանից սկսած, Ղ. Աղայանով և Հովհ.Թումանյանով զարգացման ամենանշանավոր փուլին հասած հայկական ժողովրդական հեքիաթներն այսօր էլ հայ գրողների, հեղինակների գրչի տակ ապրում են երկրորդ կյանք, զարգացում, նորովի դրսևորում: Սակայն պետք է նշել նաև, որ արդի գրականության մեջ հիմնականում գերակշռում է հեղինակային հեքիաթը, իսկ ժողովրդական հեքիաթներ մշակող հայ գրողները ժողովրդական նյութի մշակման նոր մոտեցումներ են նախընտրում (այս մասին արդեն խոսվեց աշխատանքի նախորդ գլխում):

Հեքիաթի տարատեսակների այսպիսի բազմազանությունը, բնականաբար, լեզվական նույն օրինաչափություններին չի ենթարկվում: Բավական հարուստ և հետաքրքիր լեզվաոճական նյութ են ներկայացնում ինչպես ժողովրդական, այնպես էլ գրական հեքիաթները: Այստեղ է, որ լավագույնս դրսևորվում է առօրյա-խոսակցական լեզուն՝ իր շերտերով, երանգավորումներով, հուզաարտահայտչական դրսևորումներով:

Անշուշտ, ցանկության դեպքում կարելի է տալ հեքիաթներին հատուկ լեզվաոճական ընդհանուր բնութագիր՝ նկատելով նրանց բնորոշ պարզ ու անմիջական առօրյա-խոսակցական ոճը, պատկերավորման և արտահայտչականության միջոցներով հարուստ լինելը, պատրաստի խոսքային միավորների առատությունը և այլն: Պետք է նկատել սակայն, որ յուրաքանչյուր առանձին դրսևորման պարագայում հեքիաթի լեզուն տարբերվում է: Օրինակ՝ ժողովրդական հեքիաթը, որը պատմվում է կոնկրետ որևէ բարբառակրի կողմից, բնականաբար, ամբողջությամբ փոխանցում է տվյալ բարբառին հատուկ դրսևորումները՝ սկսած բառապաշարից և դրա հնչունական յուրահատուկ դրսևորումներից, վերջացրած ձևաբանական և շարահյուսական միջոցներով: Ժողովրդական հե-

քիաթի բանասացը, բնականաբար, լիովին տիրապետում է իր բարբառին և հաճախ նույնիսկ չի էլ կարողանում խոսել մաքուր, գրական լեզվով: Այսպիսի պատումները յուրահատուկ գանձ են բարբառներ ուսումնասիրող լեզվաբանների համար, որովհետև պատմվում են անմիջականորեն՝ փոխանցելով ժողովրդական լեզվի ողջ հյութեղ աշխարհը: Բարեխիղճ բանահավաքը, անշուշտ, մեծ և կարևոր գործ ունի անելու. նյութը թղթին պետք է հանձնել անաղարտ, նույնությամբ: Այլ բան է փոխադրված և մշակված հեքիաթի լեզուն: Այս դեպքում արդեն ուսումնասիրողը գործ ունի հեղինակային գիտակցված մոտեցմամբ մշակման ենթարկված լեզվի հետ: Հեքիաթ մշակող հեղինակները սովորաբար գիտակցաբար փորձում են պահպանել պատումի ժողովրդականությունը, այլապես հեքիաթը կկորցնի իր ակունքների հետ կապը և բանավոր պատումին բնորոշ հրապույրը: Ժողովրդական հեքիաթների մշակման փայլուն և մինչ օրս անգերազանցելի նմուշներ են Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Աթաբեկ Խնկոյանի (Խնկո Ապեր) կատարած մշակումները, որոնք մեծապես նպաստեցին հետագա մշակումների լեզվի ժողովրդականության սկզբունքների ձևավորմանը: Ի տարբերություն ժողովրդական հեքիաթները մշակողների, հեղինակային հեքիաթագիրները պարտավորված չեն իրենց ստեղծագործություններում հատուկ ընդգծել ժողովրդականությունը: Այսպիսի ստեղծագործությունները կարող են ստեղծվել արդի գրական՝ բարբառայնությունից ազատ լեզվաոճական միջոցներով, ինչպիսին են, օրինակ, Արմինե Անդայի (Արմինե Աբրահամյան), Երագիկ Գրիգորյանի, Արփի Ոսկանյանի, Էդուարդ Միլիտոնյանի, Ռուբեն Մարուխյանի և Ժամանակակից այլ հեղինակների հեքիաթները:

Ուշագրավ է դիտարկել արդի գրական հեքիաթի լեզվաոճական առանձնահատկությունները, որոնք մինչ օրս քննության հատուկ առարկա չեն դարձել հայ հեքիաթագետների աշխատություններում: Իհարկե, ժողովրդական և գրական հեքիաթների լեզվաոճական առանձին դրսևորումներ արժանացել են ժամանակակից ուսումնասիրողների ուշադրությանը, ինչպես օրինակ՝ հրաշապատում հեքիաթի գլխավոր ոճահնարների, հեքիաթը բացող և փակող բանաձևերի, պատկերավորման և արտահայտչականության միջոցների ինչ-ինչ դրսևորումներ քննվում են հայ հեքիաթագետների ուսումնասիրություններում (Զիվանյան Ա. 2008, Խեմճյան Է. 2010, Վարդանյան Նվ. 2009 և այլն):

Ստորև կփորձենք քննության ենթարկել ինչպես բանահյուսական նախատիպային հեքիաթի գրական որոշ մշակումներ և փոխադրություններ, այնպես էլ ժամանակակից գրողների (Արմինե Անդայի, Եր. Գրիգորյանի, Էդվ. Միլիտոնյանի, Ա. Ոսկանյանի, Ռ. Մարությանի և ուրիշների) հեղինակային հեքիաթները: Ժողովրդական հեքիաթների համարժեքները կներկայացնենք «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական բազմահատորյակից:

Ուսումնասիրությունը առաջ է տարվում հետևյալ հիմնական ուղղություններով.

- Ա. Պատրաստի խոսքային միավորներ. ավանդական բանաձևեր, առած-ասացվածքներ,
- Բ. Քերականական և բառապաշարային մի քանի առանձնահատկություններ,
- Գ. Կերպարակերտման լեզվաոճական որոշ առանձնահատկություններ:

Ա. Պատրաստի խոսքային միավորներ. ավանդական բանաձևեր, առած-ասացվածքներ

Հեքիաթին բնորոշ և կայուն ձևով կրկնվող լեզվական միավորները հեքիաթագիտության մեջ ընդունված է անվանել **ավանդական կայուն բանաձևեր**: Ե՛վ բանահյուսական, և՛ գրական հեքիաթներում նման բանաձևված մտքերը, բանահյուսական հնարքները ընդգրկում են իմաստային, ժամանակային, տարածքային ամբողջություն: Սույն մենագրության նախընթաց բաժիններից մեկում արդեն իսկ անդրադարձ է կատարվել ժողովրդական հեքիաթների ժամանակակից գրառումներում ավանդական բանաձևերի դրսևորումներին (տե՛ս «Ավանդական բանաձևերը հեքիաթի մերօրյա գրանցումներում» ենթաբաժինը): Ինչ վերաբերում է արդի գրական հեքիաթին, ապա ավանդական բանաձևերը այստեղ յուրակերպ դրսևորումներ ունեն: Բանահյուսական հեքիաթներում բանաձևված մտքերն ավելի պարզ ու կարճ են, իսկ նույն հեքիաթների ժամանակակից մշակված տարբերակներում մշակող հեղինակը գիտակցված վերստեղծում է բնագրային ձևերը՝ ապահովելով բանահյուսական կոլորիտը, սակայն կիրառում է նաև սեփական լեզվամտածողությունն ընդգծող ոճական ձևեր: Եթե ժողովրդական հեքիաթների բարբառային դրսևորումներին բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվամտածողությունը, ապա գրական տարբերակներում գերիշխում է ոճահնարությունը, որը քերականական և ոճաբանական դրսևորումներով էականորեն տարբերվում է բարբառային ձևերից:

Բերենք ժողովրդական և համարժեք գրական մշակման ենթարկված հեքիաթների բացող և փակող բանաձևերի համադրման մի քանի օրինակ:

1. Ըլնում են չեն ըլնում մի մարդ ու կնիկ (ՀԺՀ VIII 1977, 20):
2. Օրերն մե օր քաղքի չոբանը իրեն օջիսարը կտանի էդ մաղարի քովը արծացնելու (ՀԺՀ IV 1963, 181):
3. «Շատ կերթա, քիչ կերթա, օր կը բեգրի՝ կը նստի սարի մե յաղբըրական, օր մե ըռհաթի, ջուր խմե, էլման էրթա ուր ճամպեն» (ՀԺՀ X 1967, 17):
4. Ժամանակով մի մարդ կար, ըդրան ուներ մի տղա (ՀԺՀ II 1959, 507):
5. Ըլնում ա, չի ըլնում՝ շատ հարուստ թագավոր ա ըլնում (ՀԺՀ VIII 1977, 57):
1. Լինում է չի լինում մի մարդ ու կնիկ (ՀԺՀ, Նազինյան Ա. 1990, 22):
2. Եվ ահա, օրերից մի օր քաղաքի չոբանը հոտը պատահական տանում է այդ քարանձավի մուտերքը արածացնելու (Խեչոյան Լ. 2002, 41):
3. Նա երկու-երեք տարի թափառում է երկրից երկիր և ոչ մի տեղ չի հանդիպում այն աղջկան, որին ինքն էր հորինել (Խեչոյան Լ. 2002, 58):
4. Ժամանակով մի մարդ է լինում. ունենում է մի տղա (ՀԺՀ Նազինյան Ա. 1990, 99):
5. Լինում է, չի լինում՝ մի շատ հարուստ թագավոր է լինում (ՀԺՀ Նազինյան Ա. 1990, 135):

Հեղինակային հեքիաթների դեպքում լեզուն նորմավորված հայերենն է, և ժողովրդախոսակցական տարրերն այստեղ լայն կիրառություն չունեն: Օրինակ՝

1. Շատ տարիներ առաջ երեք թևավոր ճարտարապետները կառուցեցին Անկիմյուրը Ռույաս լճի ափին: Հետո թևավոր ճարտարապետները թռան ուրիշ երկրներ կառուցելու, իսկ Անկիմյուրում բնակվեցին արարածները (Անդա Ա. 2013, 6):

2. Լինում է, չի լինում, մութ գիշեր է լինում, ու գիշերից մթնած երկինք է լինում: Մութ երկնքում դեղին ու կլոր լուսին է լինում (Գրիգորյան Եր. 2013, 29):

3. Դա ե՛րբ էր... Ո՛չ, ո՛չ վաղուց չէր: Կարծես երեկ լիներ: Մենք ապրում էինք Ծաղկածորում (Մարուխյան Ռ. 2008, 3):

Բացի այդ, ինչպես նկատելի է, ժամանակակից հեղինակները ավանդական բացող կամ փակող բանաձևերին ավելացնում են լեզվամտածողության իրենց սեփական տարրերը՝ խախտելով հին բանաձևերի ընդունված, քարացած դրսևորումները:

Բացի հեքիաթը բացող բանաձևերից՝ բավական մեծ ոճական արժեք ունեն նաև հեքիաթը փակող բանաձևերը, որոնք ևս արդի հայ հեքիաթներում հիմնականում հեռացած են ժողովրդական հեքիաթների բանաձևերից և որոշակի կանոնիկ լեզվական կաղապարով այն սահմանել հնարավոր չէ: Երբեմն դրանք նաև մաղթանքի տեսք են ստանում, ինչպես օրինակ՝ Ռ. Մարուխյանի «Չիկարելի նոր արկածներ»-ում:

1. Ու բոլորն էլ ապրում են փոքրիկ փիլիսոփաների երկրում, այսինքն՝ այնտեղ, որտեղ ինքը՝ Ռույսար: Մի ջրային փիլիսոփա (Անդա Ա. 2013, 397) :

2. Երկնքից երեք խնձոր է ընկնում: Տատը խնձորները թռոներին է բաժանում, իսկ մկրատը... մկրատն էլ իրեն է պահում (Գրիգորյան Եր. 2013, 38) :

3. Իսկ Վահագն Վիշապաքաղը տարածեց կրակե շապիկը, թռչող գորգ դարձրեց ու թռավ հին աշխարհի առասպելների ու լեգենդների մեջ, այնտեղ նա իրեն շատ լավ էր զգում (Միլիտոնյան Էդվ. 2003, 128):

4. Եվ խշշում, սվսվում էր խորհրդավոր եղեգնուտը Արաքսի ափին (Միլիտոնյան Էդվ. 2003, 128) :

5. Եղի՛ր երջանիկ, ու թող կատարվեն քո բոլոր երազանքները: Տեստություն (Մարության Ռ. 2008, 242) :

Ժամանակակից հեքիաթների հեղինակային տարբերակներում բանահյուսական կաղապարներն ավելի քիչ են, իսկ բանաձևված մտքերին զուգահեռ կիրառվում են «ի վերջո», «մի խոսքով», «և հետո» և նման այլ բառակապակցություններ: Ըստ էության, հեղինակային նման մոտեցումները նպաստում են խոսքի ամփոփմանը:

Նշենք նաև, որ ինչպես բանահյուսական հեքիաթների սկսվածքներին է բնորոշ անորոշ ժամանակի, անորոշ տեղի, անորոշ հերոս(ներ)ի ընդգծումը «մի» անորոշ դերանունով, այնպես էլ փոխադրված, ժողովրդական հեքիաթներին: Օրինակ՝

Ըլնում են չեն ըլնում մի մարդ ու կնիկ (<Ժ< VIII 1977, 20):

Ժամանակով մի մարդ է լինում. ունենում է մի տղա (ՀԺՀ, Նազինյան Ա. 1990, 99):

Լինում է, չի լինում՝ մի շատ հարուստ թագավոր է լինում (ՀԺՀ, Նազինյան Ա. 1990, 135):

Օրերից մի օր աղվեսը սոված, փորը վեց – վեց անելով անտառի միջով անց էր կենում (ՀԺՀ, Նազինյան Ա. 1990, 62):

Սակայն նույնը չենք կարող ասել հեղինակային արդի հեքիաթների մասին: Այստեղ հերոսները հիմնականում ունեն որոշակի անուն, պաշտոն, երկրներն ու քաղաքները ևս ինչ-որ չափով որոշակի են, ինչպես՝

Առավուտից երեկո վարսավիրի ձեռքի տակ աշխատում էր մկրատը...» (Գրիգորյան Եր., 2013, 35):

Գեներալ Ժուփուփը թփանների ամենահայտնի գեներալն էր և աշխարհի ամենասարսափազդու թփանը» (Անդա Ա. 2013, 217):

Նազարը միշտ սիրել էր իրեն, բայց այժմ ավելի սիրեց՝ պաշտելու աստիճանի, և արհամարհալից հայացքը ձգեց հազարամյակների խորքը՝ **Մենուայի** վրա:

Մենուա – Ինձ այդպես չնայես, ողորմելի: Ես **Իշփուինիի** որդին եմ, **Ուրարփուի** թագավորը:

Նազար – Պա՛հ... Իմ հերն էլ Սաքուն էր.... (Ադայան Ն. 2010, 43):

Խոսքային բանաձևերը զանազան գործառություններով հանդես եկող կաղապարային արտահայտություններն են: Դրանց մի մասը ողջագուրման, հրաժեշտի և դիմումի արտահայտություններ են, ինչպես՝ **բարի լույս, բարի օր, բարի երեկո, բարի աջողում, բարի գալուստ, բարով տեսանք, աստծու բարին, բարին արևիդ, հազար բարի, հարգանք-**

ներիս հավաստիքը, օրհնյա ի տեր, աստված օրհնի, բարի գիշեր, լույսը բարի, գնաք բարով, երթաս աստծով, լույս քեզ տեսնողին և այլն, որոնք կիրառություն ունեն ինչպես ժողովրդական հեքիաթների մշակումներում, այնպես էլ գրական հեքիաթում:

Խոսքային բանաձևերից մի քանիսը միջանկյալ արտահայտություններ են, որոնք հաճախ են գործածվում հեքիաթներում, ինչպես՝ **հավքն իր թևով, օձն իր պորտով, շատ են գնում, թե քիչ, իրենք կիմանան, լեզվով չի պատմվի, թագավորն ապրած կենա**, մի քանիսն էլ անցանկալի բանից ապահովագրման, երդման, հանդիմանության, գոհության արտահայտություններ են, մաղթանքներ ու անեծքներ, որոնք նույնպես մեծ դեր ունեն ինչպես ժողովրդական, այնպես էլ գրական հեքիաթներում, ինչպես՝ **Աստված չանի, Աստված ոչ անի, Աստված հեռու տանի, Աստված վկա, երկինք – գետինք, արևս վկա, վայ քո տունը (չ)քանդվի, աստված կսիրես, հորդ հոգուն մատաղ, փառք քեզ, Աստվա՛ծ, փառքդ շատ, Աստված բարին կատարի, տերը քեզ հետ, գլուխդ հողեմ, բոյդ թաղեմ, սիրտդ մեռնի, գետինը մտնես, վերևն Աստված, ներքևը՝ դու, ծլես-ծաղկես-զորանաս, Աստված էր նրան տվել, Աստված էլ տարավ** և այլն: Այսօրինակ արտահայտությունները հատկապես շատ են Լ. Խեչոյանի ստեղծագործություններում:

Խոսքային բանաձևերից մի քանիսը խոսքի ընթացքն արժարժելու, նրան հետաքրքրություն տալու, պատումի մեջ լարվածություն ստեղծելու արտահայտություններ են՝ հատուկ ժողովրդական մտածողությանն ու պատմելու եղանակին, ինչպես՝ **դու մի ասի, բա չես ասի, բախտդ սիրեմ, տերդ**

խնդա, ոտքս կոտրեր, բարով – խերով և այլն (Թումանյան Հովհ. 1988):

Ինչպես կարելի է անզեն աչքով էլ նկատել, խոսքային բանաձևերը մեծ դեր ու տեղ ունեն հեքիաթներում, նրանց կիրառությամբ խոսքին հաղորդվում է ժողովրդական համ ու հոտ, խոսքն առավել մոտեցվում է ժողովրդական մտածողությանը:

Խոսքային բանաձևերն անհամեմատ քիչ ոճական լիցքավորում ունեն. ոճական մեծ լիցքավորում ունեն պատրաստի խոսքերը: Ի տարբերություն խոսքային բանաձևերի, որոնք ընդհանրապես միջանկյալ դերով են հանդես գալիս, պատրաստի ձևերը հյուսվում են խոսքին, դառնում նրա բովանդակության բաղադրիչ, սակայն միահյուսումն այնպես է լինում, որ զգացվում է պատրաստի խոսքերի ինքնուրույնությունը, այլ տեղից առնված-բերված լինելը:

Ինչպես նշում է լեզվաբան Պ. Պողոսյանը՝ «ըստ ծագման՝ պատրաստի խոսքերը երկու խմբի են բաժանվում՝ ժողովրդական և գրական: Ժողովրդական ծագում ունեն ժողովրդական բառ ու բանը՝ ասացվածքները, կարճաբանությունները, առածները, խրատանին, համառոտ առակներն ու անեկդոտները, ինչպես և ժողովրդական իմաստությունները» (Պողոսյան Պ. 1990):

Ժողովրդական ծագում ունեցող պատրաստի խոսքերը հիմնականում բարոյախրատական բնույթ ունեն, իրենց մեջ ամփոփում են ժողովրդի դարավոր կյանքի իմաստությունն ու կենսափորձը, այդ պատճառով էլ հնչում են իբրև պատվիրաններ: Սրանց մի մասը վկայաբերություններ են (քաղվածքներ, մեջբերումներ):

Պատրաստի խոսքային բանաձևերի ստվար խմբեր են կազմում ասացվածքները, առածները որոնցով հարուստ են հայկական ժողովրդական հեքիաթները: Ընդհանուր առմամբ, նկատելի է, որ ի տարբերություն ժողովրդական հեքիաթների, արդի հեղինակային հեքիաթներին հիմնականում բնորոշ չեն առած-ասացվածքների կիրառությունները:

Գրական ծագում ունեն թևավոր արտահայտությունները, ասույթները, իմաստալից ձևակերպումները:

Թևավոր արտահայտությունների մի մասը «խոսուն անուններն» են, որոնք գրականությունից հայտնի տիպական կերպարների, տիպական երևույթների և հայտնի գեղարվեստական կերպարների տիպականացված անուններ ու անվանումներ են, ինչպես՝ **Քաջ Նազար, Ձախորդ Փանոս, Անբան Հուռի, Անկիմյուռի բնակիչներ** և այլն:

Հեղինակային ժամանակակից հեքիաթներում պատրաստի խոսքային միավորներից ամենագործուն շերտը ժողովրդական իմաստություններն են և խրատները, որոնք հիմնականում մերօրյա երևույթներ ու իրադարձություններ ներկայացնող փոխաբերական վերաիմաստավորումներ են, հաճախ իրենց խորքում ունեն ընդգծված համեմատություններ, օրինակ՝

1. Մարդը երջանիկ է միայն ու միայն իր տանը, իր հայրենի հողում... (Մարուխյան Ռ. 2008, 232):

2. - «Բայց դուք ո՞ւմ վաստակն եք ուտում»... հիմար հարց: Քե՞զ ինչ, թե ում վաստակն ենք ուտում... Եթե մենք չուտենք, ուրիշները կուտեն, դրա համար մենք ենք ուտում, որ ուրիշները չուտեն, -փիլիսոփայեց գլխավոր շատակերը...:

- Բայց մարդը միայն ուտելու համար չի ստեղծված: (Մարության Ռ. 2008, 150):

3. - . . . Այն մարդը, որն առանց խղճի խայթի կարող է ծառ կտրել, կարող է նաև մարդ սպանել: Ի՞նչ տարբերություն, ծառն էլ մարդ է. . . (Մարության Ռ. 2008, 92):

4. Կասկածը աստիճանաբար մաշում է հաստատականությունը, ինչպես որ ջրի կաթիլն է, գիշեր ու զօր ընկնելով, գլաքարը ճաքեցնում: Մշտական քաղցը սասանում է հավատը առեղծվածի նկատմամբ:

. . . «Իմաստունները փորձով գիտեն, որ շատ ուրախությունը իր հետ շատ տխրություն է բերում. . .» (Խեչոյան Լ. 2002, 10):

5. «Գայլ ախպեր, այս հողագնդի վրա բոլորը դատապարտված են մենության, մեզանից ամեն մեկը հանկարծ մի օր հայտնվում է թակարդում. . .» (Խեչոյան Լ. 2002, 12):

6. «Որդի,- ասաց հայրը, - Խելքդ գլուխդ հավաքիր, ոտքդ վերմակիդ չափով երկարացրու, մե՞նք ով, դո՞ւ ով, թագավո՞րն ով. . .» (Խեչոյան Լ. 2002, 30):

7. Ջրաղացի խորհուրդն այսպես է. քարը երկրի ժողովուրդն ու աշխատավորն է՝ բանում, ստեղծում, լցնում է աշխարհը, իսկ այլուրի ամբարը պալատականներն ու իշխաններն են, եթե նրանք պետության հարստությունները մի տեղ չամբարեն, ժողովրդին չապրեցնեն ու իրենք չապրեն, այդ հարստությունով պատերազմներ չմղեն ու աշխարհներ չնվաճեն, հողին հատիկը աճեցնել չտան, ոչխարի հոտեր չունենան, եթե այս ամենը չլինի, ապա ժողովրդի աշխատանքը ջուրը կտանի:

... իմաստությանը միայն սովորելով չեն հասնում, այլ նաև նրա մեջ թափանցելու համար ներսի սրտի մեջ ապրող խաղաղությանը լսելու զորություն է պետք ունենալ (Խեչոյան Լ. 2002, 43):

Այսօրինակ խրատները ներառվելով խոսք՝ այն դարձնում են պատկերավոր, հետաքրքրական, դաստիարակիչ ու նպատակասլաց: Դրանք ստեղծում են զուգահեռներ, միտքն առաջ տանում մտորելու-վերլուծելու ճանապարհով, ասելիքին տալիս հնարագիտական բնույթ:

Պատրաստի խոսքային միավորներից են նաև դարձվածքները, որոնք լայն կիրառություն ունեն բանահյուսական և գրական հեքիաթներում: Դարձվածքները բանահյուսական հեքիաթներում բաղադրիչային, կառուցվածքային առումով կայուն են, իսկ հեղինակային մշակումներում նկատելի է, որ նույնությամբ չեն փոխադրվում և ամբողջությամբ չեն գրականացվում:

Դարձվածքները կենդանի խոսքում երևան են եկել այն ժամանակից, երբ մարդը վերացարկված մտածելու կարողություն է ձեռք բերեց: Դրանք առավելապես ժողովրդախոսակցական ոճին բնորոշ միավորներ են, որոնք լավագույնս ներկայացնում են տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը, բարքերն ու սովորույթները, կենցաղն ու ապրելակերպը, ինչպես նաև հոգեկան, հոգեբանական խառնվածքն ու կենսափիլիսոփայությունը: Գեղարվեստական խոսքում հատկապես դարձվածքների կիրառմամբ խոսքը դառնում է առավել տպավորիչ և պատկերավոր, նրանց կիրառությունը նպաստում է խոսքի հակիրճությանը և սեղմությանը, ազգային ե-

րանգավորում է հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքին: Դարձվածքին բնորոշ փոխաբերական – այլաբանական իմաստը ժամանակակից հեքիաթներում հաճախ դրսևորվում է մեկ բառով, հաճախ վերաիմաստավորվում է, որով ավելի տեսանելի է դառնում գրական հեքիաթների լեզվապատկերային դրսևորումը: Սակայն պետք է չանտեսել նաև այն հանգամանքը, որ դարձվածքային միավորներն իրենց փոխաբերական-այլաբանական իմաստի շնորհիվ հատուկ են հեքիաթներին ընդհանրապես, և հաճախ ինչպես բանահյուսական, այնպես էլ մշակված տարբերակում դրանք կարող են կրկնվել գրեթե նույնությամբ՝ դրսևորելով միայն որոշակի բառային համանիշային շարքի փոփոխություններ:

Օրինակ՝

- | | |
|--|---|
| <p>1. «...Յեկնեմ էրթամ՝ տեսնանք իմ քոռ բախտը ինչ կը բերե գլուխսի» (ՀԺԿ X 1967, 18):</p> | <p>1. «...Տղան ճանապարհվում է որոնելու նրան, ում պատկերը ստեղծել է իր ներսում՝ գիշերները լուսնի կապույտ լույսով շրջելիս» (Խեչոյան Լ. 2002, 58):</p> |
| <p>2. «...հենց էկավ բացելու վախտերքը, սատանական քունս տարավ...» («ՀԺԿ II 1959, 502):</p> | <p>2. «...հենց եկավ Անմահական վարդի բացվելու ժամանակը...և ես քնեցի...» (Խեչոյան Լ. 2002, 26):</p> |
| <p>3. Մերը իրիգնաժամիցը տուն ա գալիս, տեսնում, որ տղեն ունքերը կիտած,</p> | <p>3. Մերը իրիկնաժամից տուն է գալիս, տեսնում, որ տղան ունքերը կիտած,</p> |

մոռութիւնը կախարարած, օջախի դրաղին նստած ա (ՀԺՀ VIII 1977, 22):

4. Մի օր աղվեսը սոված, փորը վեց – վեց անելոն էս ավչու մեշի միջովը անց էր կենում (ՀԺՀ II 1959, 255):
5. Է՛ն դայրի սիրուն, որ մարդ տեսներ, կոսեր՝ ո՛նչ ուտեմ, ո՛նչ խմեմ, նրա շիմշատ բոյուն մտիկ անեմ կենում (ՀԺՀ VIII 1977, 57):

մոռութիւնը կախ օջախի կողքին նստած է ՀԺՀ Նազինյան Ա. 1990, 22):

4. Օրերից մի օր աղվեսը սոված, փորը վեց – վեց անելով անտառի միջով անց էր կենում (ՀԺՀ Նազինյան Ա. 1990, 62):
5. «...Էն տեսակ սիրո՛ւն, որ մարդ տեսներ, կասեր՝ ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, նրա շիմշատ բոյին մտիկ անեմ» (ՀԺՀ Նազինյան Ա. 1990, 135):

Բ. Քերականական և բառապաշարային մի քանի առանձնահատկություններ

Ժողովրդախոսակցական ոճի պահպանման և դրսևորման լավագույն միջոցը հայկական հեքիաթներում եղել և մնում է խոսակցական ոճի տարրերի ներառումը հերոսների խոսք և լեզվամտածողություն: Ժողովրդախոսակցական ոճի պահպանման ձևերից մեկն էլ արդի հայ հեքիաթներում բայական ձևերի ժողովրդախոսակցական տարբերակների կիրառությունն է:

Ուսումնասիրելով բանահյուսական և գրական հեքիաթների բայական ձևերը՝ նկատում ենք, որ հարուստ կիրառություն ունեն սահմանական եղանակի, մասնավարապես սահմանական ներկա ժամանակաձևի կիրառությունները, որոնք օգտագործվում են ընդհանրական ներկայի իմաստով: Գիտական գրականության մեջ այս ժամանակաձևը բնութագրվում է նաև որպես հեքիաթական ներկա (Պողոսյան Պ., 1990, 265): Սրան զուգահեռ՝ որպես պատումի հիմնական ժամանակաձև կիրառվում են նաև անցյալ անկատարն ու անցյալ կատարյալը: Վերջինն առավելապես հանդես է գալիս իրապատում հեքիաթներում, որի կիրառությունը միտված է հավաստիություն հաղորդել պատումին (Վարդանյան Նվ. 2009, 56):

Հեքիաթների բարբառային ձևերում սահմանական ներկա ժամանակաձևի ոչ նորմատիվ «ա»-ի կիրառությունը գրական տարբերակներում հիմնականում անցնում է սահմանական ներկա ժամանակաձևի «է» օժանդակ բային: Նշենք նաև, որ որոշ բարբառներում սահմանական ներկա ժամանակաձևի բայերը կազմվում են -կ եղանակիչով, որը ձևով նման է ժա-

մանակակից հայերենի ենթադրական ապառնիին, սակայն իմաստով համարժեք է սահմանական ներկա ժամանակա-
ձևին: Օրինակ՝

- | | |
|--|---|
| 1. Հիմա խեղճ թագավորը
ինչ անում ա, չի անում,
ինչ կատեպան բռնում
ա, ինչքամ մուղաթ են
կենում, չիլնում... խարը
գալիս ա էդ վարդն ու-
տում էթում (ՀԺՀ II
1959, 501): | 1. Բայց թագավորը ինչ ա-
նում, չի անում, ինչ պար-
տիզպան էլ վարձում է, ինչ
պահակ էլ կանգնում է...-
հողի տակից հասնում-
ուտում գնում է (Խեչոյան
Լ. 2002, 26): |
| 2. «-Չէ,- կըսե,- վալա իմ
աչք ու ականջ ընձի խա-
բին...» (ՀԺՀ X 1967, 18): | 2. Ասում է. «Չէ՛, հաստատ իմ
աչք ու ականջ ինձ խաբում
են...» (Խեչոյան Լ. 2002, 59): |
| 3. Տղեն կը թռա, հեծնա
ձին, թուր կառնե ձեռք,
խառ կը քշե կերթա
հասնի մեշեն (ՀԺՀ X
1967, 19): | 3. Տղան հեծնում է ձին, գնում
հասնում է անտառի մութ
խորքը (Խեչոյան Լ. 2002,
59): |
| 4. «-Տղեն կը սրտապնդ-
վի, ձին կը քշե յառաջ,
զթուր կը փլիվացրու, կը
տանե-բերե, գիջու վըր
թագավորի վզին...»
(ՀԺՀ X 1967, 20): | 4. Սրտապնդվում, սուրն է աջ
ու ձախ քաշում, տանում-բե-
րում, արևի դեմ պսպղաց-
նում և հարվածում է անտա-
ռի թագավորին (Խեչոյան
Լ. 2002, 59): |

Հեքիաթների լեզվաոճական առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն գործածվող բայաձևերին, այլև պատումի կոլորիտային առանձնահատկությունները դրսևորող բառապաշարին: Ցանկացած հյուսվածք աչքի է ընկնում իր բառապաշարով, որի այս կամ այն շերտի գործածումը յուրօրինակ երանգ է տալիս պատումին: Ընդունված է այն տեսակետը, որ բառը խոսքում, նախադասության մեջ հանդես է գալիս իր երկու հիմնական գործառույթներով կամ հատկանիշներով՝ անվանողական դերով և հուզաարտահայտչական երանգավորմամբ: Սակայն միշտ չէ, որ դասական բառագիտության կանոնիկ, արդեն իսկ ամրագրված սահմանումները նույնությամբ պահպանվում են դիպաշարի հյուսվածքում: Հաճախ հաշվի առնելով բառի անվանողական դերը՝ այն օգտագործում են որպես գեղարվեստական պատկեր ստեղծող միջոց, իբրև ոճայթ: Կենդանի պատումում, հաճախ այս կանոնիկ սահմանումները քանդվում են՝ ոճական նպատակադրումից ելնելով: Ըստ Ա. Սուքիասյանի՝ բարբառային բառերի գրական լեզու թափանցելու ուղիներից մեկը գեղարվեստական գրականության մեջ այդ տեսակ բառերի գործածությունն է (Սուքիասյան Ա. 1982, 194): Այս առնչությամբ խոսելով հեքիաթների լեզվաոճական առանձնահատկությունների մասին՝ չենք կարող չանդրադառնալ բանահյուսական հեքիաթների մշակված դիպաշարում հաճախ հանդիպող բարբառային և ժողովրդախոսակցական բառերի ներթափանցմանը:

Ժողովրդական հեքիաթների փոխադրությունները, ենթադրվում է, որ պետք է լինեն գրական նորմավորված լեզվի սահմաններում, սակայն մշակող-հեղինակները այստեղ էլ

երբեմն շեղվում են գրական տարբերակներից: Կոտրելով կաղապարը կամ ստեղծելով բանահյուսական հեքիաթի նոր, ժամանակակից տարբերակ՝ հեքիաթագիրները գրական նորմավորված շարադրանքում օգտագործում են և՛ ժողովրդախոսակցական, և՛ բարբառային ոչ կենսունակ բառեր: Այսինքն՝ հեղինակի խոսքը ներկայացվում է գրական բառամթերքով, բայց երբեմն համեմվում է նաև բարբառային միավորներով: Ոչ կենսունակ բառերը ժողովրդական հեքիաթների մշակված տարբերակներում դրսևորվում են տարբեր խոսքի մասերով՝ բայ, ածական, թվական, գոյական, մակբայ և այլն: Օրինակ՝

- | | |
|--|--|
| <p>1. «...իմ ախչկա հմար մի ձեռք շոր դրգե, որ ո՛նչ ձեռք ըլի դիպած, ո՛նչ ասեղ էկած» (ՀԺՀ VIII 1977, 17):</p> <p>2. «Խերն էստի, շառն ու շահմաթը էնդի» (ՀԺՀ VIII 1977, 59):</p> <p>3. «...ես քեզ կտանեմ մեր տուն՝ լավ կպահեմ, մուղաթ կկենամ» (ՀԺՀ II 1959, 379):</p> <p>4. Էժան վախտը կտավի թոփը վեց աբասի ա, թանկ վախտը ութ աբասի, յա երկու մանեթ (ՀԺՀ II 1959, 502):</p> | <p>1. «...իմ աղջկա համար մի ձեռք շոր դրգի, որ ոչ ձեռք լինի դիպած, ոչ ասեղ» (ՀԺՀ Նագինյան Ա. 1990, 47):</p> <p>2. Խերն էստեղ, շառն ու շահմաթը թշնամու գլխին (ՀԺՀ Նագինյան Ա. 1990, 137):</p> <p>3. «...ես քեզ կտանեմ մեր տուն՝ լավ կպահեմ, մուղաթ կկենամ» (ՀԺՀ Նագինյան Ա. 1990, 53):</p> <p>4. Էժան վախտը կտավի թոփը վեց աբասի է, թանկ վախտը՝ ութ աբասի, յա երկու մանեթ (ՀԺՀ Նագինյան Ա. 1990, 107):</p> |
|--|--|

5. «Տղեն **հերսոտավ**, ձեռը
զարկեց խողին, մե
ճանկ խող վերցրեց...»
(ՀԺՀ I 1959, 531):

6. «...ես նրան **հավանիլ
եմ**, ասեք, որ թագա-
վորն **ուզում ա**» (ՀԺՀ
VIII 1977, 57):

5. «Աղքատն էստեղ **հերսո-
տում է**, ձեռքը գցում է, մի
բուռ հող վերցնում...» (ՀԺՀ
Նագինյան Ա. 1990, 110):

6. «...ես նրան **հավանել եմ**,
կասեք, որ թագավորն ու-
զում է» (ՀԺՀ Նագինյան
Ա. 1990, 135):

Հեքիաթների լեզվաոճական առանձնահատկությունների առումով ուշադրության են արժանի ինչպես հեղինակի, այնպես էլ հերոսի խոսքը, դրանց դրսևորումները: Հեքիաթների ժողովրդական պատումներում հեղինակը և հերոսները խոսում են նույն բարբառով, հիմնականում տարանջատում չկա: Նույնը չենք կարող ասել ժամանակակից հեղինակային հեքիաթների հեղինակի ու հերոսի խոսքի դրսևորումների մասին: Հեղինակն այստեղ հաճախ (հիմնականում) խոսում է գրական հայերենով, իսկ հերոսի խոսքը կարող է լինել ինչպես ժողովրդախոսակցական, այնպես էլ խիստ գրական բառաշերտից: Հերոսները հաճախ կիրառում են ժարգոնային բառեր, գռեհկաբանություններ, օտարաբանություններ, բարբառային բառեր՝ գրական բառաշերտին տալով ժողովրդախոսակցական անմիջականություն ու հարազատություն:

Օրինակ՝

1. Թագավորն ըսավ. – Հը՛, չոբան ի՞նչ կա: (ՀԺՀ IV 1963, 182):
2. «Թագավորի նոքարները ասացին. – Ա՛ղպեր, սա էն էրկու աղպորից էլ գիժա էրևում...» (ՀԺՀ II 1959, 405):

1. Թագավորն ասաց. – Հը, չոբան, ի՞նչ կա: (Խեչոյան Լ. 2002, 16):
2. Թագավորի ծառաները ասում են. «Ախպեր, սա էն ախպորից էլ գիժա երևում» (ՀԺՀ Նազինյան Ա., 1990, 107):

1. Նազարը միշտ սիրել էր իրեն, բայց այժմ ավելի սիրեց՝ պաշտելու աստիճանի, և արհամարհալից հայացքը ձգեց հազարամյակների խորքը՝ Մենուայի վրա:

Մենուա – Ինձ այդպես չնայես, ողորմելի: Ես Իշփուհինի որդին եմ, Ուրարտուի թագավորը:

Նազար – Պա՛հ... Իմ հերն էլ Սաքուն էր....

Մենուա – Դու բիճ ես: Քո մայրը պոռնիկ էր: Մայրդ էլ չի մացավ ումից ես դու (Ադայան Ն. 2010, 43):

2. - Քեզ չվերաբերվող բաների մեջ քիթդ մի՛ խոթիր: Թե չէ, որ մի քիչ էլ կատաղեմ, միաչքանի կդառնաս:

- Հասկացա՛, հասկացա՛, շե՛ֆ, ինչ ասում ես՝ այն էլ կանեմ (Մարուխյան Ռ. 2008, 172):

3. Ծաղիկների ու խոտերի բուրմունքը խառնվել էր անձրևի բույրին, ու թվում էր՝ մեր մոլորակի վրա ժամանակը կանգ է առել:

-Քեզ դո՞ւր է գալիս մեր ապաստարանը,- հարցրի փոքրիկ տղային. . .

-Ես երբեք չէի կարող մտածել, որ այսպիսի ապաստարան կունենանք: Ի՞նչ պիտի անեի առանց Ձեզ,- ասաց փոքրիկն ու ժպտաց (Մարուխյան Ռ. 2008, 14):

Այս համեմատական քննությունը մեզ բերում է այն եզրահանգման, որ հեքիաթների մշակված տարբերակներում բարբառային և ժողովրդախոսակցական բառերի համաժամանակյա համագործակցությունը գրական բառաշերտում խոսքին տալիս է պատկերավորություն, արտահայտչականություն և խոսքը ազատում միապաղաղությունից, միօրինակությունից ու չորությունից: Մյուս կողմից, եթե ժողովրդական հեքիաթներում հեղինակի (ասացողի) և հերոսի խոսքը գրեթե միևնույն բառաշերտից է, ապա գրական հեքիաթներում հստակորեն տարբերակվում է հեղինակի խոսքը հերոսի խոսքից: Այս դեպքում արդեն հեղինակի խոսքը կառուցված է գրական բառաշերտի սահմաններում, հերոսների՝ հիմնականում ժողովրդախոսակցական:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հեքիաթների լեզվական որոշակի կոնկրետություն ունեցող բառաշերտում լեզվական այլ միջոցների առկայությունը նկատելիորեն շատ է: Երկու՝ բոլորովին տարբեր բառաշերտերի համաժամանակյա կիրառություն ենք գտնում նաև ժամանակակից հեքիաթագիրների հեղինակային աշխատանքներում: Հեքիաթների այս տարբերակներում գրական նորմավորված համատեքստին զուգահեռ կիրառվում են օտարաբանություններ ու ժարգոնային արժեք ունեցող բառեր: Այս ենթաշերտի բառերի գործածությունը գրական բառաշերտ թույլատրելի է, բայց առանց սրանց ևս հնարավոր է հաղորդակցության գրական գործընթացը: Այս միավորները հիմնականում գործածվում են տեղի, միջավայրի համապատասխան երանգավորում ստեղծելու, կերպարի խոսքի անհատականացման, ոճավորման նպատակներով: Ի տարբերություն օտարաբա-

նությունների՝ ժարգոնային արժեք ունեցող բառերը ունեն նեղ տեղային բնույթ, սրանք հատուկ են հասարակության առանձին սոցիալական խմբերին: Այս միավորները, որքան էլ որ կիրառվում են ոճական նպատակով, այնուամենայնիվ միշտ չէ, որ նրանց առկայությունը տարրալուծվում է կենդանի տեքստում:

1. Ռուսաց թագավորը, որ Նազարից տարեց էր, գրեթե նրա հանգուցյալ հոր տարիքին, առանց ետին մտքի, մինչև իսկ առանց քաղաքական խորամանկության, նրան դիմելիս արդեն իսկ ասում էր. «**Дорогой отец Назар Иванович**»: Իսկ անգլախոս թագավորները (անգլերեն լեզուն այն ժամանակ միջազգային տարածում ունեցող) «**My father**», «**My dear Father**» (Ադայան Ն. 2010, 92) :

2. Պաշտպանության նախարար – (Ավարտել է Մոսկվայի ռազմական ակադեմիան, գեներալ): Որպես **перегородка** (Ադայան Ն. 2010, 93) :

3. Արտաքին գործերի նախարար – **No, no...**(Ադայան Ն. 2010, 95) :

4. «Նյու Յորք թայմս» - Արքա, **are you blue?** (Ադայան Ն. 2010, 145) :

5. Լավ է լինել **պոլոզ**, քան քո պես **քոլոզ** (Ադայան Ն. 2010, 63) :

6. «...ես քո մասին եմ մտածում ու մտահոգվում: Էդ **բոզին** մոռացիր» (Ադայան Ն. 2010, 98):

Գ. Կերպարակերտման լեզվաոճական որոշ առանձնահատկություններ

Ի տարբերություն ժողովրդական վաղնջատեքստերի՝ գրական գեղարվեստական հեքիաթներում հեղինակներն ավելի շոայլ են իրենց ստեղծած կերպարների մասին տեղեկություններ տալու տեսանկյունից: Հատկապես աչքի է ընկնում արտաքին նկարագրության առատությունը: Այստեղ թագավորների, նազիր – վեզիրների փոխարեն հաճախ հանդես են գալիս ժամանակի պատմաքաղաքական դեմքեր, իսկ ավանդական ձկնորսներին, դարբիններին, արհեստավորներին փոխարինում են ուսուցիչներ, բանվորներ (բանվորուհիներ), գրողներ և այլ կերպարներ: Իսկ ժողովրդական հեքիաթներում ասացողները, չկարևորելով դիմանկարի տեխնիկան, հիմնականում աղքատիկ տեղեկություն են հաղորդում հերոսների արտաքին նկարագրության վերաբերյալ, այստեղ առավել կարևորվում է հերոսի գործողությունը, քան նրա արտաքին նկարագրությունը կամ անձնանունը: Կերպարակերտման կարևորագույն առանձնահատկություններից է նաև ասացողների կողմից հերոսներին անանուն ներկայացնելը: Որպես «անձնանուն»՝ ասացողները հաճախ կիրառում էին նրանց հասարակական դիրքը՝ չոբան, աղքատ, թագավոր, ճգնավոր և այլն: Ասացողների կողմից «հերոսներին անանուն թողնելը պատահական չէ, դրանով ավելի է ընդգծվում հերոսների՝ ընդհանրական տիպին պատկանելու հանգամանքը և, եթե խոսքը հարուստի ու աղքատի մասին է, անընդհատ շեշտվում է երկու հերոսների դասային պատկա-

նելությունը, որի հիմքով էլ հենց առաջանում է նրանց հակամարտությունը» (Վարդանյան Նվ. 2009, 64): Օրինակ՝

- | | |
|--|---|
| 1. Ժամանակով մե ճգնավոր կապրի մե մաղարիմ մեջ քառասուն տարի (ՀԺՀ IV 1963, 181) | 1. Ժամանակով մի ճգնավոր էր ապրում քարանձավում , արդեն քառասուն տարի (Խեչոյան Լ. 2002, 41): |
| 2. «... քաղաքի չորանը իրեն օչխարը կտանի էդ մաղարի քովը...» (ՀԺՀ IV 1963, 181): | 2. «... քաղաքի չորանը իր հոտը պատահական տանում է...» (Խեչոյան Լ. 2002, 41): |
| 3. «Ավալ ժամանակին ըլնումա չիլնում մի թագավոր: Էս թագավորը հայ ա ըլնում...» (ՀԺՀ II 1959, 254): | 3. «Ժամանակին լինում է, չի լինում՝ մի թագավոր է լինում: Էս թագավորը ունենում է...» (ՀԺՀ Նագինյան Ա. 1990, 61): |

Իսկ գրական հեղինակային հեքիաթներում գրողների կողմից կարևորված առանձնացումներից մեկն էլ հենց հերոսների անունների ընտրությունն է: Այստեղ անունների մի մասը կերպարների գաղափարական էությունը ընդգծելու նպատակով են ընտրված և վերցված են իրականությունից, իսկ մյուս մասը հորինված են այդ կերպարի բնույթին համապատասխան: Այս հեքիաթներում հերոսների առատությունն ու նրանց պատկերումները նպաստում են լեզվական այնպիսի ձևերի գործածելուն, որոնք փոխաբերական հակում ունեն,

որով խոսքը դառնում է ավելի քան պատկերավոր, իսկ լեզուն՝ հարուստ:

1. **Ուստիան** – Գտել եմ:
Նազար – Բեր առաջս: (Ադալյան Ն. 2010, 18):
2. **Զիպոյին** դուրս հանեց **Լիլիթը**, և **Արեգն** այնպես ուրախացավ, որ արևն ամպի ճեղքից դուրս եկավ, ու Գերմանիայում միլիոնավոր մարդիկ մողեսի պես ձգվեցին պայծառ շողերի տակ (Միլիտոնյան Էդվ., 2008, 6):
3. «Բայց երբ ֆուտբոլիստները սկսեցին դուրս գալ մարզադաշտ, **Մարադոնան** ապշանքից քար կտրեց...» (Ոսկանյան Ա. 2011, 12):
4. **Վալպեն** ու **Սուլան** (Անդա Ա., 2013, 68):
5. **Շատակեր սալես Ագառու** – **Եգառուն** (Անդա Ա., 2013, 302):
6. **Դեղին ճամպրուկը** ... (Անդա Ա., 2013, 138):
7. **Քարե մարդիկ** են, **քարե լռություն** (Մարուխյան Ռ., 2008, 3):
8. «**Վահագն** ու **Հավքը** նորից հանդիպելու ցանկությանը բաժանվեցին...շամբուտի կողքին տեսավ մի փոքրիկ, **գնդասեղի գնդկի չափ արարած**» (Միլիտոնյան Էդվ., 2003, 6):
9. Աղջկան հաճելի էր տեսնել **հրացայտ աչքերով, կրակե մազ** – **մորուքով պատանյակին** (Մարուխյան Ռ., 2008, 6):
10. Նա զգաց ինչպես է կնոջ մարմինը դող երգում (Ադալյան Ն. 2010, 248):

Հեքիաթի հեղինակային տարբերակներում կերպարները ընտրվում են որոշակի ժամանակից և ունեն կոնկրետ հասցեստեղծեր: Հեղինակներն իրենք տեքստում պահում են բանհյուսական մոտիվը, որը դրսևորվում է կենդանիների և իրերի անձնավորված կերպարավորմամբ: Այստեղ նրանք հիմնականում անուններ ունեն:

Օրինակ՝

1. Հենց սկզբից ասեմ, ձեզ չտանջեմ՝ **Ջիպոն** կրիա է (Միլիտոնյան Էդվ. 2008, 3):
2. «Լսի՛ր, արի նորից հինգ հատ «Էսկիմո» ուտենք, հինգ հատ «Պլոմբիր», հինգ հատ էլ՝ «Սառնաժպիտ», - առաջարկեց **Շեկոն** և առանց իմ համաձայնությունն ստանալու՝ վազեց **տիկին Սառնանուշի** մոտ ու պաղպաղակ խնդրեց (Մարուխյան Ռ., 2008, 30):
3. **Արեգ տղան** կռացավ, բռնեց կրիայի պատյանից, և նա այնքան փոքր էր, որ տեղավորվեց **Արեգի** ավիում (Մարուխյան Ռ. 2008, 3):

Այս հեքիաթներում պատումի սյուժեն և կերպարները ընտրվել են որոշակի նպատակներով ու կոնկրետ ուղղվածություն ունեն: Որպես զուգահեռ կերպար կամ որպես խոսակցության նյութ՝ հեղինակը ընտրում է ընթերցողին քաջ հայտնի պատմական կերպարներ, որն էլ անմիջականորեն ամբողջացնում, տիպականացնում է տվյալ կերպարը և ամբողջական դարձնում միտքը, ասելիքը:

Ինչպես Ու. Էկոն է նկատում, տեքստի գեղարվեստական արժանիքները որոշվում են վերջինիս անսպառ ընկալումների ու մեկնությունների տալու ունակությամբ (Զիվանյան Ա.

2010, 59): Բավական հեռացած լինելով ժաղովրդական ավանդական հեքիաթից՝ հեղինակները հեքիաթի գրական իրենց տարբերակներում պահում են դասական հեքիաթի կառուցվածքային կաղապարը, իսկ մնացածը ձևակերպում՝ բովանդակությամբ համապատասխան:

Օրինակ՝

1. **Արքայադուստր Մարադոննան** ատեց իր անունը և **Ֆուտբոլը**, որի պատճառով ծնողները իրեն այդպես են կոչել (Ոսկանյան Ա. 2011, 3):
2. Նա ունի երեք տուն՝ երեք տարբեր թաղամասերում: Եվ դրա համար էին նրան ասում **ճանապարհորդ Գլուխմոնա** (Անդա Ա. 2013, 332):
3. «**Հազարան Հավք** անունով թռչունը մոտ եկավ ու հարցրեց...» (Միլիտոնյան Էդվ. 2008, 4):
4. – Ինչու՞ միայն գնդակ տշել – քթի տակ փնթփնթում էր **Ռոնալդինյոն**, - ես կարող եմ սամբա և ռումբա պարել, շատ համեղ կերակուրներ եմ պատրաստում (Ոսկանյան Ա. 2011, 18):
5. Հազվադեպ բնակեցված փողոցում **Գազազը** վաղուց ստերի արքան էր, բայց հարավ՝ առանձնապես քիթը չէր խոթել (Անդա Ա. 2013, 232):
6. **Ուստիանը** մոտենում է ամուսնուն, և **Մարոյին** անլսելի շշնջում՝ «վախկոտ» (Ադայան Ն. 2010, 89):
7. **Նիմբյումները երաժիշտներ էին**: Երբ աշխարհում երգ էր գրվում, նոտաները իրենք իրենց օդով սավառնում ու զրնգոցով լցվում էին նրանց ականջները (Անդա Ա. 2013, 18):
8. **Սարսունելը** համարյա թե ծնվել էր **Անկիմյուրում**, հա-

մենայն դեպս, աչքերը այնտեղ էր բացել (Անդա Ա. 2013, 55):

9. **Թփաները** անդադար **գինվորներ են** (Անդա Ա. 2013, 55):

Բանահյուսական հեքիաթի և նրա ժամանակակից տարբերակների մասին խոսելիս կարևորվում է նաև պատմական ժամանակի խնդիրը, որը բանահյուսական տարրերում առավել ակնառու է դառնում կերպարների և նրանց զբաղմունքների, պաշտոնների միջոցով: Ժամանակակից հեքիաթի այս բաժանումը ևս արդիական է, քանի որ խոսքը ոչ միայն ընդհանրապես ժամանակի մասին է, այլ նաև ժամանակի տիպաբանական նկարագրության: Ժամանակակից հեքիաթներում կերպարները, որոնցով ընդգծվում է սոցիալական դասակարգումը էապես տարբերվում են ժողովրդական հեքիաթի կերպարներից, հետևաբար ժամանակակից կերպարների սոցիալական ժամանակը ընդգծող զբաղմունքները ևս տարբեր են:

Օրինակ՝

1. «Հայաստան երկրի հնագույն **Գողթան գավառում երգիչներ** կային...» (Միլիտոնյան Էդվ. 2003, 3):
2. «Առավոտից երեկո **վարսավիրի ձեռքի տակ աշխատում էր մկրատը...**» (Գրիգորյան Եր. 2013, 35):
3. **Գյուղատնտեսության նախարար** – Տարին չորային է:
Նազար – Ինչի՞ է չորային:
Գյուղատնտեսության նախարար –Արդեն չորս ամիս է անձրև չի գալիս:
Նազար- Գնա Աստծուն ասա:

Գյուղատնտեսության նախարար – Ասում եմ, չի լսում (Ադայյան Ն. 2010, 94):

4. **«Ճարտարապետը** խմեց մինչև վերջին կաթիլը, քիչ էր մնում բաժակն էլ ատամների տակ առնել...» (Ադայյան Ն. 2010, 5):
5. **Գեներալ ժուփուփը** թփաների ամենահայտնի գեներալն էր և աշխարհի ամենասարսափազդու թփանը» (Անդա Ա. 2013, 217):

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ թեև մշակված, փոխադրված ու հեղինակային հեքիաթների լեզվաոճական կառուցվածքի վրա ակնհայտորեն զգալի է բանահյուսական հեքիաթների լեզվաոճական ազդեցությունը, այնուամենայնիվ ժողովրդական հեքիաթում խոսքը ձևակերպված է ավելի պարզ, մատչելի, դիպուկ ու կարճ: Բանահյուսական հեքիաթների մշակված և փոխադրված տարբերակներում ակնհայտ է հեղինակների՝ խոսքի ժողովրդականությունը պահպանելու միտումը, որով պայմանավորված է դրանցում ավանդական կայուն կապակցությունների, լեզվի ժողովրդախոսակցական տարրերի առատ կիրառությունը: Ի տարբերություն վերջինների, հեղինակային հեքիաթներն ավելի նորմավորված լեզվի շրջանակներում են, ազատ են հեքիաթին բնորոշ ավանդական կայուն կաղապարներից: Սրանցում ավելի ակնառու է հեղինակների ինքնուրույն ոճն ու լեզվամտածողությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ԺՀԺԳ)*

1. **Արեւյան Հակոբ**, ծնվ. 1938թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան: Որպես սիրող-դերասան՝ երկար տարներ խաղացել է Դիլիջանի թատրոնում: Հեքիաթները լսել է հորից՝ Ոսկանից (1881թ. ծնվ.), որը գաղթել է Կարնո նահանգի Շապին-Գարահիսար քաղաքից.
«Պըլը Պուդին»** (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2005), «Թագավորի աղջկա ու ավազակի հեքիաթը», «Կենդանիների լեզուն հասկացողը», «Դժբախտությունը ահելո՞ց, թե՛ ջահելոց», «Ղադրը» «Խելոք ու հիմար ախպերներ», «Ճակատագիր», «Ինչպես թամբալը դարձավ թագավորի փեսա», «Գինի խմողի հեքիաթը» (գրառող՝ Զաքարյան Եվա, 2007), «Անխելք մարդը» (գրառող՝ Սեմիրջյան Ալվարդ, 2013):

* Ցանկում ներկայացված են ժամանակակից գրառումների ծանոթագրական տվյալները հետևյալ հերթականությամբ. բանասացի անձնական տվյալները, նրա պատմած հեքիաթների վերնագրերը, գրառողն ու գրառման տարեթիվը: Աստղանիշներով նշվածներից բացի՝ մյուս բոլոր հեքիաթներն անտիպ են: Հեքիաթների ձեռագրերը, բացառությամբ Եվա Զաքարյանի գրառումների, գտնվում են Նվարդ Վարդանյանի անձնական արխիվում:

** Երկու աստղանիշով կնշված են այն տասներեք հեքիաթները, որոնք տպագրվել են Ն.Վարդանյանի «Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային-տիպաբանական քննություն» (Եր., 2009թ.) մենագրության «Հավելված» բաժնում: Գրքում տվյալ հեքիաթների հղումները տրվում են տպագիր աղբյուրին:

2. **Աղամյան Լաուրա**, Ասկերանի շրջան, գ. Բաղարա (Պատարա).
«Երկու քույր», «Ճակատագիր», «Թամբալը», «Կախարդը» (գրառող՝ Հակոբյան Դիանա, 2011):
3. **Այվազյան Թեղիկ**, ծնվ. 1918թ. Շամշադինում, բնակվում է Հրազդանում.
«Երկու ախպոր հեքիաթ»**, «Երկու քույր» (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2005):
4. **Անանիկյան Գագիկ**, 67 տարեկան, Շիրակի մարզ, գ. Հառիճ.
«Սըքրեն», «Օձմայիլը» (գրառող՝ Անանիկյան Ամայա, 2012):
5. **Անտոնյան Կլարա**, Արագածոտնի մարզ, ք. Թալին, արմատներով՝ Մուշից.
«Չարչու հեքիաթը» (գրառող՝ Հակոբյան Նարե, 2012):
6. **Ասափրյան Ալմաստ**, ծնվ. 1927թ., Արմավիրի մարզ, ք. Էջմիածին: 1945թ. լսել է Արմավիրի մարզի Արևաշատ գյուղում Բաղե անունով մի մարդուց.
«Առյուծը պահեց, ախպերն սպանեց», «Հավատարիմ ու անհավատարիմ կնանիք», «Ագռավի ձագը», «Հարս ու կեսրար», «Հարուստ մարդն ու բանվորները», «Կորած դավեն», «Ուղտի սրտի երեք անցքը» (գրառող՝ Ավետիսյան Արմենուհի, 2007):
7. **Ավետիսյան Ֆուրման**, ծնվ. 1939թ., Արարատի մարզ, գ. Զանգակատուն, մասնագիտությամբ՝ տեխնոլոգ.
«Հեքիաթ» (գրառող՝ Ավետիսյան Անուշ, 2012):
8. **Արամյան Ռիմա**, Արարատի մարզ, գ. Այգավան.

- «Երկու քույր», «Ճակատագիր», «Թամբալը» (*գրառող՝ Հակոբյան Դիանա, 2011*):
9. **Քալասանյան Աստղիկ**, 79 տարեկան, Սյունիքի մարզ, գ. Կոռնիձոր.
«Պիլտոսը» (*գրառող՝ Ասրյան Մանե, 2012*):
 10. **Քասենցյան Հայաստան**, 88 տարեկան, Ախալքալաքի Խանդո գյուղ, հեքիաթները լսել է պապերից, որոնք գաղթել են Կարնո աշխարհից.
«Ալաբալըղ ձուկը», «Թաքավորն ու դըմըրչին» (*գրառող՝ Դեմուրջյան Լուսինե, 2009*):
 11. **Գաբրիելյան Լյուբա**, 65 տարեկան, Սյունիքի մարզ, ք. Կապան.
«Դրժած խոստում», «Իրեք իմաստուն ախպեր» (*գրառող՝ Մայիլյան Ռուզան, 2007*):
 12. **Դավթյան Թերեզա**, ծնվ. 1935թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շամախյան թաղամաս (նախկինում՝ Պողոս-քիլիսա գյուղ).
«Հազարան բլբուլ», «Շահվելադ ու Բանգլիբոզ», «Իմաստուն աղջիկը», «Ճակատագիրը», «Իրեք հող» (*գրառող՝ Զաքարյան Եվա, 2012*), «Գըղըկը», «Ոսկեքաքուլ տղեն», «Թագավորի իրեք տղեն», «Սագարած աղջիկ» (*գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2012-13*):
 13. **Դավթյան Լյուդմիլա**, ծնվ. 1948թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան, բնակվում է Երևանում, ԵՊՀ աշխատակից.
«Երեք խրատ» (*գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2011*):
 14. **Դվոյան Լաուրա**, ծնվ. 1946թ., Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ: Աշխատել է կոշիկի գործարանում.

- «Խորամանկ աղվեսը», «Լեզվանիին փրկություն չկա», «Ճակատին ինչ գրած ա, էլ փոխել չի լինի», «Չախչախ թաքավոր», «Շահիսմայիլը», «Արջն ու գյուղացին», «Սերը աթարին էլ ա կանում», «Հարս ու կիսուր» (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2014):
15. **Էլոյան Ռուբեն**, ծնվ. 1958թ., Երևան, ԵՊՀ դասախոս, հեքիաթները լսել է Երևանի գարեջրի գործարանում Անուշավան անունով մի ծերունուց.
«Ըռնոն ու Դռնոն»**, «Ինչ անում ես, խելքով արա»** (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2005):
16. **Թադևոսյան Հայկանուշ**, . ծնվ. 1930թ., Աշտարակի մարզ, գ. Կոշ.
«Ինչ անես, քեզ կանես», «Բախտ նայողի հեքիաթը», «Խելք պտի ըլնի, որ ղսմաթ ըլնի» (գրառող՝ Դանիելյան Արևիկ, 2012):
17. **Խաչատրյան Սիրուշ**, ծնվ. 1921թ. , Կոտայքի մարզ, ք. Հրազդան.
«Հարուստի ու քյասիբի հեքիաթ»** (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2005):
18. **Խուդավերդյան Լեյլի**, ծնվ. 1941թ. Ջավախքում, բնակվում է Երևանում.
«Չըթոն» (գրառող՝ Հովհաննիսյան Մանե, 2011):
19. **Կարապետյան Վերգինե**, ծնվ. 1940թ., Շիրակի մարզ, գ. Մուսայելյան: Հեքիաթները լսել է հայրական տատից՝ Վարդեր Կարապետյանից, որը գաղթել է Արևմտյան Հայաստանի Սարիղամիշ գյուղից.
«Չինիկ Աշխենիկը», «Ճակտի գրածը չի ջնջվի», «Հոր փորողը հորը գնգնի», «Չախչախ թակավոր», «Արդար

- արունը գետին չի մնա», «Տուտի ղուշի», «Լրբին էյթիրար չկա», «Ախճաղիկը», «Ինիգն ու Մինիգը», «Թակավորի թամբալ ախճիկը», «Թակավորի տղի հեքիաթը», «Ղամփերին», «Շայիլմայիլը» (*գրառող՝ Սյրեփանյան Աննա, 2010*):
20. **Հախվերդյան Հրաչիկ**, ծնվ. 1927թ., Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, ապրում է Խաշթառակ գյուղում.
«Տերտերն ու ջաղացպանը» (*գրառող՝ Ավագյան Լիլյա, 2012*):
21. **Հակոբյան Անուշավան**, ծնվ. 1925թ., Կոտայքի մարզ, գ. Մարմարիկ: Աշխատել է ֆերմայի անասնապահ, այնուհետև՝ վարիչ.
«Հազարան բլբուլ», «Շահ Իսմայիլը» (*գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2007*):
22. **Հակոբյան Նորիկ**, ծնվ. 1932թ., ք. Երևան.
«Ճակատագիրը», «Գուշակը» (*գրառող՝ Հակոբյան Դիանա, 2011*):
23. **Հարությունյան Բաբկեն**, ծնվ. 1927թ., Տավուշի մարզ, գ. Հաղարծին.
«Նունուֆար»**, «Իրեք ախպեր»**, «Օցն ու կինը»**, «Քաչալն ու փալչին»**, «Քեֆ անողին քեֆը անպակաս կըլի»** (*գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2008*):
24. **Հարությունյան Մուրադ**, ծնվ. 1921թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շամախյան թաղամաս (նախկինում՝ Պողոս քիլիսա գյուղ).
«Կուր հերն ու որդիները», «Հոր խրատը», «Դանանդան Բալուլը», «Ծյուկ տղեն», «Ճիկո», «Անհավատարիմ կնիկ», «Շահ Իսմայիլը» (*գրառող՝ Վարդանյան*

- Նվարդ, 2012թ.), «Օձի լեզվի տակի մատանին», «Աշուղ Ղարիբի հեքիաթը», «Սարի միջի ոսկին», «Վեզիրի աղոթքը» (*գրառող՝ Զաքարյան Եվա, 2012*):
25. **Ղարիբյան Մարիամ**, ծնվ. 1942թ. ք. Թեհրան, ապրում է Արտաշատում.
«Եղեգնի աղջիկը» (գրառող՝ *Մուրադյան Լիլիթ, 2007*):
26. **Մանուկյան Հասմիկ**, 17 տարեկան, Աշտարակի շրջանի գ. Ավան, բանասաց Մանուկյան Սարգսի թոռնուհին, հեքիաթը լսել է տատից, որը գաղթել է Սասունից.
«Ճիլիմոն» (գրառող՝ *Մանուկյան Լուսինե, 2009*):
27. **Մանուկյան Սարգիս**, 84 տարեկան, Աշտարակի շրջան, գ. Ավան, արմատներով՝ Սասունից.
«Զրիհան ու Արիհան» (գրառող՝ *Մանուկյան Լուսինե, 2009*):
28. **Մխիթարյան Գոհար**, ծնվ. 1941թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան, մասնագիտությամբ ապրանքագետ, աշխատել է Դիլիջանի «Իմպուլս» գործարանում, բանասաց Աբելյան Հակոբի կինն է.
«Ճակատագիր» (գրառող՝ *Վարդանյան Նվարդ, 2015*):
29. **Ոսկանյան Սերյոժա**, ծնվ. 1931թ., Տավուշի մարզ, ք. Դիլիջան.
«Որսկանի հեքիաթը» (գրառող՝ *Վարդանյան Նվարդ, 2005*):
30. **Պեպրոսյան Լալա**, ծնվ. 1933թ., Կոտայքի մարզ, գ. Արամու: Ծնողները Խոյից են եղել, հեքիաթները լսել է տատից: Մասնագիտությամբ ծխախոտագործ է.
«Նախրչու հեքիաթը», «Թագավորի տղեն ու դևը», «Զանգի-Զրանգի», «Խորթ ախչկա նաղլ», «Թագա-

- վորի պատիկ տղեն» (գրառող՝ Սարթենիկ Բաղայան, 2007):
31. **Պողոսյան Սեդա**, 72 տարեկան, ծնունդով Մարմաշենից, ապրում է Գյումրիում, լսել է մորից՝ Պողոսյան Վարսենիկից.
«Կադի Նաֆանդի» (գրառող՝ Սեմիրջյան Ալվարդ, 2014):
32. **Սարգսյան Թերեզա**, ծնվ. 1927թ., Արագածոտնի մարզ, գ. Երնջատափ, ապրում է Էջմիածնի շրջանի Շահումյան գյուղում, մասնագիտությամբ՝ ապրանքագետ.
«Լավ ու վատ կնանիք», «Աստծուց ունեցվածք խնդրող մարդը», «Նամարդ ընկերները», «Ճուկո», «Ավչի Այմատ», «Թամբալը», «Ճակատագիր», «Ուստա Նաջար», «Լիրբ կնիկը», «Անմեղ հալածված աղջկա հեքիաթը» (գրառող՝ Սարգսյան Հասմիկ, 2007):
33. **Սարգսյան Հասմիկ**, 64 տարեկան, Շիրակի մարզ, գ. Աշոցք.
«Անխելք մարդը» (գրառող՝ Վարդանյան Նարինե, 2014):
34. **Սիմոնյան Բարեղամ**, ծնվ. 1931թ., Կոտայքի մարզ, գ. Մհուր.
«Անկոչ հյուրը» (գրառող՝ Մարիկյան Աստղիկ, 2007):
35. **Սիմոնյան Վահրամ**, ծնվ. 1927թ., Կոտայքի մարզ, գ. Մհուր.
«Խորհրդավոր այծը» (գրառող՝ Մարիկյան Աստղիկ, 2007):
36. **Վարդանյան Խաչատուր**, ծնվ. 1934թ., Կոտայքի մարզ, Հրազդանի գ. Աղբյուրակ, ապրում է Երևանում,

ԵՊՀ դասախոս է: Հեքիաթները լսել է իր հորից և պապից, որոնք էլ արմատներով Մակվից են.

«Անարժան որդիների ու տերտերոջ հախը», «Մանիշակ թաթեր», «Ճակատագիրը», «Կախպա քյալագը»**, «Խիզար հիմաստունի իրեք խրադը»** (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2004-2014):

37. **Վարդանյան Նորա**, ծնվ. 1934թ. Արցախի Շահումյան շրջան, հետագայում ամուսնու հետ բնակություն են հաստատել Դիլիջանում.

«Ճակատագիր»**, «Մարթ ու կնիկ», «Աշուղ Ղարիբի պատմությունը», «Եղեռնի օրերի հեքիաթ» (գրառող՝ Վարդանյան Նվարդ, 2006):

38. **Տեր-Մինասյան Ալեքսան**, 52 տարեկան, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երկայն Ալեքի թողը.

«Աղեն ուներ իրեք նոքյար» (գրառող՝ Վարդանյան Նարինե, 2014):

39. **Քեսաբյան Կարապետ**, ծնվ. 1936թ. Արևմտյան Հայաստանի Բելան գյուղ, ծնողները Քեսապից են: Ապրում է Երևանում.

«Երեք խորհուրդ» (գրառող՝ Քեսաբյան Ազնիվ, 2010):

**«ՀԵՔԻԱԹ-ՀԵՔԻԱԹ ՊԱՊՍ...», ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ՀՀՊԺԳ)***

1. **Աբեյան Հակոբ** (տե՛ս նախորդ ցանկը (ԺՀԺԳ № 1).
«Հեքիաթ-հեքիաթ պապս» (գրառող՝ Վարդանյան
Նվարդ, 2005):
2. **Արշակյան Ռոզա**, ծնվ. 1928թ., Կոտայքի մարզ, գ.
Ֆանտան, բնակվում է Երևանում.
«Նաղըլ, նաղըլ պապըս ա» (գրառող՝ Վարդանյան
Նվարդ, 2005):
3. **Գրիգորյան Զվեգ**, ծնվ. 1944, Կոտայքի մարզ, գ.
Քարաշամբ.
«Նաղըլ, նաղըլ պապս է» (գրառող՝ Բաղայան Սա-
թենիկ, 2010):
4. **Հովհաննիսյան Նուռիկ**, Շիրակի մարզ, գ. Մարմա-
շեն.
«Հեքիաթ-հեքիաթ պապս» (գրառող՝ Վարդանյան
Նարինե, 2014):
5. **Մելքոնյան Մելանյա**, ծնվ. 1962թ., Շիրակի մարզ, ք.
Գյումրի.
«Հեքիաթ-հեքիաթ պապս» (գրառող՝ Սեմիրջյան
Ալվարդ, 2014):

* Գրառումներն անտիպ են և պահվում են Նվարդ Վարդանյանի անձնա-
կան արխիվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արեղյան Մ. (1975), Երկեր, հ. Է, Եր.:

Անդա Ա. (2013), Անկիմյուրի բնակիչները, Հեքիաթ-վեպ, Երևան:

Ագաթանգեղոս (1983), Հայոց պատմություն, Եր.:

Ադայան Ն. (2010), Ծաղրաճուն մեծ քաղաքում, Եր.:

Ալիշան Ղևոնդ (2002), Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր.:

Ավագյան Էդ. (2006), Մանգասզգտնես վերջին թագավորը., Եր.:

Ավագյան Էդ. (2007), Փոքրերի մեծ աշխարհը, Եր.:

Աճառյան Հրաչյա (1913), Հայերենի գավառական բառարան, Եր.:

«Բյուրակն» (1899), Կ.Պոլիս, № 8:

Գրիգորյան Ե. (2013), Ձերդ գերազանցություն վատ կախարդ պառավը, Եր.:

Գրիգորյան Ռ. (1970), Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970:

Գրիգորյան Վ. (2007), Հեքիաթների գիրք, Եր.:

Գրիմ եղբայրներ (1981), Հեքիաթներ, Եր.:

Գուրունյան Հ. (1991), Համշենահայ բանահյուսություն, Եր.:

Եգեկյան Լ. (2007), Հայոց լեզվի ոճագիտություն, Եր.:

Եղիազարյան Ա. (1990), Թումանյանի պոետիկական և նրա ժողովրդական ակունքները, Եր.:

Զաքարյան Եվա (2010), Հիվանդության և բուժման առասպելային հայկական հեքիաթներում, թեկնածուականատենախոսություն (ծեռագիր), Եր.:

Զաքարյան Եվա (2012-2013), Եղնիկ աղջկա մոտիվը հայկական հեքիաթներում, «Ոսկե դիվան», պրակ 4, էջ 81-89:

Թումանյան Հովհ. (1994), Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 5, Եր.:

Լալայան Ե. (1931), Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ, Տեղեկագիր ՀՄԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., N 5:

Խեմչյան Է. (2010), Բանաձև-սկսվածքները Լոռու հրաշապատում հեքիաթներում, Ոսկե դիվան, պրակ 2, էջ 78- 84:

Խեմչյան Է. (2011), Սկսվածքային և միջնամասային կայուն բանաձևերը Տավուշի հեքիաթներում, Պատմա-բանասիրական հանդես, Եր., № 1, էջ 206-229:

Խեչոյան Լ. (2002), Տան պահապան հրեշտակը, Եր.:

Խուդոյան Ս. (1973), Սովետահայ դպրոցի պատմություն. 1920-1941 թթ., Ե.:

ՀԱԲ հ. 16 (1984), Սվազյան Վ., Մուսա լեռ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», Եր.:

ՀԱԲ հ. 19 (1999), Խաչատրյան Ռաիսա, Թալին, «Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», Եր.:

Հակոբյան Ն., Սահակյան Ա. (1986), Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, № 1, էջ 126-133:

Հակոբյան Նելլի (1993), Հայ ժողովրդի իրապատում հեքիաթը միջնադարյան գրառումներում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, № 1, էջ 181-187:

Հակոբյան Վ. (2003), Լինում է, չի լինում, Ստեփանակերտ:

Հարությունյան Սարգիս (2000), Հայ առասպելաբանություն, Բեյրութ:

ՀԺՀ հ. I (1959), Հայ ժողովրդական հեքիաթներ, կազմ. Ա.Մ.Նազինյան, Եր.:

ՀԺՀ հ. II (1959), կազմ. Ա.Մ.Նազինյան, Եր.:

ՀԺՀ հ. III (1962), կազմ. Ա.Մ.Նազինյան, Եր.:

ՀԺՀ հ. IV (1963), կազմ. Մ.Ս.Մկրտչյան, Եր.:

ՀԺՀ հ. V (1966), կազմ. Ա.Մ.Նազինյան և Մ.Մ.Գրիգորյան, Եր.:

ՀԺՀ հ. VI (1973), կազմ. Ա.Մ.Նազինյան և Վ.Գ. Սվազյան, Եր.:

ՀԺՀ հ.VII (1979) , կազմ. Ա.Մ.Նազինյան, Մ.Ն.Առաքելյան, Եր.:

ՀԺՀ հ. VIII (1977), կազմ. Ա. Մ. Նազինյանի և Ռ. Հ. Գրիգորյանի, Եր.:

ՀԺՀ հ. IX (1968), կազմ. Մ.Ս.Մկրտչյան, Եր.:

ՀԺՀ հ.X (1967), կազմ. Ա.Տարոնցի, Եր.:

ՀԺՀ հ XI (1980) , կազմ. Մ.Ս.Մտրտչյան:

ՀԺՀ հ. XII (1984), կազմ. Վ. Սվազյան, Եր.:

ՀԺՀ հ. XIII (1985), կազմ. Ա.Ս.Ղազիյան, Եր.:

ՀԺՀ հ. XIV (1999), կազմ. Ա.Ղազիյան, Եր.:

ՀԺՀ հ. XV (1998) , կազմ. Վ.Սվազյան, Եր.:

ՀԺՀ հ. XVII (2012), կազմ. Թ. Հայրապետյան, Եր.:

ՃԺՆ Նազինյան Ա. (1990), «Հայկական ժողովրդական հեքիաթներ», Արտաշես Նազինյանի մշակմամբ, Եր.:

Ղանալանյան Ա. (1986), Հայ գրականությունը և բանահյուսությունը, Եր.:

Մալխասյան Ս. (1958), Առակներ, ավանդություններ, անեկդոտներ, Եր.:

Մարուխյան Ռ. (2008), Չիկարելիի նոր արկածները, Եր.:

Միլիտոնյան Էդվ. (2003), Վահագն վիշապաքաղի արկածները, Եր.:

Միլիտոնյան Էդվ. (2004), Հնարամիտ բադի ճամփորդությունը., Եր.:

Միլիտոնյան Էդվ. (2009), Երազանք ասպետի արշավանքը., Եր.:

Միլիտոնյան Էդվ. (2008), Չիպոն, Եր.:

Միլիտոնյան Էդվ. (2010), Արքայադուստր Թարսինեն, Եր.:

Ոսկանյան Ա. (2011), arpi-voskanyan.blogspot.com

Ոսկանյան Ա. (2011), Մարադոնան և Ռոնալդինյոն, Եր.:

Պարսկական ժողովրդական հեքիաթներ (2010), Եր., Էդիթ Պրինտ հրատ.:

Պետրոսյան Հ. Զ., Գալարյան Ա. Ա., Ղարազույան Թ. Ա. (1975), Լեզվաբանական բառարան, Եր.:

Պողոսյան Պ. Մ. (1990), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Գիրք առաջին, Եր.:

Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա. (1980), Հայոց լեզու, Ա պրակ, Եր.:

Ջիվանյան Ա. (2010), Ոճահնարների իմաստային մեկնությունը հրաշապատում հեքիաթի համատեքստում, «Ոսկե

Դիվան», Հեքիաթագիտական հանդես, պրակ 2, Եր., էջ 59-70:

Ջիվանյան Ա. (2008), «Երկնքից ընկավ երեք խնձոր», հրաշապատում հեքիաթը որպես արքիտեքստ, Եր.:

Ջրբաշյան Հրվ. (1980), Գրականության տեսություն, Եր.:

Սուքիասյան Ա. (1982), Ժամանակակից հայոց լեզու, Եր.:

Սուքիասյան Ա., Գալստյան Ս. (1975), Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր.:

Վարդանյան Ա. (1986), Հովհաննես Թումանյանի հեքիաթները (ստեղծագործական պատմության հարցեր), Եր.:

Վարդանյան Ա. (2010), Ժողովրդական հեքիաթների գեղարվեստական մշակումների սկզբնավորման ուրվագիծ, «Ոսկե դիվան», Հեքիաթագիտական հանդես, պրակ 2, էջ 10-16:

Վարդանյան Նվ. (2007), Մսե հմայիլի մոտիվը հայ բանահյուսության մեջ, «Հայ ժողովրդի մշակույթ XIV», Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., էջ 305-310:

Վարդանյան Նվ. (2009), Հայոց իրապատում հեքիաթը. Ժանրային-տիպաբանական քննություն, Եր., ԵՊՀ հրատ.:

Վարդանյան Նվ., Վարդանյան Նար. (2014), Բանահյուսական հեքիաթի մշակման և փոխադրության արդի միտումները, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Եր., 2014, N2, էջ 113-123:

Վարդանյան Ա., Մարգարյան Հ. (2010), Ժողովրդական բառ ու բանի, կյանք ու կենցաղի դրսևորումները Արմավիրի մարզում (ըստ 2007-2009թթ. դաշտային գործուղումների), «Հայ ժողովրդական մշակույթ XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Եր., էջ 531-541:

Օհանյան Արմեն (2013), Կիկուի վերադարձը, Եր.:

Афанасьев А. (1982), Древо жизни: Избранные статьи, Москва: Современник.

Закирова И.Г. (2010), Мотив «написанной» судьбы в тюркском фольклоре, Вестник Адыгейского государственного университета. Серия 2: Филология и искусствоведение, № 4.

Ивановна О. (2009), Эволюция языка и стиля русской литературной сказки XVIII – XX веков, Суггут, г.:

Интернет и фольклор (2009), Сборник статей, М..

МНМ (1992), Мифы народов мира, т. 2, М..

Народные русские сказки А.Н.Афанасьева в трех томах (1985), т. 2, Москва, Изд. «Наука».

Потебня А.А (1867). О доле и сродных с нею существах /А.А. Потебня. – М. : Тип. Грачева,. – 44 с. – Отд. отт. из журн. «Древности : Тр. Моск. археол. о-ва», т. 1, вып. 2, с. 153–196.

Русские народные сказки, Святагор, [http:// russkazka.narod.ru/svyatogor.html](http://russkazka.narod.ru/svyatogor.html), 30.01.2015.

Рошияну Н. (1974), Традиционные формулы сказки, М..

Сказки древнего Египта, Сказка об обреченном царевиче, http://www.legendy.net/egipt_skazki_5.php, 30.01. 2015.

Феи судьбы, http://www.mynanny.md/index.php/_ru/children-anounces-ru/feya-sudibi-ru (28.07.2015).

Andersen, Lene (2011). Nostalgia and authenticity in contemporary oral storytelling in Denmark, Elore (ISSN 1456-3010), vol. 18 – 2, http://www.elore.fi/arkisto/2_11/andersen.pdf (01.08.2015):

ATU (Uther, H.-J. 2011), *The Types of International Folktales, A Classification and Bibliography*, I, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica.

Bottigheimer, Ruth (2002), *Fairy Godfather. Straparola, Venice and the Fairy Tale Tradition*. Philadelphia: University of Pennsylvania Press.

Brown Fairy Book (1914), Edited by Andrew Lang, New York.

Cathy Spagnoli (2013), *Still Telling in Japan: Traditional Folktelling //Traditional Storytelling Today: An International Sourcebook*, Edited by Margaret Read MacDonald, New York, pp. 119-121.

Holbek, Bengt (1987). *Interpretation of Fairy Tales: Danish Folklore in a European Perspective*. FF Communications no. 239. Helsinki, p. 24:

Interview with Diarmuid Ó Giolláin (2005), Interview with Diarmuid Ó Giolláin at the 14th ISFNR Congress, 28 July, Tartu-Ave Tupits, 125-126 <http://www.folklore.ee/folklore/vol39/discuss.pdf>:

Kaliambou, Maria (2007), *The Transformation of Folktales and Fairy Tales into Popular Booklets, Marvels & Tales*, Vol. 21, No. 1, Fairy Tales, Printed Texts, and Oral Tellings, pp. 59-60.

Lee-Ellen Marvin (2013), *Storytelling in Middle-Class Indian Families //Traditional Storytelling Today: An International Sourcebook*, Edited by Margaret Read MacDonald, New York, pp. 102-105.

Radulović, Nemanja (2014), *Fate Written on the Forehead in Serbian Oral Narratives, "Folklore"*, *Electronic Journal of Folklore*, vol. 59, pp. 29-44. <http://www.folklore.ee/folklore/vol59/radulovic.pdf>

Risto Järv (2000), Old Stories in Contemporary Times - A Collecting Experience in the Orava Village in Siberia, "Folklore", Electronic Journal of Folklore, vol 13, pp. 37-65 .
<http://www.folklore.ee/folklore/vol13/orava.htm>

Risto Järv (2005), The Gender of the Herois, Storytellers and Collectors of Estonian Fairy Tales, "Folklore", Electronic Journal of Folklore, vol 29, pp. 45-60. <http://www.folklore.ee/folklore/vol29/gender.pdf>

Satu Apo (2007), The Relationship between oral and Literary Tradition as a Challenge in Fairy Tale Research. The Case of Finnish Folktales, "Marvels & Tales, vol. 21, No. 1, Fairy Tales, Printed Texts and Oral Tellings, p. 19-33:

Traditional Storytelling Today: An International Sourcebook (2013), Edited by Margaret Read MacDonald, New York /first published in 1999/.

Who Says? American Storytelling. (1996). Essays on Pivotal Issues in Contemporary Storytelling. Edited by Birch Carol and Melissa Heckler. Atlanta GA: August House.

Wienker-Piepho, Sabine (2013), Märchen 2000, Taking Care of the Fairy Tale in Germany // Traditional Storytelling Today: An International Sourcebook, Edited by Margaret Read MacDonald, New York, pp. 239-246.

Zipes, Jack (2011), The Meaning of Fairy Tales within the Evolution of Culture, "Marvels & Tales", vil. 25, No 2, pp. 221-243:

Zipes, Jack (2012), The Irresistible Fairy Tale: The Cultural and Social History of a Genre, Publisher: Princeton University Press , April 2012.

**NVARD VARDANYAN, ALVARD SEMIRJYAN-BEKMEZYAN
NARINE VARDANYAN**

**CURRENT ISSUES OF ARMENIAN FOLK
AND LITERARY FAIRY TALE**

(Translated by Lusine Hakobyan)

YEREVAN 2015

CONTENTS

INTRODUCTION. *KhachaturVardanyan*158

CHAPTER I.

ARMENIAN FOLK TALE TODAY 162

A. Contemporary Armenian storytellers 168

B. The folktale types in the repertoires of
contemporary storytellers..... 176

C. Traditional formulas in contemporary
recordings of folktales 192

PREDESTINATION TALES: FROM ANCIENT ORIGINS TO
CONTEMPORARY RECORDINGS 201

THE LITERARY INFLUENCE IN CONTEMPORARY
RECORDINGS OF ORAL TALES (*Nvard Vardanyan*).... 216

CHAPTER II

CONTEMPORARY ARMENIAN LITERARY FAIRY TALE:

ISSUES OF GENRE AND POETICS (*Alvard Semirjyan-
Bekmezyan*)..... 230

CHAPTER III

FOLKTALES AND CONTEMPORARY LITERARY TALES:

A FEW LINGUOSTYLISTIC PECULIARITIES 243

A. The uses of fixed speech elements: traditional
formulas, sayings and proverbs 247

B. A few grammatical and vocabulary
peculiarities 257

**C. Certain linguostylistic peculiarities of
characterization (*Narine Vardanyan*)..... 265**

NOTES

Contemporary recordings of folktales (CRF) 271
***“A tale, a tale my Grandpa” – contemporary
recordings (TTGCR) 278***

BIBLIOGRAPHY 279

INTRODUCTION

The authors of this study – folklorist, PhD Nvard Vardanyan, literary critic, associate professor, PhD Alvard Semirjyan-Bekmezyan and linguist, PhD Narine Vardanyan – each within her own field of professional interest have reflected on contemporary manifestations of fairy tale, its peculiarities, and have made a noteworthy attempt to get acquainted with it through analyzing. This frame of the Armenologist researchers conditioned the structure of this monograph – to represent the contemporary fairy tale through three different exams, folkloristic, literary and linguostylistic.

Nvard Vardanyan has examined the peculiarities of contemporary way of living of Armenian folktales. Up to one hundred twenty-five folktales recorded in different ethnographical regions of Armenia during the last ten years have served as documental material for the research. Their examination revealed the peculiarities of modern way of living of folktales, of contemporary storytellers, of the types of the tales still told and beloved nowadays. The researcher documents that nowadays, when traditional folklore is gradually fading away in the whole world (it is already silent in some countries), Armenian storytellers, though scarce in number, still continue telling the tales bequeathed to them orally. The partial deterioration of magic tales, their transformation to realistic tales, the almost complete disappearance of animal tales, the prevalence of realistic plot sequences and relatively rich and

entirely preserved plots, the formation of new plot sequences on the basis of old patterns, the decrease of usage of traditional fairy tale formulas or their replacement with new formulas are examined as contemporary peculiarities of folktales.

In the frame of this first study issues related to the contemporary recordings of folktales are also included, such as the question of the determined influence of literature on today's folklore material and the difficulties arising from it with respect to the principles of traditional folklore collecting.

N. Vardanyan studies separately the question of closeness of the contemporary recordings of tales to national origins and traditional perceptions. The issue is clarified with the example of predestination plot sequence that stands out with the biggest number of versions in the contemporary recordings. The ancient origins of the tale that derive from the primordial mythological concepts concerning the god Tir, reveal common ground between the recordings of the plot sequence done during the last century and a half and those done within the last ten years, underlining the stable tradition of contemporary folktales.

The issues of contemporary literary tale, its genre and poetics are examined by Alvard Semirjyan-Bekmezian in the second chapter of the study. Discussing the works of contemporary post-independence Armenian writers Edvard Militonyan, Levon Khechoyan, Yerazik Grigoryan, Arpi Voskanyan, Armine Abrahamyan (Armine Anda), Eduard Avagyan, Vahangn Grigoryan, Tadevos Tonoyan, Anush Vardanyan, Ghukas Sirunyan, Yervand Petrosyan, Samson Stepanyan, she shows a number of modern peculiarities of literary author tales. In

particular the author tries to examine the genre nomenclature of fairy tale of which there are many in the case of contemporary literary fairy tale – fairy tale-novel, fairy tale-short story, fairy tale-poem, etc. – and to show the ways they touch upon the traditional plots of folktales and the main trends of interpretation, revaluation and deterioration of the traditional material by the authors.

As an example of edition of folktale A. Semirjyan-Bekmezyan singles out Levon Khechoyan's fairy tale collection "The Guardian Angel of the House", examining their esoteric genre name, specific only to Khechoyan, and reflecting upon the peculiarities of its poetics.

The author of the third chapter of the study Narine Vardanyan reveals noteworthy peculiarities of folk and contemporary literary fairy tales through examination of linguistic-stylistic features of the originals. Through a parallel examination of traditional formulas and fixed speech elements, vocabulary layers, author's and hero's speech, a series of grammatical manifestations specific to the type of fairy tale in folk and contemporary literary tales the researcher reveals essential peculiarities with respect to the expression methods of modern literary fairy tales. Thus if the authors interpretations or paraphrasing folktales try to preserve the folk character of the language, using dialectalisms and grammatical forms specific to the colloquial speech, in the case of author tale the language is mainly the standardized Armenian, where colloquialisms don't have wide use, folk patterns are scarcer. The examination reveals noteworthy features in the characterization of author

fairy tale, which contemporary authors execute through the name of the heroes, the coloured colloquial speech of the hero and the usage of rich layers of vocabulary.

The study is a collective monograph set forth harmonically and with possible comprehensiveness of questions in its integrity, which represents the present of the Armenian fairy tale with its pivotal issues. Each of the researchers of the monograph within the frame of her research documents that the fairy tale remains a viable species even today, and though its oral folk type is under the danger of disappearance, the literary type with its various manifestations continues developing, acquiring novel genre manifestations.

KHACHATUR VARDANYAN

CHAPTER I

ARMENIAN FOLKTALE TODAY

Storytelling in the modern world. Nowadays the world changes rapidly: technological innovations that day by day influence traditional social relationships, Internet that leads to cultural leveling, TRANSFER of everyday simple human communication to virtual sphere, mad dash for earning living and career growth. What role does the beautiful tradition that we call storytelling have in all of this? Do people continue to tell the ancient oral stories, inherited from their ancestors? Does folktale, as a beloved and till now an inalienable from humanity type of epic folklore, still sound from the lips of folk storytellers?

Field studies show that traditional storytelling gradually steps back in modern times. It's visible not only in Armenia, the research of folklorists from different countries confirms it. The decrease of the role of folklore in human life, that has become more evident in the 21st century, was significant still in the 20th century. Estonian folklorist Risto Järv, who recorded 15 traditional folktales in the Orava village of Estonia with folklorist expedition in 1998, mentions that for the end of the 20th century it's already a number great enough (Risto Järv 2000: 38). "We know the life of the fairy tale in contemporary European culture. Usually, people can reproduce orally some twenty stories by the Brothers Grimm or Perrault (and in case of small nations some by a couple of local popular authers may be added)," mentions the folklorist (Risto Järv 2000: 39).

